

ԳՈՅԱՐ ՄԵԽԱՎԱՐՅԱՆ

ԱՐԵՏԵԼՅԱՆ ԱՅԱՐԿՈՎԿԱՆԻ
ՎԱՐԴԱՐԱԴԱՐԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿՈՐՈՒՇՆԵՐԸ
ՃԸ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Նվիրվում է անվանի հայագետ, կովկասագետ
Պավել Չոբանցանի (1947-2017 թթ.) հիշատակին



NATIONAL ACADEMY OF SCIENCES REPUBLIC OF THE RA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

GOHAR MKHITARYAN

THE ADMINISTRATIVE-POLITICAL
FORMATIONS IN TRANSCAUCASIA IN THE
SECOND HALF OF THE 18TH CENTURY

YEREVAN
"GITUTYUN" PUBLISHING OF NAS RA
2018

1421696

93/94 ✓

ՀՀ ԳԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻ
ԱՐԵԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՏՈՒՅՑ

ԳՈՀԱՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՐԵԱՆԱԳԻՏ ԱՅՄԿՈՎԿԱԱ
ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԺԸ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

ԵՐԵԲԱՆ
ՀՀ ԳԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՄԱՆԿՐՈՒԹՅՈՒՆ
2018



Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանառու խմբագիրներ՝ պատ. զիտ. դոկտորներ

Ա. Հակոբյան, Բ. Կոստիլյան

Գրախոսներ՝ պատմ. զիտ. դոկտոր, պրոֆ. Գ. Ստեփանյան,

պատմ. զիտ. թեկն. դոց. Է. Զոհրաբյան

Գոհար Ախիքարյան

Մ 793 Արևելյան Այսրկովիասի վարչապահարական կազմավորումները ԺԸ դարի երկրորդ կեսին – Եր.: «Գիտուրբուծ» հրատ., 2018, 150 էջ:

Մենացողության մեջ հանգանակութեան թվովում են ԺԸ դարի երկրորդ կեսի Արևելյան Այսրկովիասի խոնուրականների ձեռնորմն գործընթացը և Եղուցագանձեան պատմեցը: Տարբերակը առընորենքի հիման վրա բացահայտվում է, որովից են բառաշանություն խաների խոսանակվեալ բազարականությունը Իրավական տերություն, Ռուսական և Օսմանյան կազմությունների նկատմամբ Ազգանձիւ և Այսրկովիասամ Ռուսաստանին համապեկու խօսքությունը խանաքանների նկատմամբ և Օսմանյան տերությունների բազարականությունը խանաքանների նկատմամբ Նպասի և միջնաբանի Ռուսական կարստաբան կոլլեցիան բազարականությունը ռուս-իրավական և ռուս-բորբոքական տագավարագործություն, առևտու-տնտեսական շնորհի համանձուում: Աշխատությունները տեղ է հանկացնած ռուս-իրավական հակունակառյան խորության խորությանը բազարական պիրուզավճար:

ԵՐԿՐՈՒ ԽՈՍՔ

Գոհար Ժորայի Ախիբարյանի «Արեւյան Այսրկովկասի վարչադարձական կազմավորումները ԺԸ դարի երկրորդ կեսին» խորագիրը կրող աշխատությունը բալորովին քարմ և նոր խոսց է երկրամասի պատմության խորագիս հետազոտության տեսանկյունից Այն թեմատիկ առումով հայրենական պատմագիտության մեջ սպասված գործերից է, որի նշանակությունը դուրս է գալիս զուտ պատմաճանաչողական շրջանակներից, ընդզրկելով գործենական-քաղաքական խնդիրների մի շարք հրատապ, նորույի հարցադրումներ։ Վերջիններին կարևորությունը պայմանավորված է այն համեստանքով, որ Արեւյան Այսրկովկասում ուղիղ հարյուր տարի առաջ 1918 թ. գոյացավ արհետածին «Աղյորեցան» անունով մի պետություն, որն այսօր պատմության կեղծարարության ճանապարհով ճգնաւմ է «հիմնավորելու» և նախկինում, թէ այսօր հարնան երկրների տարածքների ու մշակույթների եկամտմամբ իր անքարառուց զավթողական գործուությունների արդարացնությունը և ազգեսիկ հակակեսությունների իրավագործությունը։ Սույն աշխատասիրությունն իրավամբ, ոչ միայն ծանրակշիք վերլուծական հետազոտություն է հայրենական պատմագիտության մեջ, այլև զիտականութեն հիմնավորված պատմահանական աղյորեցանական ստահող այն քարոզության, որ Արեւյան Այսրկովկասում, իբր թէ 1918 թ. Վերականգնվել են Աղյորեցանական պետականության պահեցույրները։

Աշխատության պատմագիտական արժեքն ամենից առաջ նրանում է, որ հեղինակը պատմական անհերքելի փաստերի հիման վրա, համազիշ կերպով ցույց է տալիս, թէ ինչպիս Ասիան Երրորդային կապող Այսրկովկասային պարանոցը քաղաքակրթական տարարենույթ արժեհամակարգերի բախման և տեսական փոխազդեցությունների պարմանեներում վերածվել է մի տարածագույն որուելու խայտաքննելու էթնիկ նկարագիրը, դավանամշակութային առանձնահատկությունները, քաղաքական անընդո-

մեջ վայրիվերաւմները իրենց խոր հետքի են բողել տեղական ժողովուրդների քաղաքական կողմնորշումների. Նրանց պատմական գարգացման գործընթացեների վրա:

Հեղինակը միաժամանակ կատարել է նույր դիտարկում, որ Այսրկովկասի պատմական թագավորն զարգացման ընթացքը խաչարվեց այսուեղ քայլոր անասնապահներին բռնըական ցեղերի ներքանիաներման և պատվարացման հետևանքով, ովքիր հետազգությամ. 18-րդ դարի վերջերին և ոյց 19-րդ դարում ապրում էին Երևակի խճանառների պարգեցման ժամանակաշրջան փափոխության ներարկելով երկրամասի ժողովրդազրական, դավանական, սոցիոմշակութային պատուերը:

Գ. Միիրարդանց հարուստ առյուրագիտական հենքի վրա, փաստարկված ցուց է տայիս Բրաևում, մասնավորապես. Նա-դիր շահից հետո ծավալված ներքաղաքական կյանքի փոքրորկա-հույզ խմբումներն ու գահի համար անօդչում պայքարը, որոնք նախատեսվոր եղան Արևելյան Այսրկովկասում, շահական Բրաևի ենթակայության ներքո մի քանի վարչադադարական կազմավորումների հանդես գալու համար: Երանին ներակա այս խաւու-րյունները, իյրի վարչապատրական նոր միավորներ, պատմա-կան քաղաքական պատեհության շերիկի ինքնուրույն գործելու որոշ հենարավորություններ առացան:

18-րդ դարի երկրորդ կեսին բուռն իրադարձություններով, մրցակից տերությունների⁶ նույսական կայսրության. Օսմանյան Թուրքիայի. Ծահական Երանի և տեղական տիրակալների ան-ընդմեջ ռազմական բախումներով, երկրամասի ժողովրդների հակասական, իրարամերժ կողմնորոշումներով ու գործողու-թյուններով հազեցած այս պատմաֆուլը շրջադարձային եղավ Արևելյան Այսրկովկասում իրանական ազդեցության թուլացման և բուրքական ազդեցության ուժեղացման ճանապարհին, որում էական դերակառաւարում ունեցավ ցարական նույսառանք:

Հեղինակը հիմնախնդիրը մասուցի է համապարփիակ, ամ-բողջուրյան, լայն ընդգրկման մեջ ներառելով թեմային առնչվող հարցերի լայն շրջանակ, որոնց վերաբերյալ կատարել է ինք-նաստիկ դասություններ: Նմանօրինակ մոտեցումը հեղինա-կին պարտադրել է կատարել, որվաստանքի արժանի, մեծ ծավալի

հետազոտական աշխատանք, որն ակնհայտորեն նկատելի է թե աշխատանքի շարպյանքի բովանդակությունից, թե օգտագործված աղբյուրների ու գրականության ընդարձակ ծավալու ցանկից, որի մեջ զգալի տեղ է գրադեցում օտարալեզու գրականությունը:

Մենագորությունը գերազանցապես շարադրված է վավերագրական նյութերի հետազոտության ու վերլուծության հիման վրա:

Հեղինակին հաջողվել է վեր հանել թեման և ներկայացնել պահանջվող գիտական մակարդակի շափանիշներով: Աշխատանքի կառուցվածքը կարելի է համարել հղիված:

Աշխատանքի կարևոր արժանիքներից մեկն էլ այն է, որ առենախոսը փորձել է նորովի ներկայացնել պատմագիտական և բաղարական նշանակություն ունեցող խնդրա առարկան:

Պատմ. գիտ. թեկ. դոցենտ

*Էդուարդ
Զոհրաբյան*

Արեւելյան Այսրկովիկասի¹ վարչաքաղաքական միավորների՝ խանությունների ԾԸ դ. երկրորդ կեսի պատմության ուսումնաժողությունը կարեւոր զինուական և շահակության ռանդի տարածաշրջանում պատմական, ուգմաքաղաքական, առջիական և առաջի սկավառական պատկերն առավել խոր եւ համակողմանի ընկարքան ու ժամանակակից խեղաքյուրումների բացահայտման տեսանկյունուից:

Մենագրության մեջ արինիվային խանությունը եւ ԾԸ դարի սկզբնադրյուրքների քենության միջոցով նորովի են մեկնաբանվել Արեւելյան Այսրկովիկասի խանությունների ձեւավորման գործընթացը: Թեմայի ուսումնաժողությունը փաստում է, որ ազրբյանական պատմագիտության հայեցակարգը, հոնաձայն որի ԾԸ դ. երկրորդ կեսին այդ խանությունների միջեւ ավատատիրական պայքարը դիտարկվում էր որպես «Հյուսիս-արեւելյան Ազրբյան» հոգերի իրեւ թե քաղաքական մեջ կենտրոնի շուրջ միավորման գործընթաց², իսկ «Նորբայի խանություն» եղբայրքը փոխարինելում էր «Հյուսիս-արեւելյան Ազրբյանի պետությունն»³, ամենեան չի համապատասխանում պատմական իրականությանը: Միևնույն ԾԸ դ. երկրորդ կեսին ուսուական կառավարության պաշտոնական գրագրության մեջ Արեւելյան Այսրկովիկասը «Ազրբյան» եղբայրքով, իսկ նրա կառավարիչներին «ազրի-

¹ Արեւելյան Այսրկովիկաս եղբայրը ԾԸ դ. երկրորդ կեսին ներառում էր Բռա Ազգակի (Կուրից հյուսիս) տարածքների՝ Դերբենի, Նուբայի, Շաքի, Շամախի, Բարիլի խանությունների պատմա-աշխարհագրական առնեանենքը: «Այսրկովիկաս», «Ալյովկովիկաս», «Հարավայիկան» գույքների մասին ու N. Gvozdev, Imperial policies and perspectives towards Georgia, 1760–1819, New York, 2000, p. XI.

² Տե՛ս օր. Г. Абдуллаев, Азербайджан в XVIII веке и взаимоотношения его с Россией, Баку, 1965, с. 4.

³ Նորի տեղում, թ 5:

շահական խաներ»⁴ կոչելը «զուտ տուրք էր պարսից հիշողությանը»⁵: Խոսքը Սեֆյան պիտուբյան չօրս (Երազ, Զարս, Ազարքայքան և Խորասան) վարչական ու Ֆինանսական միավորներց մեջի՝ Ազարքայքանի (կենտրոնը՝ Թավրիզ) մասին է, որի իր մեջ էր միավորում Շուխուր-Մասդի, Դարաբատի և Շիրվանի բնիւարբեկությունները⁶: Ասվածի համառերատում է նաև ԾԸ դ. երկրորդ կեսի վագիրագրերում խանությունները և երանց քաղաքները «պարսկական» կոչելը⁷: Օսմանյան Արշակ Համբի Ա սուլթան (1774-1789 թթ.) նույնական Արքավկասը շարունակում էր կոչել «Ալլորեզան, իսկ նրա խաներին» «ալլորեզանական խաներ» եղբայրով⁸: Ամենին, 1796 թ. կոմի Վ. Զուքովի զիսավերած Կասպիական արշավանքի մասնակից ուստական քարձրաստիճան զիսավարականները եախկին Շիրվանի բնիւարբեկության տարածքը կոչում էին «Ճարավային Շահստակ» (Շուքայի և Ներքնադի եերատմամբ)⁹ կամ «Շահստակյան Պարսկատակ Հյուսիսային և Ճարավային մասեր» (Ներքենի, Դուրայի,

⁴ С. Бурназян, Описание областей Адребиженских в Персии и их политического состояния, Курск, 1793, с. 4-5.

⁵ Համ. Պ. Զորակին. Հայ-ուսու-վրացական հարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006, էջ 34:

⁶ Tadikarat al-muluk: A Manual of Safavid Administration-պահակոն. (circa 1137/1725). Persian text in facsimile (B. M. Or. 9496). Translated and explained by V. Minorsky, London, 1943, p. 162.

⁷ Լոյն տեղում, էջ 164-168:

⁸ ՐԳԲԱ Փ. 52, ոռ 1/194, ձ. 270, լ. 41 սբ.

⁹ Պոլքական աղբյուրները Ճարատակի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովությունների մասին (Օսմանյան կայսրության նվաճուրական քաղաքականությունը Կովկասում և մասնավերապես պատմական Ճարատակում XVI դ. երկրորդ կեսից), բուրքարան պատմագիտությունը ակօրից մինչև XVIII դարի վերջերը, Խո. Ա. Կազմեց, Ա. Խ. Սաֆրատյան, Եր., 1961, էջ 229:

¹⁰ Ф. Симонович. Описание Южного Дагестана. 1796 г. – История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы. Под ред. М. О. Косынки и Х. М. Ханпаева, Москва, 1958 (հետաքրքին ԱԳՀԴ), с. 138.

Շաքիի, Շամախիի, Բարձի և Սալխանի ներառմամբ)¹¹ եղութը-ներուն:

Մեր աշխատության շրջանակներում բազմաքնույթ աղյուսների համադրությամբ վեր է հանկիլ եւ ամբողջացվել տարածաշրջանի երև-քաղաքական պատկերը: ԾԸ դարի ընթացքում Արեւելյան Այսրկովկասի խանությունների թիվկ ժողովուրդները հայերը, իրեները, պարսիկները (հետազգայում կոչված բարեր) եւ Բուն Աղուանը - Այրակիա տարածքի ժողովուրդներից լիօգիններն ու լեզգիախոս փոքր ազգությունները շարունակում են այստեղ դերակատարում ունենալ:

ԾԸ դարի երկրորդ կեսին տպագիր սկզբնադրյուրներում և պաշտօնական գրագրություններում հանդիպող «քաքարենք» և «պարսիկներ» երեխեական անվանումների նույնացումն այսօրվա ընկալմամբ «աղրբեցանցիների» են: Հի համապատասխանում պատմական իրականությանը: Դիտարկվող ժամանակահատվածում աղրբեցանական ժողովրդի երեւհամայնքումը (երեսկընտիդացիան) դեռ չեր սկսվել եւ գունվում էր իր սուրառատային ձեւավորումների փուլում: Հետեւաքար ԾԸ դարի երկրորդ կեսին Արեւելյան Այսրկովկասի տարածքում «աղրբեցանական» եքուն Ի դարի քաղաքական ընկալմամբ գոյություն ունենալ չեր կարող:

Մեր ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնամ, որ թե՛ւ Անդրբան շահերի վարած վերաբերեցման քաղաքանության հետեւակրով Այսրկովկասի երև-քափանական պատուիերը փոփոխվում էր հօգուստ մահմեդականների, այդուհանդերձ Արեւելյան Արկանվասի խանությունների պատմա-մշակութային անցյալը հնուց ի վեր թիվկ բրիտանյա տարրի գերակայության մասին էր վկայում: Ուստի, այս դրույթը, թե ԾԸ դարի երկրորդ կեսին «Հուսիս-արեւելյան Աղրբեցանի միավորումը» տեղի էր ունենում երնիկապիս միատարր բնակչության վիճակ «աղրբեցանցիներ» ներսում, որի ունեն միասնական տարածք, լեզու և մշակույթ, իսկ «աղրբեցանական հաղերի» միավորումը՝ Դուրայի

¹¹ А. Серебров. Историко-этнографическое описание Дагестана. 1796 г., – ИГЭД, с. 173.

խանության շուրջ նպաստելու էր «ազգային պետության» առներծմանը, չի համապատասխանում տարածաշրջականի պատմական և էթնո-քաղաքական իրական պատկերին:

Սնևազրությունում տարատեսակ աղբյուրների օգտագործմամբ հանգստանորեն ներկայացվում է Իրանական պետության, Շուտական և Օսմանյան կայսրությունների միջևն ընթացող ռազմաքաղաքական մրցակցությունը Արևելյան Այրիկովկասի խանություններում տիրապեսուող դիրք ձեռք բերելու համար: Այդ մրցապայքարում առանձնահատուկ տեղ ուներ Շուտական պետությունը, որի կառավարող շրջանակները շրջադարձ էին կատարել դեպի Պյատր Ա-ի արեւելյան քաղաքականությունը: ԺՇ դարի երկրորդ կեսը մի ժամանակաշրջան էր, երբ Շուտականանց հետեւողականորեն իրականացելու էր Խավաճաղական քաղաքականություն դեպի Կովկասյան լեռնապարը: Շուտական իշխող շրջանակների մշակած ռազմավարության համաձայն այդ եփածողական շարժման վերջնանպատակները լինելու ուղ Հարավային Կովկասի և Վանական պահմանի հաստատումը Կոր-Արար-Ախուրյան ջրաժան գծի վրա:

Աշխատանքում լուսաբանվել է Արեւելյան Այրիկովկասում Շուտականին հակագրելու խնդյուն Իրանի տերության և Օսմանյան կայսրության քաղաքականությունը խանությունների եկատմամբ:

Սնևազրության շրջանակներում բազմաթերթ աղբյուրների եւ գրականության օգուագործմամբ ցեղության է Ենքարկվել խանությունների քաղաքական ռազմավարությունը Իրանի տերության, Օսմանյան և Շուտական կայսրությունների նկատմամբ: Օգուգելով Իրանում ծայր առած միջանվառական երկառություններից բախումներից, այրկովկասյան խանությունները ձեռուում էին ինքնազմանության և կարողացել էին ձեռք բերել գրեթե կիսանկախ կարգավիճակ: Քաղաքական այդ վիճակի պահպանումը եւ անվտանգության ապահովումը ասիստում էր խանություններին դիմել Իրանի տերության, Օսմանյան և Շուտական կայսրությունների միջն խոսանշավելու քաղաքականությանը: Ավելին, Արեւելյան Այրիկովկասի խանություններում խանական պրատականության քաղաքականությանը հետևելը

դիվանագիտական քայլ էր տարածաշրջանում ուսումնարարաբարական ներառություններ ունեցած Օսմանյան և Ռուսական կայությունների նկատմամբ:

Խորհրդային տարիներին Արևելյան Այսրկովկասի և Ռուսականի հարաբերությունների պատմությունը, քննիչներ կողմնական գետականությունը, հիմնականում գրադիվի և ռուս և աղոթքածեցի պատմաքանները: Արևելյան Այսրկովկասի խանությունների և Ռուսականի հարաբերությունների ԺԸ դարի պատմության առանձին հարցերի լուսաբանման անդադարձել են խորհրդային պատմաքաններ Վ. Լեյնառովը¹², Օ. Մարկովյանը¹³, Գ. Արդուլյանը¹⁴, Զ. Մուսալաֆյանը¹⁵: Արևելյան Այսրկովկասի ԺԸ դարի երկրորդ կեսի քաղաքական պատմությունը որոշ կողմնակալ մնակեաբանություններով է ներկայացված «Աղոթքանի միացուած Ռուսաստանին» ծովագուն աշխատության մեջ: Ըստ նրա Արևելյան Այսրկովկասի համար օրինառական 1790-ական թվականներին խանությունների միակ եղբ «փրկությունը», Ռուսաստանին միացումն էր¹⁶:

Արևելյան Այսրկովկասի խանությունների ԺԸ դարի 80-ական թթ. քաղաքական իրադարձություններին է անդրադառնում նաև Արգար Հռվիսանիխայանը: «Ռուսաստանը և նայ ազատազրական շարժումը ԺԸ դարի 80-ական թվականներին» աշխատության մեջ: Հռվիսանիխայանը արխիվային է անձինչ այլ սկզբնացրությունների հիմքն վրա բանարանել է Ռուսաստանի և Այսրկովկասի պատմության մի

¹² В. Левинцов. Очерки из истории Азербайджана в XVIII веке. Баку, 1948.

¹³ О. Маркова. Россия, Закавказье и международные отношения в XVIII веке. Москва, 1966.

¹⁴ Г. Абдуллаев. Из истории Северо-Восточного Азербайджана в 60-80-х гг. XVIII в., Баку, 1958; Խոյի Աзербайджан в XVIII веке и взаимоотношения его с Россией. Баку, 1965.

¹⁵ Ջ. Մустафаев. Северные ханства Азербайджана и Россия (конец XVIII – начало XIX в.). Баку, 1989.

¹⁶ Присоединение Азербайджана к России и его прогрессивные последствия в области экономики и культуры (XIX – начало XX вв.), Под ред. А. Гулмезя, В. Мочалова, Баку, 1955, с. 19.

շարք հիմնահարցեր՝ շեշտու դեկտով հայ ազգաւագրական շարժման դրվագների վրա¹⁷:

Մենագրություններ իր բռվանդակությամբ, հարցադրումներով եւ վերլուծություններով հայրենական պատմագիտության մեջ առաջին հետազոտությունն է, որում փորձ է արվում արևիստային եղութերի, սկզբնադրյուրերի եւ տարավեզու զիտական գրականության օգտագործմամբ համային և անկողմնակալ հետազոտել նաև Արեւելյան Այսրկովկասի վարչարադրական միավորների ԾՀ դարի երկրորդ կեսի պատմությունը: Հետազոտության սկզբնադրյուրներ են ծառայել արխիվային եղութերը անտիպ վաստարձեր, վալերագրեր եւ ձեռագրեր, ինչպես նաև տպագիր սկզբնադրյուրները: Արխիվային սկզբնադրյուրները վեր են հանվել Մաշտոցի անվան հիմ ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) ձեռագրական եւ արխիվային հավաքածուներից, Կառույկանական դիմանի հայերն եւ ուստերեն վավերագրերից: Օգտագործվել են Ռուսաստանի պետական տագմանաբուժական (РГВИА) եւ հիմ ձեռագրերի (РГАДА) արխիվներում պահվող վաստարձերը, որուց պարունակում են ուսւ բարձրաստիճան պաշտոնականին: զինվորականների գլուքությունները այսրկովկասյան խանելի և տիրակալների հետ, կուսանուսների գեկուցագուները խանուրյունների բաղարական վիճակի մասին:

Թեմայի ուսումնասիրության առումով ուշագրատ վավերագրեր են պարունակում նաև Ռուսական կայսրության արտարին բարձրականության արխիվի (АВПРИ) «Ռուսաստանի հարաբերությունները Պարսկաստանի հետ» եւ «Ռուսաստանի հարաբերությունները Վրաստանի հետ» հավաքածուների եղութերը և վիրաված Ռուսաստանան դիմանագիտական առաքելության եւ ուսանական արդարին գերատեսազության միջեւ նախակազմությանը, հաղորդագրությունների գեկուցագուներ:

¹⁷ А. Исаакянский, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Еր., 1947; Վերահրանուարակություն՝ «Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия», Еր., 1990. Տես նաև թմայի վերաբերա հեղինակի մյուս հիմնարար մեսպարությունը՝ Խօսիֆ Էմին, Еր., 1989.

Արխիվային նպատակի շարքում առանձնակի ուշադրության է արժանի Ռուսականի Գիլուրյումների ակադեմիայի Սահելու Պետերբուրգի մասնաճյուղի արխիվի (СПФ АРАН) Դ. Բուռելյովի ամանուածական անուածական աշխատանքների ֆունդում պահպանը Ալ. Սուվորովի ձեռագիրը (№ 99), որը հարգրանալ է խանուրյումների բազարական պատմության կարեւոր մասնաւուներ, ինչպես նաև նկարագրություններ և տեքնիկուրյուններ¹⁸.

«Վակերագրերի տպագիր ժարդանակից օգլագործել են Ռուսական կայսրության օրենսդերի լիակատար ժադանն»¹⁹. Հաւաքրական հանձնաւուղովի կողմից 12 հասորով վավերացների հրատարակությունը (Ա. Բերժի խմբագրությունը)²⁰. «Եւսական խորերի արխիվի Ա և Բ հասորները»²¹ և Ա. Զազարիիի ջանքերով հրատարակված «Հրովարտակեներ»-ի ժողովածուներ²², Ռուսական կայսերական պատմական ընկերության ժողովածուինը²³ և «Դիման Հայոց պատմութեան» շարքի որոշ հասորներ²⁴.

¹⁸ «Бумаги героя Суворова 1780 и 1783 года, в бытность его в Астрахани и на Кубани, а Персии и Кавказе», – СПФ АРАН, ф. 99, сп. 2, № 13.

¹⁹ Полное Собрание Законов Российской Империи (ինչպայուն՝ ПСЗРИ). Собрание I, 1649-1825 гг., Под ред. М. М. Сперанского, СПб., 1830, т. VII, XXI, XXIII, XXIV, XXV, т. XVI, т. XXXII.

²⁰ Акты, собранные Кавказскою археографическою комиссией, Под ред. Ад. Берже, Тифлис, 1866-1904 (ինչպայուն՝ АКАК).

²¹ Акты Государственного совета, Под ред. Н. В. Калачонка, П. М. фон Кауфмана, И. А. Чистовича, Г. Ф. Штейндмана и др., в 5-и тт., 12-и чч., СПб., 1869-1904 (ինչպայուն՝ АГС), т. I, Совет в царствование императрицы Екатерины II, 1768-1896 гг., СПб., 1869; т. II, Совет в царствование императора Павла I, 1796-1801 гг., СПб., 1888.

²² Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии, Под ред. А. А. Цагарели, т. I, СПб., 1891; т. II, СПб., 1902.

²³ Сборник Императорского русского исторического общества (ինչպայուն՝ СИРИО), т. 27, СПб., 1880; т. 42, СПб., 1885; т. 47, СПб., 1885; т. 135, СПб., 1911.

²⁴ Դիման Հայոց պատմութեան, Հրատարակեց՝ Գյուլ բան. Ազանեանց, Գյուլ Ա-Բ (1780-1834), Թիֆլիս, 1893; Գյուլ Գ. մասն Բ. Մինեն կարո-

Թեևայի ուսումնասիրության ընթացքում փաստաթթվային հարուստ նյութեր են օգնագործվել Մ. Ներսիսյանի, Վ. Գամբիկելու, Վ. Հաջիելի, Վ. Մաճայաձեի խմբագրություններում²⁵, 1950-1990-ական թթ. երաժշտական տպագիր սկզբանդրյուրների ժողովածուներից:

Արեւելյան Այսրկովկասի ԺԸ դարի 50-70-ական թթ. բազարական պատմության եւ էրնո-դափանական պատկերի մի շարք հիմնարցների լուսարաննամբ աշբ են ըեկեռում Գիտությունների կայսերական ակադեմիայի (Սանկտ Պետերբուրգ) գիտական արշավախմբերի դեկանավարներ Ս. Գևորգինի եւ Յ. Գյուլդենշտենի աշխատությունները²⁶:

ԺԸ դարի 80-ական թվականներին Այսրկովկասի եւ երան հարակից իրանական տարածքների խանությունների բաղարական պատմության առումով առանձնակի արժեք են ներկայացնում

Դիկոսի յիշատակարանը (1763-1767), Թիֆլիս, 1894; Գիրը Դ. Ղուկաս Կաթողիկոս (1780-1800), Թիֆլիս, 1899; Գիրը Շ. Մինեն կաթողիկոսի լիշատակարանը, մասն Բ (1767-1776), Թիֆլիս, 1908; Գիրը Բ. Ճավակի կաթողիկոսի Արդութեան (1778-1800), Թիֆլիս, 1911; Գիրը Ժ. Մանր մատենագիրը (ԺԵ-ԺԹ դդ.), Թիֆլիս, 1912; Դիկոս Հայոց պատմության, Նոր շարք. Գիրը Ա. Ղուկաս Կարսեցի, Խո. Ա (1780-1785), Աշխատափրությանը Վ. Գրիգորյանի, Եր., 1984:

²⁵ Аргентино-русские отношения в XVIII веке. 1760-1800 гг. Сб. документов. Под ред. М. Нерсисяна, Ер., 1990, т. IV: Межказако-русские политические и торговые связи Восточной Грузии (конец 60-х – начало 90-х годов XVIII в.). Документы и материалы. Вып. I. Материал подобрал и подготовил к печати В. Гамрекели. Тбилиси, 1980; Русско-дагестанские отношения в XVIII – начале XIX в. Сб. документов. Отв. ред. В. Гаджоев, Москва, 1988 (ենթայում՝ РДО); Материалы по истории русско-грузинских отношений второй пол. XVIII века, Подг. В. Мачарладзе, ч. III, вып. II, Тбилиси, 1997.

²⁶ С. Гмелин. Путешествие по России для исследования трех царств естества, ч. III, I половина, СПб., 1785; И. Гюльденштедт, Географическое и статистическое описание Грузии и Кавказа. СПб., 1809; Иоганн Антон Гильденштедт. Путешествие по Кавказу в 1770-1773 гг. СПб., 2004.

Արևելյան Կրատուանում 1783-1787 թթ. հաստատված ուսանեան լիազոր-ներկայացուցիչ գնդապետ Առ. Բուժնաշխալի երկերը²⁷:

Մեր աշխատության մեջ ըլոյցը լիված ժամանակաշրջանի Կովկասի պատմության համակողմանի լուսաբանման համար մեծ նշանակություն ունեն Վ. Զորենի Կասախական արշավանքի մասնակից սպասելի կառարած ուստամասփրությունները²⁸, ինչպես նաև U. Բրունեսկու արխիվային կուրքերի և անձնական դիւնարկումների հետին վրա գրված երկնաւոր աշխատությունները²⁹: Կովկասի ԺՀ դարի բարձրագույն պրումերյան լրասրբանակ է նիշրված ակադեմիկոս Պ. Բուտկովի Եռահաւառ աշխատությունը³⁰, որի հիմքում դրված են արխիվային մեծաբիլ փաստաթղթեր, վաներազներ, դիվանագիտական գրագրություններ և արժեքավոր այլ սկզբանդրություններ, որոնց մի մասը մեզ չի հասեց: ԺՀ դարի 90-ական թվականների Այսրկովկասի ուսումնարարակալուս պատմությունը, Առա Սուհամանա խանի Այսրկովկաս կառարած արշավանքը իր արագագույնն է գույն Ն. Շնորհովինի³¹ և Վ. Պոլուպի հետազոտություններին:

²⁷ С. Буриашев, Описание областей Адребианских в Персии и их политического состояния, Курск, 1793; Խովի Կարтина Грузии или описание политического состояния царств Карталинского и Кахетинского, сделанное, пребывающим при его высочестве царе Карталинском и Кахетинском Ираклии Темуразовиче полковником и кавалером Буриашевым в Тифлисе, в 1786 г., Курск, 1793.

²⁸ Ф. Симоновевич, Описание Южного Дагестана. 1796 г.; Н. Дренякин, Описание Ширвана. 1796 г.; П. Бутков, Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде писем». 1796 г.; Խովի Сведения о кубинском и дербентском владениях. 1798 г.; А. Ахвердов, Описание Дагестана. 1804 г.; А. Серебров, Историко-этнографическое описание Дагестана. 1796 г., – ИГЭД.

²⁹ С. Броневский, Новейшие географические [статистические и этнографические] и исторические известия о Кавказе, собранные и тополизированные Семеном Броневским, ч. II, Москва, 1823.

³⁰ П. Бутков, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., ч. II, СПб., 1869.

³¹ Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, ч. III, СПб., 1886; Խովի Զակавказье от 1803 по 1806 гг., СПб., 1866; Խովի

ներում²²: Ազնաբամենայսիվ, ԺԵ դարի ռուսական կորսերական պատումացիստական միուրը հաճախ կորմանակալ մռուեցում է ցուցաբերել ռուս-իրան-օսմանյան բաշխարական համամարտուրքան մեջ այսրկովկասուր իսամերի և տիրակալերի որդեգրած դիմուրութամերի վերաբերք:

Ուշադրության արժանի է ետք 1990-ական թվականներին լույս տեսած Ռուսաստանի արտաքին բաշխարականության պատության բազմահատությանց²³: Այսրկովկասի պատության ԺԵ դարի պատության ուսումնասիրության իր մեջ ավանդի է ներդրել հայագետ-վրացացն Պ. Զորականը հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունների համակրթմանի բաշխարանամբ²⁴: Բարձի հայության սպառմանժողովրդական հիմնահարցերին են նվիրված Գ. Մատենականի արժեքավոր ուսումնասիրությունները²⁵:

Հնումագույնաց կառարման ընթացքում օգուածկար են եղել ետք արեւադայն գյուղականների ուսումնասիրությունները, որոնք

Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России. СПб., 1867; Խոյի Պոход графа Зубова в Персию в 1796 г., – «Военный сборник», 1874, № 2-6.

²² В. Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах и легендах, т. I, вып. I, СПб., 1887; Խոյի Իсторический очерк кавказских войн от их начала до присоединения Грузии. Под ред. В. Потто, Тифлис, 1899.

²³ История внешней политики России. XVIII век (от Северной войны до войны России против Наполеона). – История внешней политики России. Конец XV в. – 1917 г., Отв. ред. А. Н. Сахаров, Москва, 1998, с. 150-167; Անահայտ Ժ. Հայ-ռուսական հարաբերությունները. Խօխարքալերը. Փուլքը. Արորելելի եկամտամբ մռուեցումները. – ԼԳԿ, 1991, համ. 1, էջ 3-19:

²⁴ Պ. Զորական, Հայ-ռուս-վրացական կապերի պատությունից (XVIII դարի վերջը), – ՊՐՀ, 1991, համ. 2; Խոյի Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները XVIII դ. երկրորդ կեսին. Ս. Էջմիածին, 2006:

²⁵ Գ. Մատենական, Բարձի ետականի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (Խոտումանժողովրդական ուսումնասիրություն), Եր., 2010; Խոյի Բարձր բաշխարի ենոյության պատությունը (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Եր., 2011:

իմ եպատճել են Արևելյան Այսրկովկասի խանությունների բաղադրական, Երևանականական պատմության հետազոտության համար վաստագրական եւ վերլուծական հարաւառ հիմք տաեցնել²⁶:

* G. Hambly, Agha Muhammad khan and the establishment of the Qajar dynasty, – The Cambridge History of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, Vol. VII, Cambridge, 1991, p. 104-143; J. Perry, Karim Khan Zand (1747-1779), London, 2006; Խոյլի: The Zand Dynasty, – The Cambridge History of Iran, Vol. VII, p. 63-103; F. Kazemzadeh, Iranian relations with Russia and the Soviet Union to 1921, – The Cambridge History of Iran, Vol. VII, p. 314-349; S. Shaw, Iranian relations with the Ottoman Empire in the eighteenth and nineteenth centuries, – The Cambridge History of Iran, Vol. VII, p. 297-313; The Cambridge History of Turkey, Vol. III, The Later Ottoman Empire (1603-1839), Edited by Suraiya N. Faroqhi, Cambridge, 2006; R. Tapper, Shâhsevan in Safavid Persia, – BSOAS, Vol. 37, 1974, № 2, p. 321-354; Խոյլի: Frontier Nomads of Iran: A Political and Social History of the Shâhsevan (Cambridge Middle East Studies), Cambridge, 1997; M. Atkin, Russia and Iran 1780-1828, Minneapolis, 1980.

ԳԼՈՒԽ

ԱՐԵՒՆԵԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՎԱՐՉԱԹԱՂԱՔԱԿԱՌ ԿԱԶՄԱԿՈՐՈՒՄՆԵՐԸ ԺԸ ՀԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Նաղիր շահի (1736-1747 թթ.) մահվանից հետո Իրանական հզոր պետության մեջ առեղծված քաղաքական անկայուն իրավիճակը վրաց իշխան Օքար Թումանովը Ռուսաստանի Արտարքին գործերի կողեզգուային ուղղված զեկուցագրերում իրավում «խոսքաբարձրություն» էր անվանում²⁷: Իրանի պետությունը տրոհիլ էր անընդմեջ միմյանց դեմ պայքարող ինքնուրույն վարչաքաղաքական միավորների ²⁸: Սասեավորապես Շիրվանի թէկլարքեկության տարածքում ձեռավորվում են Շարիֆ, Ներքենդի, Շումալիի և Բարձի ինքնիշխան կամ ինչպես իրենք՝ խաների էին կոչում «ազատ» խանությունները. իսկ շահական խախիկին կառավարիչներին փոխարիժելու են գալիս ինքնակոչ խաները:

Մարդիշխանության ուղին առաջին Շարիֆ խանությունն էր բայել դեռևս Նաղիր շահի օրոք. 1743-1744 թթ. Տաջի Շելերի զիյասփորությամբ սպասամբելով արրուսիրի դեմ ²⁹: Շարիֆ սպասամբած բնակիչները սպանում են Նաղիր շահի եշանական կառավարյան, վակկում թէրդում է համար դիմադրություն ցույց

²⁷ «Քրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Խ. Գ (ԺԸ-ԺԹ դդ.), Թարգմանեց Լ. Մելիքսեկ-Թեկ. Եր., 1955, էջ 107:

²⁸ Հիմն Հայոց պատմութեան, Գիրը Ժ. Մակու մատուեազիրը (ԺԵ-ԺԹ), Հրանտարակեց Գիրը քահ. Ազամանց. Թիֆլիս, 1912, էջ 157-158:

²⁹ Տե՛ս Կոլոնиալնայա политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., Կ. Ա. Լենինգրադ, 1937, с. 46.

³⁰ Ծառ Շարիֆի խանության տուրքիքի Նաջի Շելերին ծագումն ըրբուտունկան բահանա Դարա-թէշիշի տունից էր (Անդր-Լատիֆ Էֆենդի, История ашекинских ханов, Езку, 1926, с. 5). Այդ տունիը Շարիման իշխանն էր 1444-1551 թթ., որից հետո կատավարումն անցնում է Անդրին շահերի եշանական ամիրաներին (Ա. Պ. Պետրովսկий, Очерки по истории феодалских отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX вв., Ленинград, 1949, с. 138).

տալիս կառավարության գորքին⁴¹. Շարիի խանից կախվածություն էին ձեռք բերել Կուտակաշենի և Արեջի սուլթանությունները, Ճարի և Բեղունի ինքնավար համայնքները (ջամաարեները):

ԺԼ դարի երկրորդ կեսին ալյուրվեպայան խանություններում իշխանության փոխանօքությունը որոշ դեպքերում ժառանգական է դառնուել: Այդ ճանապարհով եր իշխանության եկել Նորայի Ֆարի Ալի խանը (1758-1789 թ.)՝ այն ստանուալով հորից Նորայի Հուսեյն Ալի խանից⁴². Խակ Բարիի Միրզա Սուլեյմանադ խանի մահմանից հետո (1768 թ.) իշխանությունը ժառանգաբար անցել էր որդուն Մելիք Սուլեյմանադ խանին⁴³:

Իշխանության փոխանօցման ժառանգական սկզբունքը խախտված էր Ներքենդի և Շամախիի խանություններում: Այսպէս, 1748 թ. Ներքենդի բնակիչներն իշխանություններ եկուացնում են Նադիր շահի օրոք և շահանդիման կառավարին և խան հոչակուու հարդուրապես Սուլեյմանադ Հուսեյնին⁴⁴: Ըստով բաղարի բնակիչները, դժոն լինելով խանի ծակը հարկային ցաղարականությունից, զարտուի բանակցելով Ֆարի Ալի խանի հետ, խոստանում են երան համաձեռ Ներքենդը⁴⁵: 1759 թ. Ներքենդը գրավելով՝ Ֆարի Ալին Մուսանմանադ Հուսեյնի խանին կուրացնում է, խակ երան հեզանյա Ալի բեկ որդուն սկզբում տալում է Նորա, ապա՝ Բարը: Ներքենդի խանը 1768 թ. վախճանուին է, խակ Ալի բեկը մեռում է Բարիի խանի մոտ⁴⁶:

⁴¹Մահրուք Մելինի. Հարավային Կովկասի տեղական իշխանությունների փոխարարերությունները Երանի կենտրոնական իշխանության հետ XVIII դարի վերջից մինչեւ 1828 թվականը. Թեկնածուական առենայություն, Եր., 2014, էջ 20-21:

⁴² А. Бакиеванов, Газалистан-Ирам, Баку, 1926 («Труды» Общества обследования и изучения Азербайджана, том. 47), с. 130.

⁴³ И. Березин. Путешествие по Дагестану и Закавказью, Казань, 1849, с. 215.

⁴⁴ С. Гмелин. Путешествие по России для исследования трех царств востока, ч. III, 1-я половина, СПб, 1785, с. 22-23.

⁴⁵ Նորի տեղում, էջ 23:

⁴⁶ П. Бутков. Материалы для новой истории Кавказа..., ч. II, с. 250.

Եղրվանի բնկարքեկուրյան նախկին հարկահավաքը Հաջի Մոհամետաց Ալի Սուֆի Նադի Զարևալային 1748 թ. Նոր Շամախիի²⁷ խան է դառնում եւ կառավարում մինչեւ 1761 թ., երբ սպանվում է Խան Զօրանի ցեղի Սարքարենքի տոհմից Ալի Վերոնի բեկի որդիներ Մոհամետ Սալիդ եւ Աղասի խաների ձեռքով:

ԺԸ դրայ 60-80-ական թթ. Արեւելյան Այսրկովկասում առավել հզոր եւ ինքը իշխանական տիրակալ է դառնում Ֆարի Ալի խաներ, որը Դերբենդի նվաճումից հետո պաշտոնապես կրում էր Դուրայի եւ Դերբենդի խան տիտղոսը՝ Նոր գետես 1756 թ. գրավել եւ Դուրայի խանուրյանն էր միացրի Ապշերոնի թերակղզու մոտ գտնվող Սալիան քաղաքավայրը, որը նախկինում պատկանում էր Դուրայի խաներին²⁸: Նրա միացումը Դուրայի խանուրյան համար ուներ ռազմավարական մեծ նշանակություն: Սալիանի տարածքը Դուրայի խանը միարձնում էր Բարեի եւ Շամախիի խանությունների թիկունքը՝ իր կամքը թեղաբեկով երանց: Արայիսով, Բարձի եւ Շամախիի հաշվին իր տիրույթների ընդարձակումը Ֆարի Ալիի համար ժամանակի հարց էր դառնում մեծացնելով Դուրայի քաղաքական ազդեցությունն Արեւելյան Այսրկովկասում:

Որոշ դեպքերում հարիսն խաների իրենց էին փետրում իրենցից ուժեղի Դուրայի խանի քաղաքական եւ բարեկամական ազակցությունը: Արայիս Բարձի Միքայ Մոհամետաց խանը բարեկամանում է Ֆարի Ալիի հետ: «Որը միւսներից վատազաւոր կարող էր լինել նորա համար»²⁹, եւ իր որդուն՝ Ալիից Մոհամետաց խանին ամուսնացնում Դուրայի խանի բրոջ հետ: Ուժեղ կամքի տեր կին լինելով՝ Հայիցու-թիրի իշխանությունից գրեթե

²⁷ Նադի շահը 1734-1735 թթ. Հին Շամախից արևմուտք եխմուռ է Նոր Շամախի քաղաքը (Արքանուն կարողիկոս Կրնուացոյ Պատուացութիւնն անցեցին իրոց եւ Նասր-Շահին պարայից, «Կաղաքաւատ», 1870, էջ 65-66).

²⁸ Տ. Գուլեկո, սկզ. ոռչ., շ. 58.

²⁹ Ա. Միքայելյանց, Ակադամիի Սուրբ Ստեփանեսուի վանաց Սալիանի եւ միւս վահութից եւ ովհաւատելեաց են եւ քաղաքացն եւ գիւղօրէից որը ի Շամախաւու թեմի, Զինիս, 1896, էջ 378:

հեռացրեց Բարի բուզակամ խանին և միասնձևա կառավարելով կյանքի կոչեց Ֆարի Ալիի բաղարական ծրագիրը: Այսպէս Բարի խանությունը դարձավ Ռուբայի խանի ընդարձակ տիրութեանից մեջ:

Եթէ Ֆարի Ալի խանին հաջորդեր իրեն ենքարկել Խան Շամախիի խանությունը, ասպա Դարաբադի և Շարիի խանությունները Խվաճելու հետաևկարեւերն առավել իրատեսական էին դառնում ապահովելով Ռուբայի խանի միասնձևա գերիշխանությունը ողջ Արեւելյան Այսրկովկանում: Շամախիի խանությունն այդ երկրամասում կենտրոնական դիրք էր գրավում «քաց» և անպաշտաբան ասհմաններուն: Ժ՛Հ դարի երկրորդ կեսին այս կոփախինձոր էր դարձել հարեւան առավել հզոր խանությունների Շարիի, Դարաբադի, Ռուբայի ու Թարթիի և Կախինի միացալ բազավորության միջեւ: Շամախիի տիրակալը հետավորություն էր ստանալու վերահսկել Նվարից Բարու ընկած տարածքները՝ իր ձեռքում կենտրոնացնել երա ռազմաւիճական տևուեական և առեւտրային գործառույթների մենաշնորհը որպես լծակ հարեւանների վրա ճեղում գործադրելու համար:

Շամախիի Սուլհամմադ Սայիդ և Աղասի խաններն իրենց էին ենքարկել Շիրվանի բռչվոր ցեղերին և հաստատվել Ճին Շամախիում: Հաջի Սուլհամմադ Ալի խանի ծանր հարկացին բադարականությունից դժգոհ Նոր Շամախիի բնակիչները դիմում էին Սուլհամմադ Սայիդին: Վերջինս առանց վարանելու կատարում է շամախիեցիների խնդրանքը և, բաղաքը գրավելով, վերջ դեռև երկիշխանությանը: Շուտով Սուլհամմադ Սայիդի և Ֆարի Ալի խանի հարաբերությունները լարվում են: Փառափրությունն ու «արծարասիրությունը» Սուլհամմադ Սայիդին ստիպում են հրաժարվել Ռուբային նախօրոց պայմանավորված հարկը վճարելուց: Ֆարի Ալի խանը 1767 թ. շարժվում է Շամախի, սակայն Սուլհամմադ Սայիդ խանը հաշտություն է խնդրում խոստանալով վճարել անհրաժեշտ հարկը²⁰. Ռուբայի խանի՝ Շամախին գրավելու հետագա փորձերը պատկանում են անհաջողությամբ, բանի որ Սուլհամմադ Սայիդի օգուին էր գործում Շարիի Շուտին:

²⁰ РГАДА, Сношения России с Персией. 1767 г., л. 9, л. 27об.-28.

խանը: «Երջինս հասկանում էր, որ Շամախիի գրավումից հետո հզորացած Ֆարի Ալիի հացորդ հարվածը լինելու էր Շաքիի խանության ուղղությամբ: Կարճ ժամանակ աեց Շամախիի խանը կրկին իրաժարվում է հարկ վճարել Ղուրային: Այս աեզրու Ֆարի Ալի խանը ստանում է Շաքիի խանի աջակցությունը (մէծ ափառ տուանալու հեռանկարով⁵¹), դաշինք է կնքում Դաղստանի տիրակալների հետ և 1768 թ. շարժվում Շամախի ու գրավում այն: Շաքիի Հուսեյն խանը կուրացնում է Աղասի խանին, իսկ Մուհամետ Սայիդին համձևում Ֆարի Ալիին: Շամախիի գրավումից հետո սահմանակից երկու մահալեսեր բաժին են հասնում Շաքիի խանին⁵²: Սակայն Ֆարի Ալիի ծրագրերի մէջ չկը մտնում Շաքիի իշխանության հզորացումը, և նա շուտով վերադարձնում է այդ մահալները, իսկ Հուսեյն խանը ձեռնունայն հեռանում է: Այսպիսով, Շամախիի բոլոր կողմերից շրջապատված լինելով թշնամաբար տրամադրված հարեւաններով և պարբերաբար ենթարկվելով լեզզիների հարձակումներին ատիպված էր ճանաչել Ֆարի Ալի խանին որպես իր բաղարական ու ռազմական պաշտպանի: Շամախիի գրավումով Ֆարի Ալի խանի իշխանությունն Արեւելյան Այսրկոմիկասում անսամբլանափակ էր դարձել: Այդ տուրածքով անցնող վաճառականները Սերգա և Մեղինա ովհուագության համար պարտավոր էին Ֆարի Ալի խանին գումար վճարել: Ս. Գմելինի խորերով՝ Ժամանակին Շիրվանում հաջիների հեղինակությունն այնպիսի չափերի էր հասնում, որ առանց երաց համաձայնության ոչ մի կարեւոր բայլ չկը կառարվում: Սակայն Ղուրայի խանը Շամախիի հաջիներին «գրկում է բոլոր կոչումներից» ու գերի տառամ «երբեն և Ղուրա»⁵³: Այդ բայլը միտված էր ընդգծել Ֆարի Ալի խանի բացարձակ իշխանությունը:

⁵¹ J. Reinegg and M. Bieberstein, A General Historical and Topographical Description of the Mount Caucasus. Translated from the works of Dr. Reinegg and Marshal Bieberstein by Charles Wilkinson. Vol. I, London, 1807, p. 192-193.

⁵² А. Бакинсканов, укаz. соч., с. 132.

⁵³ С. Гмелин, укаz. соч., с. 96-97.

շամախեցիների վրա՝ իբրև օրինակ Շուբային ենթակա մյուս տիրությունների բնակչիչներին:

Ֆարի Ալի խանը կարող էր իր գերիշխանությունը ճանաչած բաղադրելում կառավարիչ նշանակել և միջամտել խանությունների ներքին կանքին: Այսպես, Շամախիի պարես էր նշանակել խանի ենթայի Աբդուլլա թէկը, սակայն կրկնակի հարկեր սահմանելու և անքար կանք վարելու համար նա պաշտոնից հեռացվել էր: Նոր պարես էր նշանակվել Բարիլի խանը, սակայն Շամախեցիների բողոքների հիման վրա նա նույնպես զրկվել էր պաշտոնից²⁴:

Վերը նշված փաստերը թեև նվաճված տարածքներում Ֆարի Ալի խանի բացարձակ իշխանության մասին նև վկայում, այդուհանդեք, նա որոշակի աւելանակություն էր տածում տեղի բնակչիցների նկատմամբ: Դա էր պատճառը, որ Ֆարի Ալի խանը որոշում է վերջ դնել երկու Շամախիների գոյությունը և շամախեցիներին ավելի վերահսկելի դարձնելը 1769 թ. ևս ավերում է Նոր Շամախին բաղադրի բոլոր դարպասները փակելով և զոր հեղեղիցվ դեպի ներս, իսկ բնակչիցներին տեղափոխում է Ճիկ Շամախի²⁵:

Ֆարի Ալի խանի աելքստահությունը շամախեցիների նկատմամբ արտահայտվում էր նաև երանով, որ իր հազվադեպ այցելությունների ժամանակ նա զիշերում էր Շամախիից թիշ հետավորության վրա գտնվող գյուղներ, որը բազեի որոտ էր գրադարձում: Այս ամենի ականատեսք լինելով՝ Ս. Գմելինը փաստում է, որ Ֆարի Ալին Շամախիի խանությունը որպես զենքով նվաճված նահանգ էր դիտում, որը նա կառավարում էր ոչ «ժողովրդի հոր», այլ նվաճողի իրավունքով²⁶: Սակայն 1776 թ. Ֆարի Ալի խանը Շամախիում նորից խան է վերանշանակում յոյ տարի Ներքեւում գերության մեջ գտնվող Մալհամմադ Սայիդին²⁷:

²⁴ Նոյն տեղում, էջ 97:

²⁵ АВИРИ, ф. Окружные Регистры с Пересчетом, 1767-1769 гг., д. 16, л. 297.

²⁶ С. Гмелин, указ. соч., с. 97.

²⁷ А. Серебров, указ. соч., с. 186.

Նուրայի խանի գերիշխանությունը ճանաչած Բարվի և Շամախիի տիրակալները պարտավոր էին նրան տարեկան հարեւ (դրամական), անհրաժեշտ պարես և գիւղորենք տրամադրել, բայս որ վերջինս այդ խանությունների անվտանգության երաշխավորք էր թէ կովկասյան լեռնականներից, թէ՝ պարսից մյուս խաներից՝ պաշտպանելու հարցում: Նուրայի խանը իրավասու էր անզամ զորք մտցնել Շամախի, երես վերջինսի խանը հրաժարվեր սահմանված հարկը վճարել: Ֆարի Ալիի այդ գործառություն մյուս խանությունների նկատմամբ Ս. Գևելինը կոչում էր «խնամակալություն» («Берегателъство»)⁵⁸: Բարվի խանը Ֆարի Ալի խանի փեսան, առժամանակ ազատված էր որոշակի հարկերից (բացի զորք ու պարեն տրամադրելուց) և նրա բոլոր վուրբանամբ իրեն էր պահում աղից ու եավից ստացվող 35000-40000 ռուբլի նկատուաք, սակայն նա «Նուրայի խանի պաշտպանության ներք գտնվող իշխանիկ էր»⁵⁹; Ավելին, Ս. Գևելինը նկատում է, որ այս հանգամանքը չէր կարող խանգարել, որ Ֆարի Ալի խանը ցանկացած պահի Բարվի խանին քաղաքապես դարձներ⁶⁰:

Այս սանեից երեսում է նաեւ, որ 1760-1780-ական թթ. Կասպից ծովի արևմտյան տիֆին՝ Դերբենդի, Նուրայի, Շամախիի և Բարվի խանություններում Նուրայի Ֆարի Ալի խանի քաղաքական գերիշխանությունը երիկական ընդհանրությամբ պայմանավորված չէր:

Արեւելյան Արքերվեստում խանությունների ներքաղաքական իրավիճակի վերլուծությունը ԺԸ դարի երկրորդ կեսին հաստատված քաղաքական իրողությունների համաստերատում հարց է առաջացնում, թէ կար ո՞ւ էին արոյոր Դերբենդի, Բարվի և Շամախիի խանությունները պահպանել իրենց խանություն կարգավիճակը: Պատմական Շիրվանի տարածքն անընդհատ կովկասյան լեռնականների և իրանական խաների հարձակումների թիրախ էր: Շիրվանը ԺԶ-ԺԸ դարերում Մեծյան, ապա Նա-

⁵⁸ Հ. Գուլնար, սկզ. սու., շ. 83.

⁵⁹ Նոյն տեղում, եղ 83:

⁶⁰ Նոյն տեղում, եղ 83-84:

դիր շահի պետության և իրանական պետական համակարգի բաղկացուցիչ մասն է՝ «քրիված» իրեն հուզող խնդիրների ինքնուրույն կարգավորումից: Խոյր առարկա ժամանակաշրջանում ինքնիշխան քաղաքական միավորները խանությունները, ասիստված էին ինքնուրույն կազմակերպել իրենց անվտանգությունը կամ է առավել կայսեր ուժի շուրջ միավորվել: Այսրեսովկատամ ձեռավորված աշխարհաքաղաքական փոփոխությունների հետևանքով խանները պարտավոր էին առաջնորդվել «քածանի ը, որ տիրես» սկզբունքով: Առաջին տեղ էր մովել խանությունների գոյության, նրանց անվտանգության ապահովման հարցը: Այդ իրադրության մեջ չկային մշտական դաշնակիցներ, կային մշտական շահեր, անվտանգության և ինքնիշխանության պահպանամաս հիմնախնդիրներ: Թնջպես, օրինակ «Մելիք Սահմետ խանը կառավարում էր Բագուայ խանութիւնը 21 տարի խաղաղութեամբ, առանց արտաքին յարձակումների ներարկուելու, որովհետեւ նա ապահովել էր իր աներրջու հօգորութեանը. Նուրայի Ֆեադայի խանին միևն խանները նպատակում էին եւ իրեն աւատապետ բոլոր էլ հարկ էին վճարում: Ով չեր հնազանդում ենքարկում էր մահուակ պատմի»⁶⁰: Ուստի, տարածաշրջանի քաղաքական գորգացումները խաներին այլրետքանը չեն բողել, քան ճաւացնել իրենցից առավել ուժեղի՝ Նուրայի խանի գերիշխանությունը եւ պարտավորվել տարեկան որոշակի հարկ վճարել: Նրա հետ հաշվի էին նստում նաև Շաղատակի տիրակալները, ինչպես, օրինակ Թարթիի շամիսալը (կառավարիչը): Դեռևս Մելիքան շահերի օրոր շամիսալը Բարիի խանությունում սկզբանականության իրավունքով մեծ քանակությամբ գյուղեր ուներ, որոնք Նախիր շահի մահվանը հաջորդած խանուակ իրավիճակում դուրս էին մնացել նրա իշխանությունից եթե Բարիի նոր խան է դաւում ակնափական Միրզա Մելիք Սուհամմադը.

⁶⁰ Ա. Մերատեանց, Աշվ. աշխ., էջ 378:

Թարթի տիրակալը փորձում է վերադարձնել այդ գրողիրը, բայց հասդիպում է Ֆարհ Ալի խանի հակագդեցությանը⁶²:

Սակայն դա չեր նշանակում, թե խաները հաշվի չեին ետում Այսրկովիկառում գերիշխանության ձգուող Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների հետ: Այսպիսս, եթե Ֆարհ Ալի խանը գրավում է Դերբենդը, շտապում է հայութել իրանական, օսմանյան և ռուսական իշխանություններին, որպեսզի ստանար երակ բաղարական համաձայնությունը: Թերիմ խանը Իրանում ծավալվող բաղարական գործընթացներով գրադաւած լինելով ընդունում է Դերբենդի գրավման փաստը, պայմանով, որ Ֆարհ Ալի խանն իրեն պարսից պետքարտական տիրակալ ճանաչյ: Դերբենդի նվաճման մասին լուրը Դուրայի խանը հայունում է նաև օսմանյան սուլթանին: Վերջինս նվերենք և բարեմադրանքներ է ուղարկում հոյս ուսեւալով ստանազ խանի բաղարական աջակցությունը⁶³: Դուրայի խանը 1760 թ. Շունվարին կատարվածի մասին տեղեկացնում է Խան Աստրախանի նահանգապետին հոյս հայունելով, որ ռուսական առևտյալանները կայցելին բաղար⁶⁴: Խաները նպատակ չունեին Իրանի տերությունից, Ռուսական և Օսմանյան կայություններից որևէ մեկից բաղարականապես կախվածություն ունեալ եւ դիմում էին խուսափակելու բաղարականությանը:

Մեկ այլ դեպքում Շամախիի Մուհամմադ Սայիդը Հին Շամախիի խան է ճանաչվում Քերիմ խան Շենդի ֆերմանի համաձայն⁶⁵: Այդ բայլով Իրանի տերության տիրակալը փորձում էր Արևելյան Այսրկովկառում ի դեմս Հին Շամախիի խաների իրեն ենթակա կատավարիչներ ուսեւալ եւ ամրապնդել Իրանի ազդե-

⁶² Г. Цинцадзе, Материалы к истории русско-грузинских отношений (1782-1791). – «Исторический вестник», № 23-24, Тбилиси, 1970, с. 28-29.

⁶³ J. Reinegg and M. Bleibergstein, op. cit., p. 151-152.

⁶⁴ Русско-дагестанские отношения в XVIII – начале XIX в. Сб. документов, Отв. ред. В. Гаджиев, Москва, 1988 (История ДО, РДО), с. 91-92.

⁶⁵ РДО, с. 90-91. Շամախիի խանին մասին տե՛ս Պատմական տեսական շամախинских ханов, – АКАК, т. V, 1873, с. 1109-1118.

ցուրյունը տարածաշրջանում: Այսպիսով, բաղարականապես ասկանիայունացած Շիրվանը դառնալու էր կարավարնելի և առաջին իսկ հնարավորության դեսպրում կարող էր վերադարձել իրանական պետության կազմի մեջ:

«Երջապես, եթե 1760-ական թվականների վերջում լարվում են Ֆարհ Ալի խանի և Մուհամմադ Սայիդ խանի հարաբերությունները, Դուքսի խանը խնդրանքով դիմում է օսմանյան սուլթանին՝ բոլոր տալու գրանի Համախիլե»⁶⁶.

«Երիխոց կամ սուլթանից ֆերման ստանալը ԺԸ դարի երկրորդ կեսին ամենահին է՝ Այսրկովկասում իրանական կամ թուրքական գերիշխանության մասին չեր փաստում: Խաները ժամանակ առ ժամանակ այդպիսի քայլի էին դիմում ապահովագրական ներառություններով իրենց գործողությունների համար վերջնների համաձայնությունը ստանալու նպատակով: Խաները փորձում էին պահպանել իրենց հերինակությունը սեփական տիրույթներում եւ ըլլոցել քաղաքական առավելությունն ու հզրությունը հարեւան խաների աշքերում: Հետեւաքար, ֆերման ստանալու ավանդույթը խնդրու առարկա ժամանակամիջոցում կորցրել էր նախկին վասարային իմաստը և պահպանում էր երածիական կողմը միայն:

Դուքսի խանության ռազմարարական նշանակությունը «առիպում էի» թէ՝ Շուստական, թէ՝ Օսմանյան կայսրություններին եւ թէ Իրանի տիրակալներին հաշվի ետուել Ֆարհ Ալի խանի հետ: Վերջիններին համար խանի քաղաքական կշխոր պայմանավորված էր նաև երածիական կողմիւների շրջանում ունեցած քաղաքական ազդեցությամբ:

Շուստական կայսրության բարձրաստիճան գիտորականությունն, ի դեմք վրաց Շերամի Բ արքայի (1762-1798 թթ.) մոտ գտնվող ուսուական լիազոր ներկայացուցիչ Ստ. Թունաշենի, տարածաշրջանի տիրակալներին դասակարգում էր ըստ իրենց ռազմական հնարավորությունների որպես «հզրուների» և «նվազ

⁶⁶ Л. Меликет-Беков, Описание сопредельных с Грузией стран второй половины XVIII века, — «Труды» ТГУ, т. XVIII, Тбилиси, 1941, с. 130.

հզորների²⁷: Շնուսատտանի համար այդ «քածակումը» կարելոր վում էր ոչ միայն խանությունների նկատմամբ սեփական քաղաքանությունը կառուցելու առումով, այլև որպէս համար Օսմանյան կայսրության և Դրանի տէրության համար խանությունների քաղաքական նշանակությունը: Խաների ռազմական հզորությունը ոչ այսքան սեփական գիտումի առկայությամբ, որքան հարեւան լեզգիներին վարձելու ենարքավորությամբ էր պարբռնավորված: Այդ առումով շահեկան էր՝ “Նուրայի Ֆարի Ալի խանի դրությունը, քանի որ երա իշխանությունների էին ճանաչում Սամոր գևոտի ավագանու գունվող այսպես կազմած «անկախ միությունները» (Խամայերները)՝ Ալթիքարա, Դոքուգիքարա, Միջրելազա, Այստիքարա և Ռուբուզ լեզգիարենակ իշխանությունների ու վեց զուլեր Բայբուզ, Խինալուտ, Զիր, Կրիզ, Ալիկ և Հափուր (Խասպուտ)²⁸:

Պատմագիտության մեջ արրկուվասար խանությունների ԺԸ դարի երկրորդ կեսի պատմությունը ընթրագրվում է որպէս «կիսանկախ խանությունների ժումանակաշրջան»²⁹: Երեսակի, Գանձակի խանությունները մերը ըստմէրք ճանաչում էին վրաց Տէրակլ Բ արքայի, իսկ Նախիջենակի: Դարձադի խանությունները՝ Իրակի տիրականների գերիշխանությունը, Խօրկ վճարում կամ անհրաժեշտության դեպքում զոր տրամադրում: Արեւելյան Այսրկովկասի խաները ընդունել էին իրենցից ուժնուազութիւն (ինա Ֆարի Ալի խանի) գերիշխանությունը: 1770-ական թվականներին Դերրին, Շարի, Շամախի, Դուրա և Բարա այցելած ակադ. Ա. Գոմելինը գրում էր, որ այդ խանությունների տիրակալներն իրենց կառավարումն ընթացքում իրանական շահերին հաշվետու չեին իրենց ներակայության տակ զունդող շրջաներում ներկայանալով որպէս «անահնաւատիակ տիրակալներ» կամ «անհատ շահեր»³⁰:

²⁷ С. Бурнштейн, укаz. соч., с. 4.

²⁸ С. Гмелин, укаz. соч., с. 50.

²⁹ И. П. Петрушевский, укаz. соч., с. 88.

³⁰ С. Гмелин, укаz. соч., с. 197.

“Նորայի Ֆարհ Ալի խանի և նրա շորջ երեք տասնամյակ ձգվող քաղաքական գործունեության համար աղբքջանական խթերդային պատմագիտությունը կոչում էր «հայրենի երկրի միավորման մարտիկ», «Աղքեցանի ազգային միավորման համար պայքարող մարտիկ»⁷¹: Իրականում Նորայի խանը խելացի և հմուտ դիմանագնու-տիրակալ էր, որի գլխավոր խնդիրն էր քաղաքական գերիշխանություն հաստատել Արեւելյան Այսրկովկասի, ապա ողջ Այսրկովկասի և անզամ Իրանի տերության վրա: Պարզ է, որ Ֆարհ Ալի խանը որեւէ կապ չունի այսօրվա ընկալմամբ «աղքեցանցի» եթիվի հանդուրյան հետ, ցանի որ պատկանում էր դաշտանեան ժողովուրդներից մեկին՝ դայրադերին: Այդ մասին են փաստում ԺԸ դարի երկրորդ կեսի աղքուրները և շենով, որ Դերքենչի խանը (այսինքն Ֆարհ Ալին), ինչպես եւ իր տոհմի մասը, սերում էր դայրադերից, որոնք դաշտանեան ժողովուրդ են, դարգինեների երևիկ մի խումբ եւ պատկանում են Կովկասյան լեզվալեռտաների և ախճա-դաղըստանյան լեզվախմբին⁷²:

Ըստհաւերացներով թևնարկվող նյութը՝ կարող ենք եզրակացնել, որ ԺԸ դարի 60-80-ական թթ. Արեւելյան Այսրկովկասի խանությունների համար կարող են թևնարկվել որպես ինքնիշխանության ժամանակաշրջան: Իրանական պետության նախկին վարչա-տարածքային միավորները վերածվել են ինքնիշխան խանությունների, իսկ Նաշիր շահի օրոք վարչա-տանհական կամ գինվորական պաշտոններ զբաղեցրած անձինք, իշխանությունների իրենց ձեռքերում կենտրոնացնելով, ինքըիշխան տիրակալ-կառավարիչներ խաներ են դաշտում⁷³: Ուստի, ԺԸ դարի երկրորդ կեսի քաղաքական իրավիճակի համատեքստում

⁷¹ Պ. Վախիև, Փառա-խան Կյոնինքն, Եակ, 1942, с. 4.

⁷² 1939 թվականից դայրադերը զրացված են որպես դարգիներ (ան՝ և Հարու Դաղեստան, Օգ. թիվ Ս. Ա. Արդյոնով, Ա. Ի. Օսմանով, Գ. Ա. Սերգեևա, Մոսկվա, 2002, с. 321-322).

⁷³ Описание Шекинской провинции, составленное в 1819 году, генерал-майором Ахвердовым и статским советником Могилевским, Тифлис, 1866, с. 1.

«խան» եղբայրը խմաստացին որոշակի վոփոխությունների եր ենքարելէլ: Եթի ևախիշնում (Մեծյան Իրաւում, Նադիր շահի պետության շրջանակներում) խանը Սպահանեից ևշանակված իրանական պաշտոնյա էր, ով պատասխանառու էր շահի առաջ, ապա ԺԸ դարի երկրորդ կեսին խանն ինքիշիան, անսահմանափակ իշխանությամբ եւ յայն լիազորություններով օժոված արքենցյան տիրակալ էր: Ավելին, ինքիշիան խաները հաճախ ժառանգաբար էին վոխանեցում իշխանությունը վաստելով, որ նշված ժամանակահատվածում իրանական գերիշխանություններ Արքենցյան Այսրկովիասում ձեռական բնույր էր կրում: Խաների ինքիշիան կարգավիճակի մասին է Վկայում ետև այն, որ 1764թ. Խոյնիքի 23-ին ուստաստակյան սենատի որոշմամբ աստրահանեցի հայոցքի ձեռնարկատեր Արքամովին հարի Այի խանի «համաձայնությամբ» իրավունք էր տրվել Սահյանում ձկնորսական արդյունաբերություն հիմնել⁷⁴: Հառկանշական է որ ուստական իշխանությունները դրա չուրջ բանակցությունները վարում էին ոչ թե Զենեկի իրանական կառավարության, այլ Ղուրայի խանի հետ: Շնուհարար, Այսրկովիասի խաներն իրենք էին տնօրինում իրենց տիրույթների ներքին կյանքի բոլոր ոլորտները՝ շրջանցելով Շիրազում գտնվող իրանական շահական կառավարությունը:

Այսրկովիասան խաներություններից միայն Նախիջևանի խանությունն էր գունդում Իրանի տիրակաների ազդեցության տակ: Նախիջևանի Քենդերը ցեղի առաջնորդ Թերիմ-սուլյանը խեղբելով վերականգնել իր ժառանգական իրավունքները⁷⁵: Մշամամանակ Քերիմ խան եւ Այի Սուլրադ խան Զենեկը. Առա Սուլհամմադ Ղաջարը պարբերաբար Նախիջևանի գնդային առաջնորդներին պաշտոնելու էին տալիս Իրանի տերության տի-

⁷⁴ М. Чулков, История краткая российской торговли, Москва, 1788, с. 262.

⁷⁵ Передняя Азия в документах (Серия памяти Ю. Н. Марра), кн. I, Нахичеванские рукописные документы XVIII-XIX вв., Пер. и коммент. К. Н. Смирнова, Дж. Гаибова, Под ред. Ю. Н. Марра, Тбилиси, 1936, с. 62-63.

բակայի ֆերմանով⁷⁶: Նման տեղեկությունները Արևելյան Աշուրկովկասի խաների մասին հայտնի չեն: Հետևաբար կարող ենք փաստել, որ Թերիմ խան Զենյի իշխանությունն Արևելյան Աշուրկովկասում գրեթե բացակայում էր և տեղի խաների նկատմամբ չկար նախկին իրավական պետության վերահսկողությունը Ասրապառականի բեկարքեկության միջոցով:

Այսրկովկասի տիրակալների Իրավի տերության կենտրոնական իշխանություններից բաղադրականապես անկախ լինելու մասին է փաստում այն, որ 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում սուլյանի պատվիրակները մնձանեծ եներ՝ ներույ այցելուն էին Քերիմ խանին և խույզում «բաղդադեցելել» Շերակը Բ արքային: Իրավի տիրակալը պատասխանում է, որ ինքը չի կարող բանարարել խնդրանքը, քանի որ Շերակը Բ արքան իրեն «չի լսում»⁷⁷ (այսինքն բաղադրական առումով ինքնուրույն է):

Խաների ինքնիշխանության մասին եր վկայում նաև խանություններում դրամահատության փաստը⁷⁸: Սակայն Արեւելյան Ասրիկովկասի խանություններում հետևում էին իրավական դրամահատության բաղադրականությանը, ինչը դիվանագիտական քայլ էր տարածաշրջանում ներդրումներ ունեցող Օսմանյան Ե. Ռուսական կայսրությունների եկամուտամբ: Հետեւելով իրանական դրամահատության կատենեներին՝ խաները հավատարմություն ու հետազոտություն էին հարուստ Իրավի տիրակալներին: Դա փաստում է, որ խաներն ավելի հակիմած էին դեպի Իրավական պետությունը, ինչը համահույց էր նրանց խուսանավելու բաղադրականությանը:

⁷⁶ Тбилисская коллекция персидских фирмансов, т. II. Сост. М. А. Тодуа, И. К. Шамц. Тбилиси, 1989, док. № 55, 56, 58-62, 64, 66, 68-69, 71-73, 76.

⁷⁷ Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века, Подг. В. Мачарадзе, ч. III, вып. II. Тбилиси, 1997, с.499.

⁷⁸Տե՛ս Գ. Արիքարցան. XVIII դարի երկորու կեսին Հռոմիա-արևելյան Ասրիկովկասի խանություններում դրամահատության հարցի շաբաթ. – ՄՄԱԵԸ, Խո. ԽԾ, Եր., 2016, էջ 170-180:

ԳՐԱԴՐՈՒՅԹ

ԱՐԵՒԹԵԱՄԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԷԹՆՈ-ԴԱՎԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Հոուց ի վեր Կովկասը հայունի է եղել որպես գաևազան ցեղների և ժողովուրդների օրրան վատ արտահայտված էրեխիք բազմազանությամբ:

Բացառություն չեր նաև Արեւելյան Այսրկովկասը, որը գարերի ընթացքում իր վրա է կրել ռասար նվաճողների բաղարական լուծը և ներարկվել էրեւ-մշակութային փոխակերպումներին: Երկրամասի ԺԸ դարի երկրորդ կեսի էրեւ-դավանական պատմության ուսումնասիրությունը սերտորեն կազմված է տարածաշրջանի ժողովուրդների ճակատագրերի հետ: Խորհրդային պատմագիտության մեջ հայոց խիստ բաղարականացվել է արմատավորելով Արեւելյան Այսրկովկասի էրեխիք իրավիճակի՝ որոշակիորեն գլուխակցված խեղաթյուրման գործելառքը, եթե «աղդում էին» արխիվային վավերագրերի «բարարենք» և «պարսիկներ»⁷⁷ հավաքական անվանումները դրանք փոխարինելով «աղբեջանցի» եղուութով՝ իր ժամանակակից ընկալմամբ, և վարում էին այս տարածքներում աղբեջանցիների գոյությունը «հեացնելու» բաղարականությունը:

Դրանի տերության պատմության ընլույ ժամանակահատվածում «պարսիկ» անվանումը պարտադիր էրեխիք նշանակություն չունի: ԺԸ դարում «պարսիկ» էին կոչում իրանական ծագմամբ ժողովուրդներին, իսկ վաճառականների պարագայում այն կարող էր նշանակիլ իրանահայրատակ (Դրանի տերության բաղարացի): Ժամանակակիցի փոխանցմամբ ԺԸ դարի սկզբին Շամախիում բնակվում էին մեծամասամբ պարսիկներ, ինչպես նաև «զգալի թվով» հայեր և վրացիներ: Շիրվանում խոսակցական լիգուն պարսիկներն եր, իսկ բուրբերներ համարում էին զոհիներ:

յիշվանազիտական մակարդակով: Ոչ պակաս հետաքրքրական էին նայ բանագնացի Հերակլ Բ արքայի բաղարական բայերի վերաբերյալ հիմնավորումները: Ըստ նրա՝ «թիջ եզրը լինելու» հետևանքով Հերակլը ստիպված էր համատարմություն հայունել ոռուական զահին, բանի որ Արենեցան Վրաստանը աշխարհագործեն մոտ էր Ռուսաստանին: «Վրացական բազավորությանը սպառնացող հաջորդ փոտանը՝ «Խախանելու պարսից խաների» ենու հարեւանությունն էր: Վերջապես, լեզգիների և դադստանան լեռնականների մշտական հարձակումները վրացական բնուկավայրերի վրա ու դրանց բարակը Հերակլ Բ արքային ստիպում են հետազանգություն հայունել Ռուսական կայսրությանը²¹⁰:

Այս համատեքստում է պետք պիտարկել նաև Գանձակի խանության դիրքորոշումը Աղա Մուհամմադ խանի արշավանքի ժամանակ: Զավադ խանը 1803 թ. Դիցիանովին գրում էր, որ 1796 թ. Գանձակը հանձնել է ռուսական իշխանություններին, որովհետեւ շահն այդ ժամանակ Խորասանում էր և ի ինքը «հարկ է համարում հետազանցվել նույնպես ուժեղ միապետի ռուսական փաղիշահին»²¹¹:

1768-1774 թթ. ռուս-բուրբական պատերազմի ընթացքում եւ ռուսները, եւ բուրբական կողմը ձգուում էին ստանալ խաների ու տիրակալների երես ոչ ռազմական, ապա գոնի դիվանազիտական աջակցությունը: Ռուսաստանի իշխանությունները դեռեւս պատերազմի նախաշեմին ստիրամեցու էին գումար Արենեցան Այսրկովկասի ազդեցիկ տիրակալի՝ Ֆայք Ալի խանի բաղարական աջակցությունը ստանաւ: Ենուն 1765 թ. աշխանը խանին անձամբ ետմակ է գրում Արտարին գործերի կողեզիայի նախազան կոմիս Ն. Պանինը: Նա փորձում էր ռուսական ստենտրականների նկատմամբ Ֆայք Ալիի բարեհողության մասին հավաստիքներ ստանալ փոխարենը հայունելով Եկատերինա Բ կայսրունու բարեհաճությունը երա նկատմամբ²¹², Ռուսական իշխանությունները Ֆայք Ալի խանի աջակցությունը

²¹⁰ Նոյն տեղում, էջ 23:

²¹¹ АКАД. թ. II. Տիգրոս, 1868, ս. 459.

²¹² РДО, ս. 115.

օգոստորենու էին մյուս խաների, դադստանյան տիրակալների հետ հարաբերությունների կարգավորման ժամանակ, որպեսզի վերահսկեն Օսմանյան կայսրության եւ խաների հարաբերությունները:

Դատերազմի ողջ ընթացքում Այսրկովկասը դուրս չեր մնացել նաև։ Օսմանյան կայսրության ուշադրությունից: 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին սուլթանը փող եւ նվերելու է ուղարկում դադստանյան տիրակալներին. Ֆարհ Ալի խանին, խնդրում հանուն հավատի աջակցել բուրքերին եւ հավանություն է առանում²¹³:

Խաների նման քաղաքական կեցվածքն առավել քան կանխատեսելի էր, քանի որ Արևելյան Այսրկովկասի խաների համար օրակարգային խնդիր էր սեփական անվտանգության ապահովումը։ Վերադարձ իրանական պետական համակարգ ապահովում էր առկա կարգավիճակի կորստով։ Հետեւարար, հեռավոր եւ նոյն կյունը դաշվանող Կոստանդնուպոլիսի գերազույն իշխանության ճանաչումը առավել նախընտրելի էր դարձել։ Այդ պարագայում խանություններին կիաջողվեր պահպանել վաստացի ինքնույթունությունը։ Ավելին, գեներալ Բ. դը Մեհեմին ներկայացրած գեկուցագրում Ղզլարի պարես Ի. ֆոն Շտեները նշում էր, որ դադստանյան տիրակալները հեարավորության դեպքում կայաշտապանն բուրքերին՝ բացառությամբ Ֆարհ Ալի խանի, որը կարող էր հավատարիս լինել Ռուսաստանին՝ ըսդգելով՝ Կուրսի խանի մյուս տիրակալներից դաշվանակով տարբեր լինա՛շիա՝ լինելու հանգամանքը²¹⁴։ Սակայն աստրախանցի վաճառական Մ. Կայզերը, հղում անելով տեղացի հայերին եւ պարսկիներին, 1770 թ. նոյեմբերին հյուպատոս Մ. Սուլյակովին հադրդում էր, որ Ֆարհ Ալի խանը, լուսականներին սիրաշահելու նպատակով, դարձել էր սուսնիալավանին²¹⁵:

Այսպիսով, 1760-1770-ական թթ. Արևելյան Այսրկովկասի խաների վարած քաղաքականության վերլուծությունը վաստում

²¹³ АРО, τ. IV, с. 83.

²¹⁴ РДО, с. 154.

²¹⁵ АВПРИ, ф. Сношения России с Персией, 1771, л. 150, л. 110б-12.

է, որ խորհրդավային պատմագիտության մեջ զոյուրքուն ունեցած այս տեսակետը, բն «մերձկասապան նահանգներում բռնքերի նկատմամբ համակրանքի բացակայություն» կար²²⁶ չափազանց ված պետք է համարել:

Ծուսական իշխանությունները ուսու-բռնքական պատերազմի ընթացքում կովկասյան խաների ու տիրակալների վարագիծը սրափ էին գնահատում: 1771 թ. հյուպատոս Գ. Բոգոյանովը խաների բաղադրական կեցվածքը բացարձում էր ուստական գեերի փայլում հաղթանակներով և նեարավորության դեպքում կամ ապազայում ուստական կողմի վրեժնեսդրությամբ ու ներքադարական որդյապատճառներով: «Երդուծելով բաղադրական իրավիճակը, հյուպատոսը չեր բացառում, որ Արևելյան Վրաստան արշավելու նախապատրաստությունների մասին լուրերը, մերը ընդ մերք հայտնելով ու անհետանալով, նպաստակ ունեին հաճոյանալ բուրքական կողմին և կասկած ու վիտանգ արքանցելու ուստական կողմի մոտ: Մեկ այլ տարբերակով՝ Ֆարի Ալի խանը և Շաղստանի տիրակալները ցանկանում են բանկարծեր նվերներ ու հաճոյախոտություններ ստանալ նաև Ռուսական կայսրությունից: Ենքաղը վում էր նաև, որ պատերազմում Ռուսատանի հագրանակի դեպքում խաներին ի ցուց կդնեն այս հաեզամները, որ իրենք պատերազմի ժամանակ բռնքերին օգնելու առիջ ունեցել են, բայց Ռուսական կայսրության հետ ունեցած «բարեկամության և հարեւանության» պատճառով նրան «ոչ մի տիրություն չեն պատճառել»: Գ. Բոգոյանովի եզրակացնում էր, որ չի կարելի հույս դնել այդ «բերեւամիտ և ուխտադրութ ժողովուրդների վրա»: Նա անհրաժեշտ էր համարում սահմանամերձ բոլոր անցակելուերի անվտանգության ուշադրություն դարձնել: Սյամամանակ նախատեսվում էր Շաղստան և Ֆարի Ալի խանի տիրուպքներ առեւտրակաների անհան տակ համապատասխան մարդկանց (այսինքն՝ գործականներ, իրազեկյաններ, լրտեսներ) ուղարկել, որուք իրենց հետ կտանեն Աստրախանի նահանգապետի նամակները՝ փորձելով համոզել երաժարվել հակառա-

²²⁶ Օ. Մարկոս, սկզ. սուշ., շ. 142.

თასქან თორამალი იუსტინისტები: Այդ խնդիրների համար ծախսեց ხაխատեսվում էր կառարկի պետական միջոցների²¹⁷:

Փաստորեն, 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում թեև Արևելյան Այրելովկասի տարածքը գերծ էր ռազմական գործողություններից, այնուհանդեռ, պատերազմի պասիվ մասնակից վերածվելով, հայտնվել էր տեղեկատվական պատերազմի բովում:

Ռուս-թուրքական պատերազմից հետո միջազգային հարաբերություններում սրվել էր Արևելյան հարցը, որը օսմանյան պետության տարածքը Շուսաստանի եւ Եւրոպական պետությունների միջև կովաճակների էր վերածում ²¹⁸: Թուրքական պատմագիտության գլուհատմամբ Քյուչուկ-Կայիարցիի պայմանագիրը (1774 թ.)²¹⁹ Օսմանյան կայսրության համար 1699 թ. Կարլովիցի հաշվության պայմանագրից հետո ամենածանրն էր²²⁰: Այդ համաձայնագրով Թարձր Դուռը կարծեն թե ճակացուն էր Շուսաստանի գերիշխանությունը եւ այդ պարտադրված խողադրության պահպանումը դառնապարտված էր²²¹: Վերջապես, Կրիմի անկախության ամրագրումը պայմանագրով պարարտ հող էր Խախապատրաստում Շուսաստանի համար հետազոտության և նվաճելու խնդրում²²²: Թեև այդ պայմանագրով Օսմանյան

²¹⁷ Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века, с. 613-614.

²¹⁸ The Cambridge History of Turkey, Vol. III, The Later Ottoman Empire, 1603-1839, Edited by Suraiya N. Faroqhi, London, Cambridge University Press, 2006, p. 57.

²¹⁹ Սույն պայմանագրի անդրական բնագիրը ուշ և Собрание законодательных трактатов и конвенций, заключенных Росснеи с иностранными державами (1774-1906). С введенiem и примечанием проф. В. Н. Александренко, Барнаул, 1906, с. 1-10.Տես ևս Է. Դրյայնին, սկզ. соч.

²²⁰ Dr. M. A. Yalçınkaya, İslahat Değişim Ve Diplomasi Dönemi (1703-1789), – Genel Türk Tarihi, cilt 7, Osmanlı, Editörler Hasan Celal Güzel Prof Dr Ali Birinci, Yeni Türkiye yayinlari, Ankara, 2002, p. 94.

²²¹ История царствования государыни императрицы Екатерины Второй. Соч. А. Лейфорт. ч. IV, Москва, 1838, с. 3.

²²² Նոյն սեղում, էջ 4:

կայսրությունը կորցրել էր բարձրական վերահսկողությունը Դրիմի խանության նկատմամբ, իսկ պետական սահմանների երկարությունը կորուկ կրծատվել էր հօգուած Ռուսաստանի, այսուամենայնիվ. Օսմանյան պետությունը շարունակում էր պահպանել իր բարձրական ազդեցությունը Այսիկովկաստ:

Այսպիսով, Օսմանյան կայսրությունը և Երան նորոգական գործընկերները, մասնավորապես Ֆրանսիան, չեն կարողանում հաշտվել 1768-1774 քր. ռուս-թուրքական պատերազմի արդյունքների հետ, որոնց հիմքանքով Ռուսաստանի դիրքերը Հրուժամերձաւեծովյան տարածաշրջանում անհամեմատ ամրապնդվեցին: Ռուս-թուրքական հարաբերությունները 1774-1787 քր. ընորոշ էին գիտադաշտի ժամանակաշրջանի, երբ կողմերը նոր պատերազմ էին ևս նախապատրաստում: Երան անխուսափելիությունը մարզաբնարար նկատել էր օսմանյան մեծ վեզիր Մոհամեմադ ֆաշան: Քյուջիկ-Կայխարջի պարմանազի վայիշացման և պատակով Կոստանդնուպոլիս ժամանած իշխան Ն. Շենքինին ևս ասել էր, որ եթե Պրիմու անկախությունն ստանա, իսկ Կերչի ու Ենիկալին մասն ուսւենքի ձեռքբերում, ապա ինքը չի խոստանում, որ պարմանազից երկարաժամկետ կլինի²²³.

Խանությունները ակտիվ բարձրական շինումների մեջ էին նաև. Իրանի կառավարող շրջանակների հետ: Այսպէս, Ռուսական իշխանությունները տեղեկացվել էին (1777 ք.), որ Ֆաշի Ալի խանը օգնական գործ է խնդրել Թերիմ խան Զենյից խոստանալով իր քրոջը կնության տալ վերիի եղբորը: Ներքեւի խանը նշում էր, որ իր տիրութերում զննվող ուսական գործը ոչ մի օգնություն գտաց չի տալիս իր քննակինների հետ պայքարում և բռնվագրելուն էր խնդրում Թերիմ խանից փոխը կրաքա: Ներքեւից²²⁴: Սակայն օսմանյան իշխանություններն անուարիք չեն տարածաշրջանում ծավալվել յրադարձությունների:

²²³ А. Петров. Вторая русско-турецкая война в царствование Екатерины II. 1787-1791 гг., т. I, 1787-1789 гг., СПб., 1880, с. 7. Տմ. История царствования государства императрицы Екатерины Второй, с. 3, прим. 1.

²²⁴ «Վ. Մարտիրոսյան, Նյուքը նայ-վրաց-ռուսական հարաբերությունների մասին, էջ 102-103.»

Դեռևս 1776-1779 թթ. բուրր-իրանական կունդիլիկուի պահին սովորան Աքբար Համիդ Ա-ն Թերիմ խանի հետ այսուովովկասայան խաների մերձնեցամբ կանխելու նպատակով վերականգնում է հարաբերությունները Նրանց հետ²²⁵: Բացի այդ, Ախալցխայի Սուլեյման փաշան սուլթանից հանձնարարական էր առաջել հակառակական կրայիցիս կազմել այսուովովկասայան խաներից եւ դաշտուական տիրակապներից²²⁶: Սուլթանը փորձում էր Իրանի տերության հետ հետարակոր ռազմական բախման ժամանակ բանկարծեր սվերթերով ու խոստումներով ստանալ խաների երեւ ոչ աջակցությունը, ապա գուել շեղորությունը: Իրոք, ինքնիշխան խաները, տարածաշրջանում ուստական ազդեցության ամրապնդումից վախենալով, հակվում էին դեսի Օսմանյան կայությունը²²⁷:

Իրանում Թերիմ խան Զենյի մահվանից հետո (1779 թ.) գերազում իշխանության համար վերստին պայքար էր սկսվել: Շուտով Թերիմ խանի եղբօրորդի Ալի Մուրադ Զենյին հաջողվում է առժամանակ (1782-1785 թթ.) մյավորել Իրանի տերության տարածքների մեծ մասը: Բացառություն էին կազմում զաշարերի²²⁸ տիրապետության տակ գտնվող հյուսիսային նահանգները եւ Կասպից ծովի առափելա շրջանները:

Իրանում Թերիմ խանի մահով պայմանավորված բաղարական բանոց ենել Այսուովովկասայան էր ապակայունացրել իրապերությունը: Ուժեղացել էին տարածաշրջանը ազդեցության գոտիների վերաբաժանելու այսուովովկասայան տիրակալների

²²⁵ S. Shaw, Iranian relation with the Ottoman Empire. – The Cambridge History of Iran: From Nādir Shah to the Islamic Republic, Vol. VII, Cambridge, 1991, p. 311.

²²⁶ Из истории русско-грузинских взаимоотношений X-XVIII вв., III. А. Месхта, Я. З. Цинцадзе, Тбилиси, 1958, с. 140.

²²⁷ С. Бурнашев, укаш. соч., с. 5.

²²⁸ Ղաջարերի մասին տե՛ս И. П. Петрушевский, укаш. соч., с. 91; Don Juan of Persia, A Shah Catholic 1560-1604. Transl. and ed. by G. Le Strange, London 1926, p. 46; The Encyclopaedia of Islam, Vol. IV, Leiden, 1997, p. 387; J. Perry, The Zand Dynasty, p. 106-108.

ձգուսմերը: Այստեղ բաղաքական գերիշխանության հասելու համար հակամարտող Երկու խմբավորումներ էին առաջացել, որոնցից մեկը դեկապարում էր Վրաց Հերակլ Բ արքան (նրա հետ դաշնակցում էր Ղարաբաղի Ռբրահիմ խանը²²⁹), մյուսը՝ Պուրայի Ֆարի Ալի խանը: Երկուսն էլ զինական մեծ հեարավորություններ ունեին և հարկ եղած դեսպօն կարող էին վարձու լազգիների օգնությանը դիմել²³⁰.

Արեւելյան Այսրեկովկասում ուսումաբաղադական միանձնյա գերիշխանության համար Ֆարի Ալի խանը պիտի հեազանեցներ Ղարաբաղի Ռբրահիմ խանին: Հարցը «Խաղաղ ճանապարհով» լուծելու համար ևս Ղարաբաղ է ուղարկում իր փեսային Բարիլի Մելիք Սուլհամման խանին: Սակայն Ռբրահիմը ձերբակալում է նրան և երկու տարի պատանդ պահում²³¹: Ֆարի Ալի խանը Թարքիի շամխայի և Շամախիի խաների հետ միասին 1780-1781 թթ. երկու անհաջող արշավաեր է կատարում դեռի Ղարաբաղ:

Պուրայի խանին խիստ անհանգուացնում էր Այսրեկովկասում Հերակլ Բ-ի և Ղարաբաղի խանի բաղաքական դերի մեծացումը: Հաջողության հասելու համար կողմերին պեսոր էր սոսնակ Ռուսական կայսրության աջակցությունը: Դրանով պայմանավորված՝ Նրանք միմյանց սեւացնելու բաղաքանություններին սկսել: Այսպես, Ֆարի Ալի խանը ռուսական իշխանություններին գրում էր, թե տեղի խաների համար անընդունելի է, որ Վրացին (հման Հերակլ Բ-ն) և Ռբրահիմ խանը տիրանան աղաբրայշանական բոլոր բաղաքներին²³²: Իր հերթին Հերակլ Բ-

²²⁹ Աքրջին պատանի էր պահպան Ռումիայի Ֆարի Ալի խանի մոտ և միայն 1760-ին է ազատություն ստանում, իսկ Թերիմ խան Թինոց ճակացում է կրտսել Ղարաբաղի խան (ԱՐ, Աք. 4331, էջ 45բ, The Life and Adventures of Joseph Emin, an Armenian, Vol. II, London, 1792, p. 315).

²³⁰ СПФ АРАН, ф. 99, оп. 2, № 13, л. 22, 40.

²³¹ Տե՛ս Մ. Нерсисян, А. В. Суворов и русско-армянские отношения в 1770-1780-х годах, Еր., 1981, с. 130.

²³² Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии. Под ред. А. А. Чагарели. т. II, вып. II, СПб., 1902, с. 21.

արքան 1782 թ. Պ. Պույդոմկինին ուղղված նամակում Ֆարեհ Ալի խանին անհավատ և կեղծավոր էր անվանում, առաջ մնապրում էր բարբերի հետ նամակագրական կազ հաստատելու համար²³³:

1783 թ. Խունխարի 24-ին Պ. Պույդոմկինին ուղղված գրուրյան մեջ Ֆարեհ Ալի խանը դատապարտում էր Շերակը Բ արքայի դաշնակցային սերտ կապի Բրրահիմ խանի հետ նշելով, որ վերջինս իր մոտ պատասի է պահում Գանձակի խանին և Նարադաղի խանի որդուն ստիպելով հարկ վճարել: Ֆարեհ Ալի խանը պատրաստակամուրյան էր հայտնում երաժարվել Կրաց բազմավորի հետ ունեցած թշնամանքից, երբ ևս օգևություն չորսամարտեր Բրրահիմ խանին: Եր հերթին Շերակը զրում էր, որ ինքը դաշինք ունի Բրրահիմ խանի հետ անհրաժեշտության դիպրում վերջինիս ռազմական օգևություն տրամադրելու մասին²³⁴.

Նշեք, որ ինչպես նախորդ տասնամյակներում, այսպես էլ 1780-ական թվականներին ուստական կողմին չեր հաջողվում Արևելյան Այսրկովկասում եւ Դաղստանում հակաբուրբական կոալիցիա կազմել տեղի կառավարիչներից: Խաներից Նարադաղինն էր ամենից ընդգծված բարբական դիրքորոշում ունեցողը: ԺԸ դարի 80-ական թվականներին ուստական դիմանագիլությունն Այսրկովկասի բաղարական ցարություն վերածելելու տարրերակ է մշակվում, որով նախառեսվում էր նաև ստեղծել հայկական բազավորություն: Դեռևս 1783 թ. ապրիլի 6-ին Պ. Պույդոմկինը Պ. Պույդոմկինին տված երաժենագրում նշում էր, որ Բրրահիմ խանին տապալելուց հետո Նարաբադը հայկական մարզի մաս էր կազմելու²³⁵: Այդ հանգամանքը զարտնիք չեր խանի համար, քանի որ Հայոց պետականուրյան վերականգնումը վտանգում էր խանության գոյությունը: Ուստական բարձրաստիճան պաշտոնյանների 1780-ական թվականների առաջին կեսի զրագուրյան թնաւթյունը փաստում է, որ Հայոց պետականու-

²³³ Междуреческие политические и торговые связи Восточной Грузии, с. 56.

²³⁴ Ст. в РДО, с. 175.

²³⁵ Ст. в АРО, т. IV, с. 239.

բայս վերածնուան հարցը նպատակ ուներ ոռուսական ազդեցության տակ պահել վրաց քաջավորին և Ղարաբաղի խանին: «Ծառ պարզ էր այս բալորից, որ Եկատերինան Հայոց հարցն այերբան եռանդուն կերպով առաջ էր քաշել սոսկ իր շահերի համար, այն է՝ Ղարաբաղի խանության վրա իր քաղաքական տիրապետությունը տարածելու համար», — գրում է Լեռնաց: Շնուսաստանի համար Ղարաբաղի խանությունը մեծ քաղաքական էր առեւսարա-տեսության կարելորությունների: Այս դարաշաւ էր համարվում ուղի դեպի Երան, որև Արեւելյան Վրաստանն աշխարհագրորեն մոտենաւ էր Բարձին, իսկ Կար-Արար գետերից մոտ գտնվող Զավադ քաղաքավայրը դարաբարյան տարածքներին միացնելու պարագայում: Սատրախանից Զավադ էր Սալիան «ոչինչ շարժեցող» ապրանքները հետաքայլ կլիներ փոխանակել մետարսի եր այլ ապրանքների հետ²²⁸: Ամենին, համաձայն ուսուկան քաղաքական ծրագրերի՝ Զավադակի խանությունը, որին հավակնում էր Իրրահիմ խանը, պետք է ընդգրկվեր Բարբիի և Կախեթի միացալ քաջավորության կազմում²²⁹.

Ղարաբաղի խանը հստեսում էր, որ Իրանում կենտրոնական իշխանության բացակայությունը, արտաքին ազգակային դիմուկայելու առանձին խաների անկարությունը ոռուսական զորքերի համար տարածաշրջան երիտասրմելու նպաստավոր պայմաններ էին ստեղծում: Այս ամենը հաշվի առնելով Իրրահիմ խանը զնում է քաղաքական բայլի և խեղուում ընդունել իրեն Նորին կայսերական իշխանության հովանու ներքո: Ի պատճառ կայսրութիւնի իր հպատակներից ակնկացում է միայն համատարկություն²³⁰:

²²⁸ Լեռ, Հայոց պատմություն, – Երևերի ժողովածո, հա. 9, Եր., 1973, էջ 346:

²²⁹ АКАД, թ. II, 1868, ս. 703.

²³⁰ РГВИА, գ. 52, օլ. 1/194, ձ. 331, չ. III, էջ. 15-16.

²³¹ П. Бугков, Материалы для новой истории Кавказа, с. 144.

1783 р. կարգինսկի դաշնագրով²⁴⁰ Արեւելյան Վրաստանը հրաժարվում էր խթնություն քաղաքականությունից և ամբողջությամբ հայտնված ռուսական ազդեցության ոլորտում²⁴¹: Դաշնագրի ստորագրումը Ռուսաստանի կովկասյան քաղաքականության համար շրջադարձային էր, քանի որ աննախադեպ շափով ամրապնդում էր նրա ռազմաքաղաքական դիրքը տարածաշրջանում: Արեւելյան Այսրկովկասի և Դաշնատանի տիրակալների մոտ առաջացած խուճապային տրամադրությունները ստիպում էին նրանց դիմել Ռուսաստանին և քաղաքական հովանավորություն խնդրել²⁴²: Սակայն ռուսական զորքի (թե՛ւ փոքրաբարիվ) տեղակայումն Արեւելյան Վրաստանում ենաւ խախտում էր ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում՝ թե՛ այսրկովկասյան տիրակալների շքանում, թե՛ Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների ռազմաքաղաքական շահերի համատերառում:

Խորհրդային պատմագիտության մեջ կարծիք է արտահայտվել, թե Գեորգինսկի դաշնագրից հետո Ֆարեհ Ալի խանի մոտ «անկասկած ուժեղանում է ռուսական կողմնորոշումը»²⁴³: Բրականում ուղիղ հակառակի էր տեղի ունենում. Այսրկովկաս ռուսական զորքի հնարավոր ներխուժման լուրերը, որոնք պատվում էին նախրան Գեօրգինսկի դաշնագրի կերպումը. Ֆարեհ Ալի խանի բացասական արձագանքին էին արժանացել²⁴⁴:

Ռուսաստանի դիրքերը Այսրկովկասում ավելի են ամրապնդվում. երբ տեղի է ունենում կայսրության շահերի համար իրականացված «մեծ զործք»²⁴⁵. Դրիմի միացումը (համաձայն

²⁴⁰ Դաշնագրի ամբողջական տեքստը տե՛ս ՊԾՀԲԻ, տ. XXI, ս. 1013-1017.

²⁴¹Տե՛ս Հ. Կույշուն. Կավказ и Средняя Азия во внешней политике России, Москва, 1984, ս. 49-51.

²⁴² Պ. Բուտկով. Материалы для новой истории Кавказа, с. 134-135.

²⁴³ Օ. Մարկոս, սկզ. соч., ս. 179.

²⁴⁴ Գ. Цинцадзе. Материалы к истории русско-грузинских отношений, с. 20.

²⁴⁵ Տե՛ս Новые материалы для жизнеописания и деятельности С. Д. Бурнашева, бывшего в Грузии с 1783 по 1787 г., Под ред. А. А. Цагарели,

1784 թ. հունվարի 8-ի կոնվենցիայի): Դրանով ռուսական ռազմա-նավերի համար ուղղու ճանապարհ էր բացիւմ դեպի Օսմանյան կայսրության մայրաքաղաքի մատուցներ²⁴⁵:

Շուտով ռուսական ռազմաքաղաքական ծրագրերում ավելանում է Այսրկովկասում եւս մեկ բուժիրային պետություն ստեղծելու տեսլականը՝ Այսպես, Ներքենդից մինչեւ Գիլան ընկած տարածքներում ստեղծվելու էր «Աղուանք» (Աղջանիա) անվանումով պետությունը: Արեւմոսկրացական իշխանություններն ու Ռմերերն անցելու էին Շուտաստանի հովանավորության տակ, իսկ Այսալջիսայի շրջանն ու Գաևանկի խանությունը՝ Արեւելյան Վրաստածին²⁴⁶: Վերջինին համար մեծ էր Գաևանկի խանության նշանակությունը, քանի որ նրա տարածությունը էին անցնում Թիֆլիսից դեպի Բրան և Հայկաստան գնացող առևտուրական ճանապարհները: Գաևանկում ծայր առած ցանկացած խառնակություն պարեւնային պակասորդ էր առաջացնում Թիֆլիսում²⁴⁷: Ավելին, 1780-ական թվականների կետերին Մտ. Շուտաշները կազմել էր Այսրկովկասի քարտեզը, որտեղ Գաևանկի խանությունը ներառված էր Արեւելյան Վրաստածի սահմանների մեջ: Այդ մասին հայտնի է դառնում Հերակլ Բ արքայի՝ Պ. Պուտյումիկինին 1784 թթ. փետրվարի 15-ին գրած նամակից²⁴⁸:

Շուտական ծրագրերում Աղուանքի սահմանների մասին հստակ պատկերացում չկար: Մի դեպքում դրաեր հասնում էին Ներքենդից մինչեւ Գիլան, մյուս դեպքում՝ Ներքենդից Բարս ընկած տարածքներն անցելու էին ռուսական տիրապետության տակ՝ Աղուանքի քաղաքական սահմանը բողնելով հարավիրա-

СПб., 1901, с. 6.

²⁴⁵ С. Жигарев, Русская политика в Восточном вопросе (ее история в XVI-XIX веках, критическая оценка и будущие задачи), Москва, 1896, с. 225.

²⁴⁶Տե՛ս Ա. Иоанников, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Еր., 1990, с. 136-139.

²⁴⁷ С. Бурнашев, указ. соч., с. 16.

²⁴⁸Տե՛ս Мезонавказские политические и торговые связи Восточной Грузии, с. 140.

նական շրջանների տարածքում²⁸. 1783-1784 թթ. ռուսական այդ նախագիծը տարածաշրջանում ուղղմարադարական իրավիճակի վրափոխության պատճառով չի իրականական: Հյուպիսային Կովկասում շեյխ Մանուքի ապառամբության հետևանքով ստեղծված անկայուն իրավիճակը, ինչպես նաև Օմար (Ռումիա) խանի արշավանքը Վրաստան և հարակից շրջաններ, 1785-1786 թթ. Հայկական նախագիծը հեռացնում են ռուսական դիվանագիտության օրակարգից: Արտահայտվել է անզամ, թերեւս չսփազանցված մի տեսակետ, թե ԺՇ դարի վերջին հայ ազգային մտավորականության ազատ Հայրենիք տաեղծելու ջանքերը դարձան Հայաստանի քաղաքական ու սոցիալ-մշակութային ձգուումների «կարապի երգը»²⁹:

Ռուսական այսրկովկասյան քաղաքականության ընկրությունը փաստում է, որ Հայկական պետության վերածննդան զադափարը քաղաքական խայել էր և միոց Իրրահիմ խանին քարոզական ազդեցությունից հեռացնելու համար: Այդ նախագիծը միտված էր Նարաբաղի խանին և Վրաց Ներակլ արքային ռուսական ազդեցության ոլորտում պահելուն և առավել վերահսկիլ դարձնելուն: Բայց այսպես կոչված Արուանից բազավորության հիմնումը նպատակ ուներ ապահովել Կուրի աջափնյակում ռուսական գերիշխանության հաստատման օրինականությունը³⁰: Ռուսական այսրկովկասյան քաղաքականության համատեքստում Հայկական և Արուանական պետությունների ստեղծման գաղտփարը միտված էր տարածաշրջանում ուժերի հավասարակշության համակարգի ստեղծմանը և իրավիճակը կարգավորելու ինչպես տարածաշրջանի ներսում (խաների ու կառավարիչների միջեւ), այնպես էլ նրանից դուրս (չեզորաց-

²⁸ А. Иоанников, Россия и армянское освободительное движение, с. 137-138.

²⁹ Sh. u. A. Ferrari, Nobility and Monarchy in Eighteen Century Armenia; Preliminary Remarks to a New Study, - «Iran & the Caucasus», Vol. VIII, № 1, Yerevan, 2004, p. 62.

³⁰ Sh. u. В. Туманян, Историческое пристрастие Азербайджана к истории Армении: мифы и реалии, Еր., 2013, с. 157.

նելով իրանա-օսմանյան քաղաքական ազդեցության ուժեղացումը Կովկասում):

Քաղաքական իրավիճակի Իրանում կրկին սրբում է 1785ր.՝ սկզբ դնելով զահակարական նոր կոխվերին: Շռոտով Ալի Մուրադ խանի երբայր Զաֆար խան Զենջին հաջողվում է հայրադարձը գալ այդ կոխվերում (1785-1789 թթ.): «Բայց բազումը ի ևախարարաց գլուխ ամբարձեալ ոչ կամեցած հնագանեյի նման, եւ առաւել եւս Մահմադ խան Մազանդարանայ՝ որդի Շահան խանին», – գրում է Միքայել Չամչյանը²⁵³: Այս Աղա Մուհամմադ խանն Ալի Մուրադ Զենջին մասնաւու լուրն առնելով փախուստի եր դիմել Շիրազից ու մտել զահակարական պայքարի մեջ: Իշխանությունը Շիրազում անցնում է Զաֆար խանի անշափահան որդուն Լուրք Ալի խանին²⁵⁴: Սակայն նա չի կարողանում երկար դիմանալ Շիրազում եւ ստիպված անցնում է Թերման²⁵⁵: ԾՇ դարի 80-ական թվականների երկրորդ կեսին Իրանը շարութակում էր զոյտքուն ունենալ իրեւն Պարսից բազավորությունն «առանց բազաւորի, եւ իրաքանչիւր ևախարար իշխան զաւարի, զրեթ ամեներին լինալ ինքնազլուխ»²⁵⁶, – ինչպես Չամչյանը է գրում:

Անկարուն էր բաղաքական իրավիճակը նաեւ Արեւելյան Այսրկովիկասում եւ Դաղստանում: Զեարողանալով լուծարել վրաց-դարարարայան դաշինքը՝ Լուրայի Ֆարի Ալի խանը հայացը ըստդել էր դեսպի Իրան փորձելով զան բարձրացնել ոմն Արքան Միքայի (իբրև Սեֆյան արքայատոնին) ներկայացուցիչ եւ շահ Ճուսենի ժառանգելերից մեկը), բայց հաջորդության չի հասնում: 1784 թ. նա մնանարիվ զորքով շարժվում է Արդերի, Մեշրին եւ այլանեղ կառավարիչներ նշանակում:

²⁵³ Միքայել Չամչյանց. Հայոց պատմութիւն (ակքրից մինչեւ 1784 թուականը), հան. 4, Եր., 1984, էջ 861:

²⁵⁴ E. Pakravan, Agha Mohammad Ghadjar. Essai biographique. Téhéran, 1953, p. 117.

²⁵⁵ Նույն տեղում, էջ 144:

²⁵⁶ Միքայել Չամչյանց. էջով. աշխ., էջ 861:

Սակայն վրաց-դարաբաղյան գիտակցությունը քանդելու մտադրությունից Նուբայի խանը չէր հրաժարվել: Եթե 1785 թ. Հերակլ Բ-ն Իրրահիմ խանի հետ արշավում էր դեսի Գանձակ, Ֆարի Ալի խանը Վրաց արքային առաջարկում է միասնաբար դուրս գալ Իրրահիմ խանի դիմ: Հարթականի դեպքում արցու-խահայություններ անցնելու էր վրացելան գերիշխանության տակ, իսկ մահմեդականները Նուբայի խանի²⁵: Սակայն Հերակլը մերժում է այդ առաջարկությունը, հանում իր զարքը պաշարումից եւ օգնության ուղարկում Ղարաբաղ:

Ֆարի Ալի խանի իշխանության ընդարձակումը դժգոհություն էր առաջացրել նաև: Դադասանի տիրակալների մոտ: Ղարադարանի ուժմին եւ ավարերի խանը ուսանական իշխանությունների աջակցությունը ստանալով, արշավանը էին նախապատրաստում դեսի Նուբայի խանի տիրությունը: Նշեք, որ Ղարադարանի ուժմին 1786 թ. Պ. Պոլյոմիկինին Արեւելյան Այսրկովկասի քաղաքական քարտեզի վերաձեւման հետաքրքիր տարրերակ էր առաջարկում: Մարտածաշրջանում խաղաղության հաստատման համար առաջարկվում էր Դերբելում իշխանությունն «անհապաղ» հաճանի Բնամ Նուի խանի քառանը, «Ղուրայում» Ֆարի Ալիին, իսկ Բարձում՝ Բարձի խաներին: Մարգրի իրականացման համար ուժմին խնդրում էր 2000-ամեց ուսանական զորախումբ ուղարկել²⁵: Փատորին, Ղարադարանի տիրակալը ձգուում էր Ռուսաստանի միջամտությամբ Արեւելյան Այսրկովկասում թուլացնել Ֆարի Ալի խանի քաղաքական ազդեցությունը: Նաև առաջարկվում էր արմատախիլ անդ Օսմանյան կայսրության իրական շեյխ Մանսուրի շարժումը²⁶: Պ. Պոլյոմիկինը Ղարադարանի տիրակալի առաջարկություններ անպատճական է բողոքում Այսրկովկասում պահպանելով Ֆարի Ալի խանի

²⁵ Տե՛ս Վ. Մարտիրոսյան, Новые документы о политическом положении Закавказья (80-е гг. XVIII в.), – ՊՐԸ, 1979, հ. 3, էջ 92:

²⁶ ՐԳԲԱ, ֆ. 52, օլ. 194, լ. 366, չ. II, լ. 69-70.

²⁷ Ի դեպ, որոց տեղեկությունների համաձայն՝ շեյխ Մանսուրի 6000-ամեց զորացուկառում կայիլ հայեր, չերքեզեր, քարաքեզեր, բուրքեր և այլն (ԾԻՐՈ, թ. 47, ԸՆ6, 1885, է. 180).

Դուստրատանի կովկասան քաղաքականության համար շուրջ երեք տասնամյակ կանխատեսելի գնդիշխանությունը: Գ. Պուտյումինինի կոշտ արձագանքը նարի Ալի խանին ստիպում է զորքը ցրել և վերադառնալ: Մական Կովկասի գեներալ-նահանգապետ Պ. Պուտյումինը շցանքանալով ուստական ազդեցության որբատից դրս թողնել նարի Ալին, 1786 թ. աշւանը երան նամակում «պատվական խան» եղանակով էր դիմում²⁶⁰:

Կոստանդնուպոլսում նուաճատանի դեպան Յ. Բալզակովը 1785 թ. փետրվարին հայրադում էր, որ Ղրիմի կորուստը թուրքերից ավելի դժվար էին տանում ֆրանսիացիները, որոնք սուլթանին ստիպում էին բարձրացնել այդ հարցը²⁶¹: Խեսանի վախանցմանը (1786 թ. մայիսի 1/12) Բարձր Շոտն Ախալցխայի Սուլեյման փաշային գաղտնի հանձնարարել էր 10000 բուրք զինվոր ուղարկել Կովկաս՝ լեզզիներին ուրի հանելու համար²⁶²: Վերսալի պայմանագրի կերպում (1768 թ.) մինչեւ 1787 թ. ուստի ֆրանսիական հարաբերությունների լարվածությունը 1780-ական թվականներին պայմանագրված էր Լեռնատի առևտորի զարգացմանը, որին «խոշոնդուռում էր» ուստական առաջիադացումն Արեւելյում²⁶³: 1787 թ. ֆրանս-ռուսական առևտորային պայմանագրի կերպան և Ֆրանսիայում հեղափոխական իրադրության առաջացնան հետհանքով ֆրանսիական դիվանագիտությունը կորցնում է հետաքրքրությունն արեւելյան հարցերի նկատմամբ: Մական դա չէր խանգարում, որ Ֆրանսիական ուկին շարունակեր իր ազդեցիկ գերակատարությունն ունենալ Օսմանյան կարսության կովկասյան խնդիրների լուծման գործում: Այսպէս, շեյխ Մանսուրը շուրջ 2000 ֆրանսիական ուկին էր բաժանել կովկասյան ժողովույթներին, որոնք նորանի վրա երդ-

²⁶⁰ РГВИА, ф. 52, оп. 194, д. 366, ч. IV, л. 112.

²⁶¹ СИРИО, т. 47, СПб., 1885, с. 139.

²⁶² СИРИО, т. 27, СПб., 1880, с. 392.

²⁶³ А. Иоанниески: Россия и армянское освободительное движение, с. 139.

վել էին՝ խոստանալով արշավել դեպի ռուսական Դეլար²⁶⁴:

Ռուսական առաջնադաշտման դեմ մենակ մնալով՝ Օսմանյան կայսրությունը վերաբարություն է կովկասյան տիրակալներին սիրաշահելու քաղաքականությանը։ Սելիմ Գ սովորակի (1789-1807 թթ.) և մեծ վեզիրի անունից Շաքիլ, Շամախիի, Ղարաբաղի, Շահստափի տիրակալներին մեծամեծ նվիրենք ուղարկելով՝ առաջարկվում էր Անապայի գրավման ժամանակ միանալ դեպի Դելար կազմակերպվող արշավանքին²⁶⁵։ Երկրորդ ռուս-թուրքական պատերազմի ընթացքում (1787-1791 թթ.) Արքակովկասի խաների համար Խայխատեսված քանչարժեք ներքեւով և մեծ զումարով Ֆարի Ալի խանի մոտ էր ժամանել Ախալցխայի Սուլեյման փաշայի ներկայացուցիչը։ Սուլթանի ֆերմանում նշվում էր, որ ռուսները պատրաստվում են գրավել ուղղ «Պարսից քազա-փորբությունը»։ Ուստի առաջարկվում էր միասին հարձակվել Արեւելյան Վրաստանի վրա և «ռուսներին վտարել կամ կոտրել»²⁶⁶։ Է այդպես «Ընդդիմանան վրաց և կործանեն և Երիանու տիրեն»²⁶⁷։ Մինչդեռ պատերազմի Խախաչեմինի Վրաց արքան Սուլեյման փաշայի հետ շնարձակման մասին պայմանագիր էր կիրել և ռուսական գորքի հետ արշավել Գանձակի։ Ճիշտ է, որ սական գորքը զիշապես Ար. Բուլնաշենի զիշապորտթյամբ Գանձակից վերադարձել էր, իսկ արշավանքը ճախտղվել²⁶⁸։

Հասկանալով, որ Դրանու քաղաքականացքն ուժնեղացած Արև Սուլեյմանի խանը կիրքի բորբոքել քշեամանը Ֆարի Ալի

²⁶⁴ Незаданные документы академика Буткова, – «Кавказский сборник», т. XX, Тифлис, 1899, с. 407.

²⁶⁵ Незаданные документы академика Буткова, с. 391. Տիկ. Р. Магомедов, Общественно-экономический строй Дагестана в XVIII – начале XIX вв., Махачкала, 1957, с. 360; Н. Смирнова, Политика России на Кавказе в XVI-XIX вв., Москва, 1958, с. 166.

²⁶⁶ В. Мартirosyan, Новые документы о политическом положении Закавказья (80-е гг. XVIII в.), с. 95.

²⁶⁷ URL арк. 4496, էք 136р-137ш:

²⁶⁸ Դավիդ Բագրատიոնի, История Грузии. Текст издан и снабжен вступительной статьей и указателями А. Рогова, Тбилиси, 1971, с. 167.

եւ Բրրահիմ խաների միջեւ, Ռուսաստանը աշակցում է, որ Հերակլ Բ-ն եւ Ֆարի Ալի խանը բաղարական դաշինք կարեն (1787 թ.): Այս իր ընույթով հարձակողական էր ուղղված տարածաշրջանը ազդեցության գոտիների վերաբաժանելուն, տիրակալների միջեւ հեարտափոք ռազմական բախումները բացառելուն, ինչպես նաև բորբ-իրավական ազրեսիան չեղորացնելուն: Դրանով Ռուսական կայսրությունը վերահաստատում էր ուժերի հավասարակշռությունը թե Իրավի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների, թե՝ այսրկովկայսյան տիրակալների միջեւ: Ռուսաստանն այդ դաշինքը որպես իր ազդեցության ոլորտում պահելու լիակ էր օգտագործելու դեսի Օսմանյան կայսրությունը բաղարականացնելու կողմնորոշված Բրրահիմ խանի դեմ²⁶⁹:

Մինչդեռ 1780-ական թվականների կեսերին Ազա Սուհամադ խան Դաշարին հաջողվում է իրեւ Ենքարկել Սպահանը եւ հայացքն ուղղել դեսի Այօրլուկաս: Այդ հանգամանքը Ֆարի Ալի խանին ստիպում է կայսերական հռվանափորություն ստանալու խնդրանքով ռուսական իշխանություններին դիմել²⁷⁰: Ի պատճեն Կովկասի գեներալ-համակապիտ Պ. Պույումկինը 1786 թ. նշում է, որ Ֆարի Ալի խանի Ռուսաստանի առջեւ ուժեցած ծառայությունները չեն կարող առանց փոխատուցման մնայ, եւ խոսք ավարտում է հոեւորական եռուայով: «Դուք, պատվական խան, փառք փնտրելով, ուրիշ որտե՞ղ (ըստզգամք մերն է - Գ. Ա.) կարող եք այն գտնել, եթե ոչ Մեծի հռվանու ենքու»²⁷¹: Որպես տեսանելի ապացույց նա մատենցուց էր անում վրացական օրինակը²⁷²: Հասկանալի երեսոր Ֆարի Ալի խանի բաղարական դերակառարձնմբ ռուսական կովկասյան²⁷³ բաղարականության համար չեր նվազել, քանի որ նրա իշխանությունն էին ճանաչում Շադառանի, Շիրվանի տիրակալները եւ Ալորպատականի որոշ խաները²⁷⁴:

(1)

²⁶⁹ Հյմ. Վ. Դեգույ, սկզ. սու., ս. 31.

²⁷⁰ СИРИО, թ. 47, СПб., 1885, ս. 193.

²⁷¹ РДО, ս. 201.

²⁷² Նույն տեղում:

²⁷³ А. Բակիխանօվ, սկզ. սու., ս. 138.

Բայց շուտով լարվում են Նուբայի խանի եւ Շռասական կայսրության հարաբերությունները: Կասպից ծովի ափամերձ տարածքներում 1787 թ. ոռուսական երկու առեւտրային նավերի նավարեկության հետևանքով ողջ ապրանքը բարձավել էր, իսկ փրկված նավատարիների նկատմամբ բռնություն էր գործադրվել: Դ. Պոտյումինը վերջնազրի ձեւով պահանջեց Ֆարի Ալի խանից «այսուհետեւ արգելել Բարձի Միրզա Մանշամմադ խանին նման հանդգնություն գործել», վերադարձնել ափ նետված ապրանքները եւ ձերակալված նավատարիներին: «Իսկ եթէ դուք այս ամենը չկատարեք, — զբու եր իշխանը, — ապա չեք կարող մեղադրել որ ես այս բարձի մասին կիայսինեմ նորին պայծառափայլություն Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյումինին, իսկ թէ դրանից ինչպիսի հետեւանքներ կարող են լինել՝ դժվար չէ պառկերացնել»²²⁴:

Ոռուսական հովանափորությունը ստանալու Ֆարի Ալի խանի «ջանքերը» խաթարվում են 1787 թ. ոռուս-բուրգական պատերազմի սկսվելու պատճառով: Իսկ 1789 թ. հովանարին Ֆարի Ալին ու Հերակլ Բ-ն դաշնակցում են Երրահիմ խանի դեմ: Կողմերը ծրագրում են, որ գարևանը Նուբայի խանն անցնելու եր Արարոտ և շարժվելու Իրանի տերության խորքը, իսկ Հերակլը վերահսկելու եր իրավիճակն Այսրկովկասում ու Նախուտանում: Սակայն Ֆարի Ալի խանի վերահաս մահը խառնում է պլանները: «որով կրկին գօրացեալ Երրահիմ անորդն արծարծէ զիւր շարութիւն յայ եւ այլ սահմանակից տեղին իշխանութեան իւրոյ»²²⁵:

Ամփոփելով Ֆարի Ալի խանի շուրջ երեք տասնամյակ ձգված բաղարական գործունեությունը փաստենք, որ իսրեիշխան տիրակալը Բրանի տերության, Ռուսական եւ Օսմանյան կայսրությունների նկատմամբ խուսանավելու բազարականության միջոցով ջանում եր պահպանել իր գերիշխանությունը տարածաշրջանում: 1780-ական թվականներին նրա բաղարականության «ռուսական» ուղղությունը միտված էր աստիճանաբար

²²⁴ Г. Աբովյան, ս. 125.

²²⁵ Կայս Ֆարի պահպանութեան. Գիր Ա-Բ (1780-1834). Տրամ.՝ Գյանքան. Աղասիանց. Թիֆլիս, 1893, էջ 14:

աճող «դաշտարական վտանգին» պիմակայելուն:

Այսպիսով, 1780-ական թվականների առաջին կեսին հազորությամբ լուծելով Մերձակենույան մասնավորապես Կրիմի հիմնախնդիրը Շուսական կայսրությունը Այսրկովկասի առավել ազդեցիկ տիրակալների Հերակլ Բ արքայի և Շուրայի Տարի Այի խանի նկատմամբ հսկորին կիրառում էր քաղաքական հավատարակշուրթյան սկզբունքը՝ թույլ շտացով միաբներ ուժի ի հայտ գալը։ Հասնելով Տարի Այի խանի և Հերակլ Բ-ի միջև դաշինքի կարմանը Շուսաւառանը հասկանում էր, որ նրանց ծավալապաշտական նկրառումները վաղ թե ուշ բախվելու էին միմյանց։ Հետեւարար, Շուսական կայսրությունը ձգձում էր իր հովանավորությունը ճականական ուղղված Տարի Այի խանի հետ վարկող բանակցությունները։

Ինչ վերաբերում է Արեւելյան Այսրկովկասի մյուս խաների և Շուսական կայսրության փոխհարաբերություններին, ապա դրանք եւս չի կարելի բարեկամական առավել եւս «Շուսաւառան անվանել։ Այսպես, 1780-ական թվականների երկրորդ կեսին Բարձի խանի կամարականությունները Շուսական առևտորականների նկատմամբ այնպիսի շահերի էին հասել, որ Միջուկա Մուհամեմմադ խանը բարձր մաքսատուրը էր սահմանի անօամբարվի մոռուկ անցնող եսավերի նկատմամբ²⁷⁶։

Այսպիսով, Իրանի տէրության, Շուսական և Օսմանյան կայսրությունների ռազմաքաղաքական և առևտորա-տնտեսական շահերի համատեքսում Արեւելյան Այսրկովկասի ԺԸ դարի երկրորդ կեսի քաղաքական պատմության վերլուծությունը ցուց տվեց, որ խանությունների իերսիշխանությանը նրանք սպանում էին հավասարապես։ Ի տարբերություն ԺԸ դարի առաջին կեսի, երբ ուս-թուրք-իրանական հայրաբերությունները կարգավորվի էին մի շարք միջպետական պայմանագրերով, 1750-1780-ական թթ. Իրանը, Շուսական և Օսմանյան կայսրությունները «գործում էին» դիվանագիտական չեղորության բարի տակ քացանելով ռազմական ներխուժումը տարածաշրջան։ Այսպէս, Իրանը չէր համակերպվում «պատմականորեն իրեն պատկանող» երկ-

²⁷⁶ Г. Աննադզե, սկզ. ոռչ., ս. 125.

բամասի կորսուի եւ այնտեղ հակառակորդ տերությունների (Շուտական եւ Օսմանյան կայսրությունների) ազդեցության ուժեղացման փաստի հետ: Թիե՛ Շերիմ խան Զենջը ձգուում էր վերահաստատել Իրանի տերության «պատմական իրավունքներ» Այսրկովկասի նկատմամբ, սակայն բավարար չափով ուզմաքաղաքական ու դիվանագիտական ներուժ շուտենալով՝ փաստացի ճանաչում էր Երանց կիսանկախի կարգավիճակը: Օսմանյան կայսրությունը եւս, ի գորու շինուելով միայնակ լուծել այսրկովկասի նիմունախոյիրը եւ նկատի պահելով ռուս-իրանական հևարավոր համագործակցությունը (1730-1730-ական թթ. օրինակով) դիմում է այսրկովկասի խաներին եւ տիրակալներին սիրաշահելու բաղարականությանը:

Շուտական կայսրության այսրկովկասյան բաղարականության համար անհրաժեշտ էին լուծումներ, որուոր բռյլ կոտային կարգավորել հարաբերությունները թէ՝ Օսմանյան կայսրության և Իրանի տերության, թէ՝ այսրկովկասյան տիրակալների հետ: Ըստ այդմ, ԺԸ դարի Երկրորդ կեսի ռուսական այսրկովկասյան բաղարականությունը կառուցվում էր Երկու հարրություններում՝ բաղարական հարաբերություններ Իրանի տերության ու Օսմանյան կայսրության հետ Արևելյան Այսրկովկասի շորջ եւ Երաներում խանությունների ու տիրակալների հետ: Առաջին հարրությունում ռուսական դիվանագիտություններ Իրանի տերությանը սիրաշահելու նպատակով այսրկովկասյան տարածքները կրծում էր «աղյունականական», խոկ «օսմանյան վտանգը» հաշվի առնելով շեզոր վերաբերություն էր ցուցաբերում խանությունների եւ Արևելյան Վրաստանի նկատմամբ: Երկրորդ հարրությունը Ռուսաստանի եւ խանությունների հարաբերությունների պատմությունն է ներկայացնում: 1750-ից միեւնու 1780-ական թվականների առաջին կեսը Ռուսաստանի տագմարադարական շահերին անհրաժեշտ էր հակասարակշուզած եւ կայուն Այսրկովկաս, բայց միմյանց նկատմամբ թշնամարար տրամադրված խաներով ու տիրակալներով: Ավելին, որոշ դեպքերում նախատեսվում էր թշնամանց սերմանել խաների միջեւ Երանց բաղարականության բուլացնելու նպատակով: Օրինակ խոսքը վերաբերում է 1780-ական թվականների առաջին կեսում Ռուս-Ղարաբաղյան հակա-

մարտության ընթացքում ոռւսական իշխանությունների որդեգրած քաղաքականությանը²⁷⁷: 1780-ական թվականներին հաջողությամբ լուծելով Դրիմի հիմնախնդիրը՝ Ռուսական կայսրությունը Այսրկովկասի ուժեղազույն տիրակալների՝ Տերալլ Բ արքայի և Շուրայի Ֆարի Ալի խանի նկատմամբ հնատորեն կիրառում էր քաղաքական հավասարակշռության սկզբունքը: Մյուս կողմից, 1750-1780-ական թթ. Արեւելյան Այսրկովկասի խանությունների և Ռուսական կայսրության քաղաքական հարաբերությունների վերլուծությունը ժիշտում է խորհրդային պատմագիտության այն դրույթը, թե խաները հակառարքական արամադրություններ ունեին եւ քաղաքականապես կողմնորոշված էին դեպի Ռուսաստանը:

Արեւելյան Այսրկովկասի խանությունները ինքնուրույնություն ստուանդուն գուգահեռ, Իրամի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների հետ ինքնուրույն դիվանագիտական հարաբերություններ կառուցելու հետավորություն էին ձևոր թիրել: 1750-1780-ական թթ. Իրամը ստիպված էին իրենց անվտանգությունն ու անկախությունը պահպանել դիմելով Իրամի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև խուսանավելու քաղաքականությանը: Ավելին, խաներն իրական վախ ունեին, օրինակ Ռուսական կայսրությունից «իրեն շուն դողան ի խանեն մեր ամենաոճարմած կայսրություն», — գրում էր Հովսեփ Արդությանը 1785 թ.²⁷⁸:

Այսպիսով, Արեւելյան Այսրկովկասի խաների և տիրակալների Իրամի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների նկատմամբ վարվող քաղաքականությունն անհրաժեշտ է դիտարկել ԾՀ դարի երկրորդ կեսի քաղաքական պատմության համառեքսնում, որից ակնհայտ է դառնում, որ այն սեփական անվտանգության և ինքնիշխանության պահպանամասը միտված խուսանավելու ռազմավարություն էր:

²⁷⁷ Տի ս ՐԳԲԱ, գ. 52, օդ. 1/194, լ. 350, չ. 1, հ. 4-5.

²⁷⁸ ՍՍ, ձեռ. 4496, էջ 137ա:

ԱՐԵՒԹԵԱԱ ԱՏՄԿՈՎԿԱՍԻ ԽԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԸ ԴԱՐ
ՎԵՐՋԻՆ ՏԱՄԱՍՑԱԿՈՒՄ

ԺԸ դարի 90-ական թվականներին Դարաբաղի, Գանձակի, Դերբեսդի, Դուրայի և Շարիի խանությունները, Բարբլիի և Կախետի միացյալ բազմվորությունը շարունակում էին մնալ Այսրկովկասի ամենաազդեցիկ բաղարական միավորները: Բայց Արևելյան Այսրկովկասում Ֆարի Ալի խանի մահվանից հետո բաղարական նոր իրավիճակ էր առաջացել: Դուրայի խանությունը կարող էր «ազահ հարեւանների» բաղարական գոհը դառնալ, այդ պատճառով խանի մահվան լուրը շուրջ մեկ ամիս գաղտնի պահպեց²⁷⁹: Այսպես, Դուրայի խանությունից «անկախացել եր» Շամախին: Շարիի Սուհամմաղ Հասան խանը Ֆարի Ալիի մահվան լուրը առելով հարձակվում է Շամախիի վոր և այստեղից վտարում Ֆարի Ալի խանի որդի Ահմադին: Շամախիի խան է դառնում Դարաբաղի Բըրահիմ խանի մոտ ապաստանած Սուհամմաղ Սայիդ խանի որդին՝ Ասկեր թէկը²⁸⁰, ապա նրա եղբայր Դասիմ թէկը: Շատով Շամախիի Ազանի խանի որդի Սուստաֆան վարձու լնօգինների օգևությունը գրավում է Շամախին, իսկ Դասիմ խանը վախչում է Շարիի խանությունը²⁸¹: Նա ինքը ում է Դուրայի Շեյխ Ալի խանին վերականգնել իրեն Շամախիի խանի պաշտոնում: Դուրայի և Շարիի խանները 1794 թ. պաշտոն են նոր Շամախին, բայց հաջողության համեմ չեն կարողանում²⁸²: Օգոստին առիրից Շարիի Սուհամմաղ Հասան խանի եղբայր Մելիմ թէկը 1795 թ. գրավում է Շարիի խանությունը: Սուհամմաղ Հասանն Ազա Սուհամմաղ խանից ստացած օժանդակ գործով շտապում է Շարի, բայց ծանր պարտություն է կրում: Ազա Սուհամմաղ խանը, զայրացած այդ պարտությունից, իրամայում է կուրացել Շարիի Սուհամմաղ Հասան խանին և ար-

²⁷⁹ ՊԲՎԱ, ֆ. 52, օռ. 194, ձ. 516, լ. 103.

²⁸⁰ Ա. Սերեբրօ, սկզ. սոչ., ը. 188.

²⁸¹ Նով տեղում, էջ 190-191:

²⁸² Ա. Բակիչանօ, սկզ. սոչ., ը. 141.

սորել Թավրիզ²⁸⁰: Ծամախիի խանի օգնությամբ Սուհամմադ Հասանին հաջողվում է Շարիֆ վտարել եւ վերականգնել իշխանությունը: Շարիֆ է Ծամախիի խանությունների միջև բազմական դաշինքներ ամրապնդվում է առուստությամբ, բայց խանի որ Սուհամմադ Հասանը կոյր էր, Շարիֆ խանությունում փաստացի իշխանությունը գտնվում էր երա փեսա Մուստաֆա խանի ձեռքում²⁸¹:

Ֆայի Ալի խանի մահվանից հետո Բարվի խանը դեռևս որոշ հարկային պարտավորություններ էր կառարում՝ հօգուս Դուրայի խանության: Բարվում Սելիր Սուհամմադից հետո իշխանությունը ժառանգում է որդին՝ Միրզա Սուհամմադը: Որոշ ժամանակ անց վերջինս հրաժարվում է հարկ վճարել Ներքենդի և Դուրայի Անիսայ խանին, որն էլ Բարվի խան է ճանաչում Սելիր Մուհամմադի հորիշըռը՝ Սուհամմադ Դուկին: Միրզա Սուհամմադ խանն ու երա մայրը աջարվում են Դուրա: Որոշ ժամանակ անց Բարվի խանի մորը հաջողվում է համոզել իր եղբար որդուն վերականգնելու Միրզա Սուհամմադի իշխանությունը: Անիսայ խանի վաղաժամ մահվան հետեւաերու զործը շարութելու է երա եղբար Շեյխ Ալի խանը: Նա Միրզա Սուհամմադ խանի հետ զորույ մոտենամ է Բարվի մատուցներին եւ օգնության հասած ռուսական զորքի միջամտությամբ ստիպում Սուհամմադ Դուկի խանին եկամուտների կեսը տալ Միրզա Սուհամմադին: Մուհամմադ Դուկի խանի մահվանից հետո իշխանությունը ժառանգարար անցնում է նրա որդուն՝ Շուտեյն Դուկի խանին: Վերջինս հրաժարվում է վճարել հասանելիք եկամուտը, իսկ Միրզա Սուհամմադ խանն թշուալիքով ապաստանում է Շեյխ Ալի խանի մոտ: Վերջինս կրկին զորքով շարժվում է Բարս և բարձարի մաս ճամբար դնում: Այս ժամանակ Շարիֆ Սուհամմադ Հասան խանը Շեյխ Ալի խանից օգնություն է խնդրում Դաղիլումուլի խանի հարձակմանը դիմակայելու համար: Շեյխ Ալի խանը Միրզա Սուհամմադին 1000 զինվոր բաղնելով վերադար-

²⁸⁰ Այս Սուհամմադ խանի տպանությունից հետո Սուհամմադ Հասան խանը փախչում է Ծամախիի Սուլալաֆա խանի մոտ:

²⁸¹ A. Սերեբրօ, յշք. շու., շ. 192, 195.

Առաջին ստեղծված իրավիճակից՝ Հուսեյն Ղուլի խանը համեմարձակի հարձակվում է Միրզա Մուհամմադի վրա, գերեւարում երան եւ ընտանիքով տանում Բաքու²⁶⁵: Այսպիսով, Արևելյան Այսրկովկասում Ֆարի Ալի խանի մահվանը հաջորդած անկայուն իրավիճակը փաստում էր, թէ որքան բռնլ էր Դուրայի խանության շուրջ ձեւափորփած բաղարական միավորումը:

Նշված ժամանակաշրջանում Զենդերի արքայատոհի իշխանությունն իրանում բռնցել էր, և այդ իրավիճակում Դերբենդի ու Շուրայի նորքնեան խան Ահմադը շռապում էր «քարեկամական նամակագրություն» հաստատել Կուրանի և Կովկասի կորպուսների գլխավոր երամանատար Պ. Թերեհի հետ: Ծուսական զահին հավատարմություն հայտնելով՝ նա խոստանում էր հովանավորել ոռս վաճառականությանը²⁶⁶: Ավելին, Ահմադ խանը ոռսական երամանատարությանն է փոխանցում կովկասյան տիրակալներին հասցեագրփած ՍԵյմ Գ սույնակի 1790 թ. Նամակները բուրքական հովանավորությունը ճանաչելու առաջարկով²⁶⁷: Շուրայի խանի այս «ոռսամետությունը» պարմանավորփած էր նախ եւ առաջ արտօնքին վտանգով՝ Այսրկովկասում եւ նրա շուրջ ձեւափորփած անկայուն ուսումնաբաշարական իրավիճակուն: Շուրայի խանությունը Արևելյան Այսրկովկասը երեք տասնամյակ գրեթե միանձնյա բաղարական ազդեցության տակ պահելով այժմ նոր իրավիճակում էր հայունվել, և Ահմադ խանը, որպես իր հետատես հոր բաղարական ուղեգծի շարունակող փորձում էր ոռսական իշխանությունների աջակցությամբ վերականգնել խանության հզորությունը: Նորընծա այդ խանին իր

²⁶⁵ А. Саребров, սկզ. соч., с. 189-190. Տե՛մ. Նկարագիր Սուրբ Ստեփանոսի վանաց Սալիմանի եւ միւս վախորեից և ուխտատենեաց, եւս եւ բաղարաց և զիւղօրեից որը ի Համախույ թեմի, Գրեց Սեպրովը արքավիճական Սմբատեաց, Տիվիս, 1896, էջ 472-482.

²⁶⁶ РДО, с. 212-213.

²⁶⁷ Е. Козубский, սկզ. соч., с. 106. Թէ՝ շամիալը, թէ՝ Դերբենդի խանը բահագնացների միջոցով ոռսական իշխանություններին զրավոր քարայալություններ են տալիս» կատարվածի մասին (տե՛ս ս Հեննանու մեջ գրառական ակադեմիկա Բուտկովա, с. 390-392).

շնորհավորակերերն ու բարեմաղթակերերն եր ուղարկում նաև Ախտողիսայի Սովեյման փաշան: Առաջարկելով մասնակցել Բատալ փաշայի դեպի Ղզլար կատարվող արշավանքին Վերջինս հույս էր հայտնում, որ խանը հավատարիմ կմնա իր հոր քաղաքականությամբ: Ֆարհ Ալի խանն իրոք բարեկանուկան հայրաբարժությունների հետ է «զանասիրաբար նման ընդգծումը մերե է - Գ. Ա.» ծառայություններ մասուցում բուրբական արդուսիրին»²⁸⁷:

Ռուսական կայսրությունը՝ շանսկանալով իր ազդեցությունից դուրս բռնել Ղուբայի խանությունը, «առանձնահատուկ» գգուշավորություն էր ցուցաբերում նրա նկատմամբ: Այսպես, Վերահսկողություն էր սահմանված Ղզլարի մաքսակետով Այրկովիկան կամ Դադատան տեղափոխության ապրանքների, մասնավորապես երկարի նկատմամբ: Սակայն ստեղծված քաղաքական իրադրությունը հաշվի առնելով Աստրախանի նահանգապետը 1790 թ. հոկտեմբերի 28-ին հսկանարարում է Ամմազ խանի նկատմամբ «առանձնահատուկ հարգանք» ցուցաբերել եւ բույզարեկ Ղզլարի մացակետով 500 փուք երկարի տեղափոխությունը»²⁸⁸:

Իշխան Վերը նշվեց, 1791 թ. մարտին Ամմազ խանը մահանում է, իսկ իշխանությունն անցնում է նրա 13-ամյա եղբոր Շեյխ Ալի խանին: Վերջին իր բանագլեցին Գեղրգիեսկ է ուղարկում և հավատարմություն հայտնում ռուսական զային բացասական վերաբերմունք ցուցաբերելով Ազա Մուհամմադ խանի նկատմամբ: Շեյխ Ալի խանը հայորդում էր, որ բուրբերն իր օգնությունն էն ժինդրել եւ շարունակում են «խնդրել», սակայն ինքը չի պատրաստվում Օռուսական կայսրությունից բացի որեւէ մեկին ծառայել²⁸⁹: Բաևակցությունները դաշտառում են բանագլացի վերահսկության մահվան պատճառով, իսկ Շեյխ Ալի խանը չէր շտապում նոր պատվիրանկությունն ուղարկել: Պատճառն այս էր, որ Ազա Մուհամմադ խանը 1791 թ. բանակ էր դրել Մուշ-

²⁸⁷ Несзданные документы академика Буткося, с. 392-393.

²⁸⁸ РДО, с. 218.

²⁸⁹ Լովի տեղում, էր 223:

կիսաերար կոչվող գայլում. «Եթ կոյելն առ ինքն զիշխօղսն երկրաց. յորց շատրւն զնացին, եւ մերն եւ այց հեռաւառը զընծայս յեցին, եւ հպատակութիւն ցուցին, բայց ի Շուշոյ իրավակին խանէն»՝ – զում է Ղուկաս Կարենցի կաթողիկոսը²⁹¹: Հրավիրը մերժում են ևսեւ Շամախիի. Թալիշի. Շաքիի ու Գանձակի խաները բավարարվելով միայն ներքներ ուղարկելով²⁹²: Ղուկաս Կարենցու բնորոշմամբ՝ իշխող խաները «ի նոցան մօտակայքն զնացին առ նա, ի հին անորդն մարտ և ընծայս յորկեցին, հպատակութիւն ցուցակիով»²⁹³:

Տայտոնի է, որ Շիրազի քաղաքաբարը դատխաճաւում է Քերիմ խան Շինի ազգական Լուրֆ Ալի խանին և քաղաքը 1791 թ. հանձնում Աղա Մուհամմադ խանին²⁹⁴. Լուրֆ Ալի խանը մեծ զորաբանակով շարժվում է Քերման եւ մի քանի ամիս իշխում այստեղ²⁹⁵: Լուրի առնելով Աղա Մուհամմադ խանը շուապում է ընդդառաջ՝ իր զորակրամանատարերին բռնիւթով Ասրաւատականում²⁹⁶ եւ «ոստիկան» կարգելով «ի Շաորեծ ի վերա Հայաստանի զՄովկյան խան»²⁹⁷: Դաին նկրտումներն Այսրկով-

²⁹¹ Հիւան Հայոց պատմութեան, Գիրը Բ. Հովհանի կայուղինու Արքութեան (1778-1800), Հրատ. Գիւլ բան. Ազատեանց, Թիֆլիս, 1911, էջ 136: «Նայ, – վեպային եր Կարլոս Օձնեցին, – նոյնպէս կոչեաց զի Իրանին խանն Նարարադայ, բայց ևս ուղևեալից եղանակ ըստ Հերակլ արքային Վրաց ու Մուսամաֆայ խանին Թալիշայ, ոչ զնաց» (ՍՄ, հն. 4331, էջ 75բ):

²⁹² ՍՄ, ձն. 4501, էջ 368բ:

²⁹³ ՍՄ, Վ՛, բոք. 6, վեպ. 166: Հմ. Հիւան Հայոց պատմութեան, Գիրը Ա-Բ (1780-1834), Հրատ. Գիւլ բան. Ազատեանց, Թիֆլիս, 1893, էջ 25: Տե՛ս և նաև Բ. Կոստիկցան, Իրանի տերության պալատական պատմագիր Սարավին Աղա Մուհամմադ խանի 1795 թվականի դարարացան արշագաւարի մասին, – ՄՄԱԵԾ, հն. XXVII, էր., 2011, էջ 339:

²⁹⁴ Է. Պակրազ, օր. օւժ., թ. 131-132.

²⁹⁵ Նոյն տեղում, էջ 144:

²⁹⁶ Նիսեր ազգային պատմութեան համար, Երևանի հայկագումը ի Պարսկաստան, Աշխատասիրութեամբ Գ. Շերմազանեանի, Ռուսուն («Խօնի վերայ»), 1890, էջ 14:

²⁹⁷ ՍՄ, ձն. 4331, էջ 76ա:

կասի նկատմամբ այսրանով չեն սահմանափակվում, եւ ես «ժամանիր եղեալ զալ ի զարնան ի վերա Իրրահիմ խանին եւ Շերակը արքային վերա»²⁹⁸:

Խորհրդային պատմագիտության մեջ առկա էր այն տեսակնոր, թէ 1787-1791 թթ. ուսւ թուրքական պատերազմի ժամանակ ուսւական կառավարող շրջանակների ուշադրությունից դուրս էր մնացել «դաշարական վտանգը»²⁹⁹. Դա մասամբ է համապատասխանում իրականությանը, քանի որ Արևելյան Ազրկովկասի նկատմամբ վարվող քաղաքական ուղղողիքը շարունակում էր մնալ որպես արտօքին քաղաքականության կարեւրագոյն ուղղություններից մեկը: Եկատերինա Բ կայսրութիւն 1791 թ. Գ. Պույումկինին գրած նամակում ցավով էր նշում, որ Ամերիկայից ու Միջինից լուրեր ավելի շուտ են մայրաքաղաք հասնում, քան Կովկասից³⁰⁰: Ուսւական դիվանագիտության կարկառուն ներկայացուցիչ Գ. Պույումկինի կովկասան հարցերով ավելի շատ, քան ուսւական արտօքին քաղաքականության երոպական ուղղությամբ հետաքրքիւ լինելու մասին էր նշում նրա ժամանակակից բրիտանացի դիվանագետ Հարրիսը³⁰¹:

1787-1791 թթ. ուսւ-թուրքական պատերազմի հայրքական ավարտից հետո Կովկասում նուսական կայսրության շահերին սպառնացող թուրքական վտանգը գործեականում վերացավ: Նշենք, որ պատերազմի ընթացքում նուսական հրամանատարությունը տեղեկություններ ուներ կովկասան ժողովուրդների՝ թուրքերին աջակցելու մասին³⁰²: Ուսւաստանի քաղաքականությունն Այսկովկասի նկատմամբ արտահայտված էր Եկատերինա

²⁹⁸ Խոյե տեղում: Հմf. UU, ձև. 4501, էջ 368:

²⁹⁹ О. Маркова, укаz. соч., с. 286.

³⁰⁰ Императрица Екатерина II и кн. Потемкин. Подлинные переписки, — «Русская старина», т. XVII, СПб., 1876, декабрь, с. 646.

³⁰¹ Исторический очерк кавказских войн от их начала до присоединения Грузии, Под ред. В. Потто. Тифлис, 1899, с. 155.

³⁰² Журнал кампаний по Кавказской линии, покойного генерала от инфантерии и кавалера И. И. Германа, 1790 года от 22 сентября по 30-е число, — «Отечественные записки», ч. XXIV, СПб., 1825, с. 353.

Բ կայսրություն 1792-1793 թթ. հրամանագրերում, որտեղ հիմնական շեշտար դրվում էր տեղի խաներին և առաջնորդներին ուստական ազդեցության ուժաւում պահելու վրա՝ նրանց շահագրգուելու առնալուային արտօնություններով ու այլ «օգուաններով»³⁰: Այսինքն Ռուսական կայսրությունը բացառում էր ուժի կիրառումը խանությունների և իշխանությունների նկատմամբ: Ավելին, գեներալ Ի. Գուրզիվիչին հասցեագրված 1793 թ. ապրիլի 19-ի կայսերական հրամանագրով նախատեսվում էր օգուանների նրանի տերության բաղարական անձայունությունից և Կասպից ծովի ափամերձ ժողովուրդներին հովանավորության տակ առնել («առանց երկնառակի»): Թուրքական գործունք հաշվի առնելով հանձնարարվում էր խուսափել ծովից հարավ-արևմուսոր ապրանք ժողովուրդներին ուստական հովանավորության տակ ընդունելուց: Նախատեսվում էր գրավել Կասպից ծովի Բարիլից թիվ հեռու գտնվող և «այսրսիսական խաներից» ոչ մեկին շպառկանոց կողմիներից մեկը եւ այն ուստական ռազմական ու առևտուրական նավերի կայանաւելի դարձնել³⁰: Այսպիսով, Ռուսաստանը 1790-ական թվականների սկզբին ծրագրում էր Արևելյան Այրկովկասի միացումը կայսրությանը խաղաղ ճանապարհով՝ պահպանելով Օսմանյան կայսրության զարման բաղարականության որույնները:

Այսրկովկասի խանությունները կարեւոր տեղ էին գրավում նաև Աղա Մուհամմադ խանի ռազմացալարական ծրագրերում: Այսպիս, Աղա Մուհամմադի իր կովկասյան բաղարականության մեջ հետևում էր ինչպէս Ռուսական պետության, այսպէս էլ Օսմանյան կայսրության բաղարական ուղենիշին: Նրա մաս խորհրդակցության ժամանակ (1793. թ.) որոշվում է շխզել «իին կապերը» Ռուսաստանի հետ³⁰: Ի Գուրզիվիչը հուսադրու հաղորդագրություն է ուղարկում Եկանտերինա Բ-ին այն մասին, որ Աղա Մուհամմադ խանը նկելիում գտնվող ուստական վաճառու-

³⁰ П. Бутков, Материалы для новой истории Кавказа, с. 286-287.

³⁰ РДО, с. 223-226.

³⁰ П. Бутков, Материалы для новой истории Кавказа, с. 329.

կանենք նկատմամբ դժվարություններ չի ստեղծում³⁰⁶. Բրականում, Ազա Սուհամմադ խանը սպասողական դրույքն մեջ էր ուստական աջակցությունը ստանալու եւ իր դիրքերն Իրանում ամրապնդելու համար։ Մշամամանակ, նա նամակագրության մեջ էր բուրքական իշխանությունների հետ, որոնք պատրաստ էին իրեն շահ ճանաչել, երեւ կարողանար վերադարձնել Արևելյան Վրաստակը³⁰⁷: Ըստ ամիս, 1792 թ. հունվարի 12-ին Ռուսաստանի Պետական խորհուրդը քննության է առնում Գիլանի Մուրրուզա Դուլի խանի օգնության մասին խնդրանքը՝ ի հակածիցի Իրանում օրեցօր ուժեղացող Ազա Սուհամմադ խանի³⁰⁸: Գիլանի, Աստրաբադի եւ Սազանդարակի Մուրրուզա Դուլի խանը պատրաստ էր Ռուսաստանի տրամադրության տակ դեկ որոշ նահանգներ եւ Էնգելիի թերակղջին՝ նավահանգստային քաղաքով, ուստական վաճառականությանը ընդմիջու ազատել հարկերից եւ այլն։ Նա հույս ուներ ստանալ «Խասպից ծովի» ուստական նավատորմի ռազմական օգնությունը և 300 զինվոր։ Ազա Սուհամմադ խանի դեմ պայքարելու համար³⁰⁹: Բայց Ռուսաստանը «դանդաղ-կուտուրյուն» էր դրսեւրում, ինչը պայմանափառքած էր Մուրրուզա Դուլի խանի հետ հարաբերությունները չիշացնելու ցանկությամբ եւ քաղաքական մի հաշվարկով՝ անհրաժեշտության դեպքում նրան հակադրել Ազա Սուհամմադ Դաշարին³¹⁰:

³⁰⁶ Материалы для истории Северного Кавказа 1781-1792 гг. – «Кавказский сборник», т. XVIII, Тифлис, 1897, с. 417.

³⁰⁷ М. И. Кутузов. Документы. Под ред. Л. Бескровного, т. I. Москва, 1950, с. 247.

³⁰⁸ Նրա մասին տես E. Pakravan, ор. сіл.: Жизнеописание Ага-Магомет-Хана Каджара, основателя империи царствующей в Персии династии, с кратким обозрением последовавшем по его смерти главнейших происшествий, СПб., 1835. Հայկական աղբյուրները Ազա Սուհամմադին կոչում են «Ազա-Սաման-Շահ. Ներքինի-Շահ և Զեզոր-Շահ» (Մ. Խո. Բարիսունարիանց, Պատմություն Աղոստից, Խո. Բ. Թիֆլիս, 1907, էջ 123):

³⁰⁹ АГС, т. I, ч. II, СПБ., 1869, с. 790.

³¹⁰Տես Պ. Չորակյան, Հայուսու-պարսկական կապերի պատմությունը, – Երև. 1991, համ. 2:

1793 թ. ամուսնը Սովորյանի խանք մեծ գորաբանակով ժամանում է Թավրիզ՝ ստանալու համար տեղի խաների հեազանդուրյունը: Նա Դարարայի խանին խալար ու սուր է ուղարկում, և նրանց միջև «ձեռական սիրայիր հարաբերություններ են հաստատվում»³¹¹: Սովորյան խանի ժամանելուց հետո Սահեկ խան Շաղատին, Խասիր խան Շահսեւանը, Խախչեւանի Քյալքալի խանը, Երեւանի Սուհամենադ խանը, Գանձակի Զափար խանը, Մարաղայի Ահմադ խանը Քայազենի կառավարիչը, «գալով Սովորյան խանի մոտ, ծառայության են անցնում»³¹².

Այսրեովվասում ատեղծված իրավիճակից անհանգստացած Ռուսաստանի Պետական խորհրդում 1793 թ. քենարկվում էր Բարձի ու Դերբենդի խանությունների՝ ուստական հովանավորության տակ անցնելու հարցը³¹³: Դերբենդի եւ Ռուրայի Շեյխ Ալի խանը Այսրեովվասում իրաւական ուժերի աշխատացումից վախենալով՝ շուպառում է ճանաչել ուստական իշխանությունը: Նրա եերկայացուցիչ Միրզա Հասանը խանի անունից Գեորգինություն հավատարմության երդում է տայիս (1793 թ.)³¹⁴: Սակայն երբ Ի. Գևորգիից պահանջում է (հոկտեմբերի 9-ին), որ Շեյխ Ալի խանի անձամբ ստորագրի հավատարմության մասին փաստաթուղթը՝ խանը իրամարվում է³¹⁵: Շեյխ Ալի խանի պահվածքը բաղարական դրդապատճառներ ունիք, քանի որ Սովորյան խան արդին հեռացել էր Այսրեովվասից, խոկ վստանզը՝ չեղորացվել: Խանը սահմանափակվում է միայն Նորքան համբուրելով ու հավատարմության նամակ ուղարկելով: Այսուանեալսինիվ, 1794 թ. փետրվարի 20-ին Պետական խորհրդում որոշվում է բավարարել խանի պահանջը և հովանավորության գործում:

³¹¹ Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Թարգմանությունը ընտացից, Անքաստությունը եւ ճանորազությունները Թ. Կոստիկյանի, Եր., 2000, էջ 67:

³¹² Նույն տեղում, էջ 340:

³¹³ Այդ մասին առավել մակրամասն տե՛ս ՐԴԸ, ս. 225-226.

³¹⁴ ԱԳԸ, թ. 1, գ. Ա, ԾՊԲ, 1869, ս. 796.

³¹⁵ Ա. Եստօն, Մատериалы для новой истории Кавказа, с. 294.

Ներացը կազմակերպելու նպատակով Սաևկո Պատրիարք է մեկնում խանի ներկայացուցիչը³¹⁶:

Հավատարիմ լինելով խուսանավելու հայեցակարգին՝ Շիրվանի Սուստաֆա խանը, Նարարադի թրամիմ խանը, Թարբի շամխանը, Օմար խանը և դադսաննան այլ տիրակալներ Եղիս Ալի խանի պատուիրակի միջոցով 1794 թ. հազարակության փառաթուղթ են ուղարկվում Սելիմ Գ տութեանին: Նրանք պատրաստ են 1795 թ. սկզբին 200 հազարանոց զորություն գրավել Թէրեր և Կուրքան գետերի շրջակարգում գտնվող բաշարներն ու շարժել Նրին: Խաները փառատում են, որ հանուն կրոնի իրենք անզան դրամի դիմաց բոլով չեն տվիլ ոռուական զորքին իրենց տարածքներով Ասիայի խորքերի անցնել³¹⁷: Թէի Սելիմ Գ-ի խոստանում էր նրանց աջակցել, իրականում ժամանակ էր շահում, իսկ կովկասյան տիրակալների բանագեցը ուսւներից որոշակի գումար տառնալով մեկնում է Գեղորդիեսկ:

Այսպիսով, պատմագիտության մեջ գլուխուն ունեցող այն տեսակներ, թե Ֆարի Ալի խանի պավանդական «ոռուամեն» բաղադրականությունը շարունակվում էր նրա հետնորդների օրոր³¹⁸, այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Ֆարի Ալի խանի մահվանից հետո Դուքայի խանության բաղադրական դիրքորոր խարիսխիլ էին՝ խոցելի դաշնակով թե այսրկովկասյան, թե դադսուննան ամիրակալների համար: Պատահական չեր, որ Ֆարի Ալի խանի նախակայության տակ գտնվող ժողովուրդները, ինչպես նաև Դաղստանի, Դերբենդի, Նարադայրադի, Աուրայի, Բարվի, Շիրվանի, Շարիի, Գանձակի, Թալիշի և Սուսանի հարբավայրի, անզան՝ Գիլանի բնակիչներն իրենց համաձայնությունն էին հայունել խանի պաշտոնում Ֆարի Ալիի ավագ որդուն՝ Ահմադին տեսնելու համար³¹⁹:

³¹⁶ АГС, т. I, ч. II, СПб., 1869, с. 796-797.

³¹⁷ П. Бутков. Материалы для новой истории Кавказа, с. 298-299.

³¹⁸ Дж. Мустафазея. Северные ханства Азербайджана и Россия (конец XVIII-начало XIX в.). Баку, 1989, с. 39.

³¹⁹ РДО, с. 213.

Իրանում Ազա Մուհամմադ խանի դիրքերի ամրապնդումը հարկացրում էր Նուրայի խանին «ոռուամբառ» քաղաքականություն վարել: Շեյխ Ալի խանը 1795 թ. սկզբին իր հևազանդություններ էր հայտնում Ազա Մուհամմադ խանին, քանի որ Վերջինս հաշվեհարդար էր տեսել Բերմանի բնակիչների հետ (1794 թ.), գերել էր Լուրֆ Ալի խանին, կուրացրել²²⁰ ու «շահ կոչեցնար» իրեն²²¹ «և սկսալ հաստությին ազգին Դաջարաց ի Պարսկաստան»²²²: Նշեք, որ թեև Ազա Մուհամմադ խանը 1796 թ. մայիսին իրեն շահ էր հոչակել, սակայն փաստացի երա իշխանությունն Իրանում հաստատվել էր դեռևս 1780-ական թվականներին: Շիրազի անկուսից հետո Ազա Մուհամմադ խանը նախկինում Զհեներին պաշտպանող մի շարք նահանգներից աջակցություն է ստանում: Ի նշան հավատարմության՝ խանը երանց ընտանիքներից պատանիներ է պահանջում, ապա՝ վերաբանում Սպահան²²³: Այդ նույն ժամանակ մեծ տեղությունները են դիվանագիտական հայրերություններ էին հաստատում Ազա Մուհամմադ խանի հետ: Դաջարներին համարելով իրանական զահի միակ հետապնդը հավակնորդներ²²⁴:

Ուստի, եթե 1795 թ. սկզբին Իրանի տերության մեծ մասը միավորված էր, Շեյխ Ալի խանն ապրիլին մեծ շարույթով ընդունում է շահի պատվիրակին և իր ներկայացուցիչ Խաջիի թեկին մահամեծ նվերերով ուղարկում Իրան²²⁵: Վերջապես, խանը չէր մոռանում նաև իր արտօքին քաղաքականության ուստական ուղ-

²²⁰ E. Pakravan, op. cit., p. 150-154.

²²¹Տէ՛ս Հիւան Հայոց պատմութեան, Գիրը 3. Դուկաս կարողիկոս (1780-1800), Հրատ.: Գիտ բան. Աղանձնաց, Թիֆլիս, 1899, էջ 633: 1795 թվականը դադաստական աղյուսները հիշառուական են որպես «Այսույի խանի» Թիֆլիս, Ծուշի և Ծամախի կատարած ավելից արշավանքի տարերիվ (T. Aլլերօս, սկզ. սուշ., շ. 145).

²²² ՍՍ, ձեռ. 4331, էջ 79ա:

²²³ Ch. Picault, op. cit., vol. II, p. 405-406.

²²⁴ Очерки новой истории Ирана (XIX – начало XX в.), Отв. ред. Л. М. Кулакина, 1978, с. 10-11.

²²⁵ Е. Козубский, укз. соч., с. 107.

դուրյան մասին՝ առաջ քաշելով Ռուսաստանի հովանավորությունը ճանաչելու իր պայմանները։ Պատմագրության այն դրույթը, թե Շեխ Ալի խանի «անկայում» քաղաքականության հետևանքով Դուրյանի խանությունը չընդունվեց ռուսական հովանու ներքո³², չի համապատասխանում իրականությանը։ Ինչպէս Այսրկովկասի մյուս տիբրականները, այնպէս էլ Դուրյանի խանը, 1790-ական թվականների երկրորդ կեսին ինքսիշխան կարգավիճակը պահպանելու համար կրկին դիմում էին Բրամի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև խուսնավելու քաղացականությանը։ Այն լուրջ փորձության էր ենթարկվել 1795 թ., երբ Ազա Սուհամբայ խանը վերջնականացնելու պահպանությունը դիրքերն Բրանում հետազոտություն էր պահանջում Աստրապատականի։ Այսրկովկասի էլ Շաղստանի տիբրական ներից։

Միավորված իրանական պետության փասորը լուրջ անհանգություն էր առաջացրել ռուսական կառավարության շրջանակների մեջ։ Ռուսական կայսրությունը գործառական քայլերի դիմելով, ատիպված էր ակտիվացնել իր քաղաքականությունը խանությունների նկատմամբ։ Սակայն, երբ Բարեկի Շուտեյն Շովի խանը ռուսական հովանավորության մասին պայմանագիրը կըրելու նպատակով Գերոզինակ է ժամանում և Խ Գուղովիցց խնդրում իրանական հնարավոր ազքեխայի գեպօսմ ռազմական նախատորմ ուղարկել, ապա հատուի պատասխան չի ստանում։ Բրականում Ռուսական կայսրությունը մի կողմից ձգուում էր ազդեցության ուրուտից դուրս չըղողնել Շաղստանի և Այսրկովկասի տիբրությունը. մյուս կողմից չըր շտապում գործառականում աջակցել Երանց տիբրականներին։ Եկատերինա Բ կայսրութիւն Բ. Գուղովիչին 1795 թ. սեպտեմբերի 4-ին տրված համձարականում պահանջում էր մերձկասայան ժողովուրդների շրջանում պահպանել ռուսական զահին հավատարիմ տրամադրությունները ու երանց «լուրջունը»³³։

³² Док. Мустрофьев, указ. соч., с. 41.

³³ Н. Дубровин, История войны и владычество русских на Кавказе, ч. III, СПб., 1886, с. 22.

Աղա Սուհամմադ խանը 1795 թ. Այրեկալիաս արշավելու նախօրյակին գործը բաժանել էր երեք մասի³²⁸: Մի մասը նա Սուլյանի դաշտով ուղարկել էր Շիրվան և Ղաղստան (աց ուղղություն), մյուսն իր Եղրայրներ Ալի Ղուկի և Զաֆար Ղուկի խաների զիսավորությամբ դեպի Երևան (ձախ ուղղություն): Վերջիններս մեծ գումար էին ստացել Հայոց կարողիկոսից³²⁹: Երրորդ գորաբանակը նրա զիսավորությամբ շարժվում էր Ղարաբաղի խանություն (Շուշի)³³⁰: Շուրջ մեկ ամիս Շուշիի ամրոցն անհաջող պաշարելուց հետո Աղա Սուհամմադ խանը հեռանում է դեպի Խարբունարի բնակավայր³³¹: Վրացական իշխանություններին հաջողվել էր ձեռք բնրել ավարական խանին ուղղված Աղա Սուհամմադ խանի նամակը, որում առաջարկվում էր Կախիերի կողմից հարձակվել Արեւելյան Վրաստանի վրա³³²: Զուգահեռաբար Աղա Սուհամմադ խանը Արեւելյան Վրաստանի դեմ էր ուղղել նաև Ճարի լեզգիներին յուրաքանչյուրին առաջարկելով 100 ռուբի³³³:

Փասուորեն, ուստական իշխանությունները հավաստի տեղեկություններ ունեն դեպի Թիֆլիս և ախալապատրաստվող արշավարի մասին, սակայն գործնական քայլեր չեն իրականացնում իրավիճակը փրկելու համար: Այսպիսով, Արեւելյան Վրաստանը ուստական զիսված ուժերի հեռանալուց գրեթե մեկ տաս-

³²⁸ П. Бутков, Материалы для новой истории Кавказа, с. 332. Տմ. Н. Дубровин, Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России. СПб., 1867, с. 12.

³²⁹ АВПР, ф. Сношения России с Грузией, д. 455, л. 184: Տմ. П. Бутков, Материалы для новой истории Кавказа, с. 332; Н. Дубровин, Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России, с. 13.

³³⁰ АВПРИ, ф. Сношения России с Грузией, д. 455, л. 184об: Տմ. R. Gavin, G. Hamblly, Agha Muhammad Khan and the establishment of the Qajar dynasty: Жизнеописание Ага-Магомет-Ханга Каджара, с. 20; Միրզա Ադիթ-Յալ-բեկ, սоч. соч., с. 27.

³³¹ АВПРИ, ф. Сношения России с Грузией, д. 455, л. 184об.

³³² Նոյն տեղում:

³³³ Նոյն տեղում: Տմ. Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии, т. I, с. 93-94.

Խառնյակ ամբ (1787 թ.) միայնակ ու անպաշտապան էր մնացել իրանական վասահօքի առջեւ, իսկ շրջակա մահմերական խառնորդները (բացառությամբ՝ Նարաբաղի) վախից ճանաչել էին Իրանի տիրակալի իշխանությունը²⁴. Իրանական մի քանի տասնյակ հազարի համարու զորքի դեմ Հերակլ Բ արքայի տրամադրության տակ կար 2700 զիւսվոր եւ շուրջ 2000-ի էլ Բնիքերի Սովորությունը Բ-ի օգևական ուժերն էին²⁵. Աղա Սուհամմադ խանի կողմից Թիֆլիսի ավերումից²⁶ հետո Շուլաստակում վերջապես Այսրկովկաս արշավելու բաղադրական որոշում է կայացվում, քանի որ կայսրությանը ձեռնուց էր նետված եւ անհրաժեշտ էր վերականգնել ունահարված հեղինակությունը:

Այսրկովկասյան իշխանություններից հակադրանական կուալիցիա կազմելու առաջելությամբ 1795 թ. հակուեմքերի 28-ին Դերբենդ է ժամանում Բ. Գուդովիչի ներկայացուցիչը: Երբ հայտնի է դատելում, որ Շուլաստակ կայսրությունը շահին պատճենու համար պատրաստվում է զորք ուղարկել, կովկասյան տիրակալները հետաքանություն են հայտնում ուլսական զանին՝ հրաժարվելով Աղա Սուհամմադ խանի նկատմամբ ունեցած «բազ-

²⁴ В. Потто. Кавказская война в отдельных очерках, эпизодах и легендах, т. I, вып. I, СПб., 1887 с. 271.

²⁵ Теймураз. Взятие Тифлиса Ага-Магомед ханом в 1795 году. Тифлис, 1895, с. 6.

²⁶ Թիֆլիսի ավերման մասին տե՛ս, օր.՝ Դիան Ճայոց պատմութեան, Գիրք Ժ, Սակր մատենագիր, էջ 353-374: Աղա Սուհամմադ խանը Թիֆլիսից տանում է մի քանի զիւսօրծների, որոնց Թիերանում ծառայության է Խանեական բարձր վարձառորդյամբ (Տեմուրա, Յանուար Տիֆլիս Ագա-Մագомед խանու 1795 թու, ս. 13-14). Հովհանն Արդուրյանը Թիֆլիսի ավերման մասին լսելով՝ նոյնիքի 27-ին Գրիգորիուսի կողման համակ է գրում «Ղազակից բազաւոր» Հերակլիս (ՄՄ, ձեռ. 2951, էջ 82թ-83): Նա շեշտում էր, որ Խանիքան աղեսող ինքը շատերին է զրել՝ տեղեկացնելով վերահսկ սպառնալիքի մասին, բայց նրանք շատեկացան հավատալ ուլսական զանի նկատմամբ վլացական իշխանական տան անկանությանը (Պատմա արքայություն Անդրեա Արցունեական արքայության մասին (1795-1796 թ.), – «Կավազակա տարին», գու I, № 2, Տիֆլիս, 1872, ս. 29).

բական համակրանքից՝ Դերբեսդում շտափում են բացատրել, որ Թիֆլիսի գրավման առիթով իրենց հարկադրված են Եղել տոնախմբություն կազմակերպիլ³³⁷, բայի որ շահի պատվիրակն այդ ժամանակ գունդում էր Դուչայում: Ի դեպ, այդ առիթով տոնախմբություններ են կազմակերպվել ևաեւ Շաքիում և Բարվում, իսկ Ազա Սուհամմադ խանին շնորհավորական ուղերձներ են ուղարկվել:

Միաժամանակ Շեյխ Ալի խանը շարունակում էր խուսանվելու բաղարականությունը քանիքարժեր նվերներ պատրաստելով շահի համար³³⁸, բայի որ նրանից ըեղունել էր Շիրվանի Խայիրի կողումը³³⁹: Ավելին, Դերբեսդի խանը ձերբակալում է ռուսական եռվանավորությունը սուանալու խնդրանքով Աստրախան ուղևորվող Թալիշի Միր-Սուստահա խանի բանագանցին: Թալիշի խանին միայն ամիսներ անց է հաջողվում Աստրախան ներկայացուցիչ ուղարկել:

Այսպիսով, 1774-1791 թթ. լներացրում Շուլաաստանին հացողվել էր հաստատվել Մերձնենովյան տարածքում, լուծել Ղրիմի հիմնախմելիրը եւ ակտիվացնել այսրկովկասյան բաղարականությունը: Տեսեւաբար, Իրանում կենտրոնական իշխանության բացակայությունը համապատասխանում էր Շուլաաստանի ռազմաքարական շահերին: Այդ իրավիճակը հետաքրություն կտար խաղաղ ճանապարհով իրականացնել Արեւելյան Այսրկովկասի միացումը կայսրությանը: Հակառակ դեպքում Ազա Սուհամմադ խանը ձգտելու էր Նադիր շահի օրինակով վերականգնել Սեֆյան պետության տակնաևները, բայի որ Կովկասից

³³⁷ П. Бутков. Материалы для новой истории Кавказа, с. 342.

³³⁸ Е. Козубский, указ. соч., с. 107.

³³⁹ П. Бутков. Материалы для новой истории Кавказа, с. 332; Н. Дубровин, Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России, с. 11. Ավարայի Օմար (Ուման) խանին առաջարկվել էր Շակառանի սարգարի պաշտոնը (П. Бутков. Материалы для новой истории Кавказа, с. 333).

հարավ ընկած տարածքները Իրաևական պետության սկզբունքներն անբաժանելի հատվածներն են համարվում²⁴⁰:

Այսպիսով, Ազա Մուհամմադ խանին հաջողվեց Նախիր շահի մերողներով՝ ուսումնական միջամտությամբ, Իրաևի տերության ազգեցության ոլորտ վերադարձել Արարսից հոլուխ ընկած տարածքները, որուր Աֆշարների եւ Զեների օրոր, չորս 40 տարի Իրաևի տերության գերիշխանությունից դուրս են մնացի: 1747-1791 թթ. ուսւական իշխանությունները Օսմանյան կայության զայտան բաղադրականականը հավատարիմ լինելով՝ Իրանը վերամիավորելու համար իրաևական խաների շրջանում «հիմքորդ Նախիր խանին են փնտրում»: Բավականական ուսումնագրական ներուժ չունենալով՝ Օսմանյան կայությանը հակազդելու համար Ռուսաստանը փորձում էր երան հակադրել միավորված Իրաևական պետությունը եւ հավատարակշունկ ուժիքի բաշխումը տարածաշրջանում: Հետևաբար, երեւ Ազա Մուհամմադ խանը Իրաևի տերության զայտին հաստատվեր մի քանի տասնամյակ առաջ, ապա Ռուսաստանը «կներեր խանին երան նետած հանդուզն մարտահրավերի համար»²⁴¹: Ազա Մուհամմադ խանի՝ Արեւելյան Վրաստան ներխուժումը մարտահրավեր էր ուսւական կայությանը: Դա «մեծ հարված» հասցեց «ուսւաց արեւելից շահերին» եւ «բոլորուին վայր ձգեց» Ուսւական կայության «վարելը» այսրեմվկայացած խանությունների շրջանում²⁴²:

Ուսւաստանը տոփաված էր վերաևայի իր կովկասյան քաղաքականությունը: Ուժերի հավասարակշունչությունը վերականգնելու համար նա Կոմք-արարսյան միջազգետքի տարածը գեների ուժով և զանազան ճանապարհով պետք է ընթանար: 1790-ական թվականներին Ռուսական կայությունը երկու ուսւաթուրրական պատերազմներում հաղթելով էր Մերձականական տարածքներում հաստատվելով՝ հայցը ուղղել էր Արեւելյան Այսրեմվ-

²⁴⁰ J. Perry, The Zand Dynasty, p. 95.

²⁴¹ Հմմ. Ժ. Անական, Ազգ. աշխ., էջ 15:

²⁴² Տաքիր. Խամսայի մելիքությունները. – Երևերի ժողոված, հա. 10, Եր., 1959, էջ 270: Հմմ. Առ. Եղվ. աշխ., էջ 391:

կամ եւ Իրան³⁴³. Հնտացրբական է, որ ԾԸ դարի վերջին ուստական դյուլանազիտուրյան մեջ պետության անխուսագործյան առումով կասկածի տակ էր պրվամ Դրիմի հարցի կարեւորությունը, ի տարրերություն Թալթիկ ծովի հիմնախնդիրի: Լուսուսում գտնվող ուստական դեսպան U. Կորունցովը 1790 թ. U. Կորունցին գրում էր, որ ինքը ՅՈՒ Դրիմ կուտար Հելսինգֆորայի եւ Սվեաբորգի համար, առանց որոնց Ուստաստանի հյուսիսային մայրաքաղաքին վտանգ էր սպառնում³⁴⁴: Սակայն Ռուսաստանում բարձր էին զանազան Օսմանյան կայսրության հետ ձեռք բերված խաղաղությունը, ինչը «պարսկական գործերին» անդրադառնաւոր հետավորություն էր տալիս: Նկատերինս Բ կայսրեկին բացառում էր «Հունական կայսրության» (ինչև «Հունական նախազին») վերածնեան գաղափարը, քանի որ Ռուսական կայսյության կովկասան քաղաքականության համար օրակարգային էին Իրանում եւ Այսրեկովասում ծափավոր իրադարձությունները: Բարոն Գրիմին 1795 թ. սեպտեմբերի 12-ի գրած նամակում նա նշում էր, որ ՍԵԼԻՄ Գ սուլթանին «իրահերում եւ» խոսքը եւրոպական գործեկերեւորի մասին է՝ պատերազմ սկսել ուսւների դեմ եւ շուրջ 600 բարք զիւկոր եւրոպական տիպի գորավարժաներներ են անցկացնում, իսկ Դաւորդի ավելիքի 60 հազարանց բանակ է կանգնած, եւ բանի որ առաջին անգամ չէ, ուստի, «կամ ժամանեակե ու խելքի կզան», – եղբափակում էր կայսրութիւնից³⁴⁵: Իրանում տիրող քաղաքական իրավիճակը պատկերափոր է բնութագրիկ կուն U. Կորունցովը կուն U. Կորունցովին 1796 թ. ապրիլին գրած նամակում նշելով, որ Պարսկաստանը ոչչացնում է ինքն իրեւ³⁴⁶: Մինչդեռ Ազա Սուհամմադ խանը

³⁴³Տե՛ս Պ. Զորակյան. Հայ-ռուս-պարսկական կապերի պառունակությունից (XVIII դարի վերջ). - ՊԲՀ, 1991, հ⁴⁰ 2, էջ 55-65.

³⁴⁴Архив князя Воронцова, кн. IX, Бумаги графа Семена Романовича Воронцова, ч. II, 1876, с. 173-174.

³⁴⁵Новооткрадные письма императрицы Екатерины Второй к барону Гринму, 1787-1796 гг., - «Русский архив», т. X, Москва, 1878, с. 222.

³⁴⁶Архив князя Воронцова, Под ред. П. И. Бартенева, кн. XXV. Бумаги разного содержания, Москва, 1882, с. 163.

Խաբատակաղըրվել էր վերականգնել Մեծյանների օրոք գոյություն ունեցող պետական սահմանները:

Եկատերինա Բ կայսրություն 1796 թ. փետրվարի 19-ին «Վ. Զարովին» («զոր դղայադ [ոսկեուսն] կոչեին»²⁴⁷) տիտղ երամանագրով Այսրկովկաս արշավելու քաղաքական որոշում էր կայսրությունը: Փաստաթուղթը բացահայտում էր ուստական արքակովկաս քաղաքականության նոր ուժենականացմանը: Կայսրությունը հստակեցնում էր իր դիրքորոշումը խանների նկատմամբ երանց բաժանելով «քարի մտադրություններ» ունեցածների (Քարվի, Թալիշի)²⁴⁸ և «միուսների»: Կայսրությին Դերբենդի Շեյխ Ալի խանին անվանում էր «քերեւամին ու անհետեւողական» համակարարելով հօգուտ Ռուսաստանի շահերի երան հոր քաղաքական ուժի «վերադարձներ»²⁴⁹:

Տերակը Բ արքային քաղաքական գործողությունների ազատությունը էր տրվում սեփական ուժերով Երեւանի և «աղերիջանական» մյուս խաններին ենազանագության բերելու համար: Երեւանի խանության աշխարհագրական դիրքը հաշվի առելով՝ ուստական իշխանությունները գերծ էին մտում Երեւանի խանի նկատմամբ պատճի գործողություններից²⁵⁰: Նշելի է, որ Երևանի բերքը Այսրկովկասի ուսումնավարական ու ուսումնագրադարական ուժեղագույն ամրոցներից մեկն էր: Նրան միանձնելու տիրող քաղաքական ուժը (Օսմանյան կայսրություն կամ Ռուսաստան) ենարագությունն էր ստանալու իշխան Թիֆլիս - Քարու - Լեռնորուն - Երեւան ուսումնագրադարական բառանձնություններ:

²⁴⁷ Ս. Ա. 4331, էք 93ա:

²⁴⁸ Ուստական կայսրության արտաքին քաղաքականության արևելյան ուղղության մեջ «Վ. Զարովին» ունեցած դերի մասին տես ս. Օ. Նիկոնով, Роль В. А. Зубова в становлении российской иноязычной политики на Востоке. – Вестник Екатерининского института, № 1 (13), 2011, с. 95–99.

²⁴⁹ Պ. 228.

²⁵⁰ Նույն տեղում, էք 229:

²⁵¹ Ա. Բուտկով, Материалы для новой истории Кавказа, с. 332; Н. Дубровин, Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России, с. 33–34.

Կովկասյան կորպուսի ռազմական գործողությունները Կոր գետավ մինչև Գանձակ եւ Ղարաբաղ էին տարածվելու շրջանցելով բուրբական սահմանային տարածքները: Թե՛ ցամաքային, թե ծովային գործողություններում պատճենահատուկ դերակատարում էր սովորում պարենի եւ ռազմաբերքի համար պահեստ համարվող Բացուեն: Սուրբուզ Ղուկ խանին ում իշխանության թերեւու եւ Աստրաբադում ու Ենգիլիսու հնեակեսու կառուցելու նպատակով աշնան սկզբին արշավաեր էր կազմակերպվելու դեպի Գլուխան²²².

Անհրաժեշտ է ձերակը Բ արքային, Շիրվանի, Ղարաբաղի խաներին, Մելիքերին, դադառակյան մյուս տիրակալներին և ամակեր ուղարկել և բացատրել, որ ուստակած գօրի ներխուժումը տարածաշրջան ազատազրական և ապառակ ուներ: Դերբենի, Բարվի, Թալիշի և Ղարաբաղի խաներին Սուրբուզա Նովի խանի անունից ևս նամակեներ էին ուղարկվելու Ղանով Ռուսական կայսրությունը փորձում էր կովկասյան տիրակալների մոտ ընդունելի դարձնել Բրանի տերության զանի համար իր նախընտրելի թեկնածուին Սուրբուզա Նովի խանին: Բ դեռ Սուրբուզա Նովի մասին իր նամակեներում մեծ հյացաներով էր խոսում Եկատերինա Բ կայսրուհին ընդգելով նրա բնածին ինիքը, բարեկըրությունը եւ սերեւ արվեստի եկամտամբ²²²:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ 1795 թ. հետո Այսքով-կասի և Դադուանի եւրիքն զարգացումներին Շուաստանի

²⁹ РДО, с. 231. ЗМ. АКАК, т. VI, ч. II, 1875, с. 816; Х. Ибрагимбейли, Россия и Азербайджан в первой трети XIX века (Из военно-политической истории), Москва, 1969, с. 55. Ապրարայը կարու էր դաշնակչացից եղած առաջնորդության մեջ առաջնորդ խորացնելու համար բավարար նախաձեռնության համար (Русско-индийские отношения в XIX в., Сборник архивных документов и материалов, Отв. ред. П. М. Шаститко, Москва, 1997, с. 38).

միջամտությունը բխում էր կանխատեսելի ու հավասարակշռված տարածացքան ունենալու ցանկությունից: Նպատակին հասնելու համար ուսւական իշխանությունը չէր բացառում ևագման միջամտությունը «անհնազանդներին ու կամակորեերին պատժելու» միջոցով: Վ. Զորբովին ուղղված նամակում Եկատերինա Բ-ի հանձնարարում էր խնայել իրեն եւ զորք Շեխ Ալի խանին երեխա անվանելով, որի իրեն իբրեւ «շարածճ մարդ էր» ցուցադրում²⁵⁴: Ուսւական զինված ուժերին իրավունք էր վերապահված երանց հեռացնել բաղաքներից եւ շրջաներից, ապա Աստրախան ուղարկել (փաստացի՝ արտաքսել), խոկ «շախատեր եւ հավատարիմ» խաներին ու տիրակալներին վերականգնել իրենց տիրույթներում: Ավելին, վերջիններս ուսւական զահին հետազա ծառայությունների համար կարող էին պարզեւատրվել «կամակորեերի եւ անհնազանդների» հաշվին²⁵⁵: Դերքեւոյի զրավումց հետո բաղաքի բեկերի որոշ մասին ուսւական երամանաւարությունը տեղափոխում է Աստրախան²⁵⁶:

1796 թ. մարտին ուսւական իշխանությունը երապարակում է «Ուսւական զորքերի մուտքը Պարսկաստանի սահմաններ այդ պետությունում իշխանության զավթիչ Աղա Սուհամմադ խանի դեմ» վերտառությամբ հրովարտակը²⁵⁷: Փաստաքյոթից պարզ է դառնում, որ ուսւական իշխանությունները, պատմական անցյալին սուրբ տապավ, Արեւելյան Այսրեսվկասի տարածքը որպես իրանական պետության մաս էին ըստունում: Իբրեւ արշավանք սկսելու պաշտոնական պատճառ եղվում էր Աղա Սուհամմադ խանի՝ Արեւելյան Վրաստան ներխուժելը²⁵⁸: Հրովարտակում

²⁵⁴ Письма и записочки Екатерины Великой к графу Валерьяну Александровичу Зубову (1789-1796) – «Русский архив», т. III, СПб., 1886, с. 273.

²⁵⁵ РДО, с. 231.

²⁵⁶ А. Бакинян, укаz. соч., с. 144.

²⁵⁷ Հրովարտակի ամբողջական տեքստը տե՛ս ԱԾՅՐԻ, տ. XXIII, ս. 876.

²⁵⁸ Աղա Սուհամմադ խանի թթիվին կատարած արշավանքի մասին մանրամասն տե՛ս Հայկական աղբյուրերը Աղա Սուհամմադ խանի Աղրեսվկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.), Աշխատա-

Աղա Մուհամմադ Ղազարին Թրանում «իշխանության գավյող» էին կոչում և կասկածի տակ առնում երա օրինակարգության հարցը: Ռուսական կողմն այսրկովվկասյան խաներից պահանջում էր շահամագործակցել «գիշատիչ» Աղա Մուհամմադ խանի հետ և սպառնում նրանց ոռուական գափի թշնամիներ հայութաբեր²⁵⁹: Անա եւ առկա էին բոլոր նախադրյապիների Այսրկովվկաս ուազմական ներխուժումն իրագործելու համար:

Այսպիսով, կարելի է շկասկածել, որ 1790-ական թվականների առաջին կեսին Արեւելյան Վրաստանի ճակատազրի նկատմամբ ոռուական կառավարող շրջանակների «քաղաքական անուարերությունը» պայմանավորված էր լոկ տարածաշրջանում գործողությունների ազատություն սուսնալու ձգումով: Ի դեպ, Արեւելյան Վրաստանին օգնություն տրամադրելու մասին սեպտեմբերի 4-ի հրամանագիրը մայրաքաղաքից Կովկաս միայն հոկտեմբերի 1-ին էր հասել²⁶⁰:

Եւ ահա 1796 թ. մարտի 26-ին Ղզլար է ժամանում ոռուական գործակար Վ. Զորովը և գեներալ-անշեֆ Բ. Գուդովիչից ընդունում հրամանատարությունը²⁶¹: Սակայն ոռուական գործի մուտքը տարածաշրջան միանշանակ շնորհվեց երա թասկիշների կողմից: Այդ գործի եւ ոռուական բարձրաստիճան հրամանատարության համար Այսրկովվկաս աշխարհագրական, երև-բաղդարական և լեզվա-մշակութային առումներով դեռևս «անառիկ» էր մեռմ: Ոռուական իշխանությունների այդ հանգամակը արշավանքից առաջ հաշվի էին առել: Վ. Զորովին տրված

սիրությամբ՝ Ռ. Տ. Տիուաևյանի, Եր., 1981; ԽՍ, ԿԴ, թվ. 18, գալ. 195, էջ 16:

²⁵⁹ ՊԾՀՐԻ, տ. XXIII, ս. 878.

²⁶⁰ Очерки истории СССР. Период феодализма. Россия во второй половине XVIII в., Под ред. А. И. Ефимовича, Б. Б. Кафенгугза, Москва, 1956, с. 734-735.

²⁶¹ Այս արքականիքի թիւացրում ոռուական գործի կազմի մասին տե՛ս Խրոնիկա կավականական աշխարհագրական, 2-ի գլուխական գործընթացում, առաջ պատճենաբանությունը կազմակերպվել է Ա. Լ. Գիզետի ղեկավարությամբ, Երևան, 1896, ս. 14.

1796 р. գիւտրվարի 19-ի հանձնարարականում նախատեսվում էր կազմել եւ Այսրկովկասի բնակիչների շրջանում տարածել հսկերեն, վրացերեն, պարսկերեն բացատրական եռանկները՝ նշելով Շուսական կայսրության «քարի նպատակները». Այս Մուհամմադ խանի դաժանակարգութեանից տեղի ժողովուրդներին ազատելու ցանկությունը: Խաջադ բնակչության եկատոմամբ ուստական գորքերը պետք է արդարադատություն, հավասարություն, սեփականության անձեռնմխելության և դավաեանքի ազատության սկզբունքների պահպանում ցուցաբերեին³²¹.

Այսուամենայիվ, 1796 թ. մայիսին Այսրկովկասի ժողովուրդներին ուղղված Վ. Զորովի ուղերձից պարզ էր դանում, որ ուսւներն արշավակի հեեց սկզբից տարածաշրջանի ժողովուրդների ոչ բարեկամական վերաբերմունքին են հանդիպել: Վ. Զորովի խոսքերով՝ ուստական գորքը Այսրկովկաս էր նեկը տեղի ժողովուրդներին պաշտոպանելու նպատակով, եւ ինքը երանցից նման վերաբերմունք չի սպասում, այլ խոստանում է պաշտոպանել երանց «ըստիանուր թշնամու» (իմա՝ Այս Մուհամմադ խանի) ուսնագություններից ու ազատել նրա կեղեցող բոնակալական լծից³²²: Փաստաթղթում նկատելի էր այս սկզբումը, թե Իրանի տիրակալը գերազույն իշխանությունը «զայքի էր» խորհրդարյամբ, խարբավանքով եւ դաժանությումբ: Վ. Զորովի այս շրջաբերականը որոշ խմասով հակադարձում է խորհրդային պատմագիտության այն տեսակետին, թե խանությունների ժողովուրդները ցնծությամբ էին դիմավորում ուստական գորքերին³²³, եւ երանց շրջանում մեծանում էր «ուստական կողմնորոշումը»³²⁴:

³²¹ АРО, с. 420. Հնկ. РДО, с. 229; Н. Дубровин. Поход графа В. А. Зубова в Персию в 1796 году. – «Военный сборник», 1874, февраль, № 2, с. 229.

³²² АРО, с. 431.

³²³ Дж. Мустафаев. укаz. соv., с. 49. Քնարկել խոսքը այստեղ նայ ազգաբանական մասին չէ, որը ոգէտությամբ էր սպասում ուստական գորքին կրան ազատարարի համրակ վերաբերելով (АРО, с. 433-434, 435).

³²⁴ Присоединение Азербайджана к России и его прогрессивные последствия в области экономики и культуры (ХХ – начало ХХ в.). Под ред.

Իրականում խաների «ուստամես» ղերքորչումը գտն քաղաքական պահի թէլադրանքով էր պայմանափորված: Օրինակ Դերբենդի պաշարման ժամանակ մի խումբ հայեր հպատակություն ստանալու խնդրանքով դիմում են ուստական հրամանառարդյանը եւ նրանց փոխանցում նամակների մի կապոց որուցում Շեյխ Ալի խանը լեզգիներից: Դագիկումուխի խանից ու Դաղստանի այլ տիրակալներից օգնություն էր խնդրում փոխարեն առումներ և պարզեներ խոստանալով³⁶³:

Այսրկովկասայան քաղաքականությունն ակտիվացնելով՝ ուստական իշխանությունը փորձում էր տարածաշրջանում հակաիրանական կոալիցիա ստեղծել: 1795 թ. հոկտեմբերին Ռ. Գուլովիչը Շեյխ Ալի խանին առաջարկել էր միավորվել Դաղստանի տիրակալների հետ եւ դիմադրել Աղա Սուհամմադ խանին³⁶⁴: Սակայն Դերբենդի խանը հակված էր համագործակցել Իրանի տիրակալի հետ: Նա փակվում է քաղաքում եւ դիմադրության պատրաստվում: «...Զորով մեծաւ բազմութեամբ եղանէ ի Նզլար եւ դիմէ: ի Դրանդ եւ Շասլի խան որդի Ֆարշալի խանին ըստդիմացեալ յարդարէ զարտերազմ», — գրում է Ժամանակականը³⁶⁵: Շեյխ Ալի խանն ու նրան աջակցող դաղստանեան տիրակալներն իրենց այդ քայլը բացատրում են Աղա Սուհամմադ խանի կողմից քաղաքի ավերման վտանգով: Խանը ձերքակալում է հակաիրանական կոալիցիա ստեղծելու նպատակով Դերբենդ ժումանած ուստական սպային եւ ուցմիի սպառնացող նամակից հետո միայն (ուստական գորքերն այդ պահին գունվում են Ղարալայրազում) ազատ արձակում նրան:

Ո՞չ Իրանի տերությունից, ո՞չ Օսմանյան կայսրությունից տագմական օգնություն չտուալով՝ Շեյխ Ալի խանը մայիսի

Ա. Գոլիեվ, Վ. Մոչալով, Բաքу, 1955, ս. 19.

³⁶³ Историческое известие о походе российских войск в 1796 году в Дагестан и Персию, под командою графа Валериана Александровича Зубова, – «Отечественные записки», ч. XXXI, СПб., 1827, с. 147.

³⁶⁴ Ա. Բուտկով, Մատերիալы для новой истории Кавказа, с. 350.

³⁶⁵ Հայկական աղյուրները Աղա Սուհամմադ խանի Անըրկովկասայան արշավականների մասին (1795-1797 թթ.), էջ 160:

10-ին Ներքենդը հանձնում է ռուսներին, որոնց մեծ աջակցություն էր ցուցաբերում բաղարի հայ բնակչությունը²⁹: Բաղարի գրավման համար գեներալ Վ. Զուբովը որ. Գերզի 2-րդ աստիճանի շրականի է արժանանում³⁰, իսկ որոշ ժամանակ անց այն պաշտոնապես հայուարքովում է Ռուսական կայսրության միացված³¹: Ներքենդի անկումը խուճապ էր առաջացրել տարածաշրջանի խաների և տիրակալների շրջանում: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ եռևիսի 4-ին Շուրայի, իսկ եռևիսի 13-ին Բարձի խաները բարարների բանալիներն ինքնակամ հանձնում են ռուսական հրամանաւարությանը: Միաժամանակ ռուսական գործը հուեխին մոտենում է Հյու Շամախին³² և Կուրդ-բուլաղի մոտ զուսվող ճամբարից բանակցություններ սկսում Շամախիի, Շարիի, Ղարաբաղի և Գանձակի խաների հետ: Ռուսական ռազմական ճամբարից Հովսեփ Արդությանը 1796 թ. սեպտեմբերի 14-ին նամակ է գրում Շերակի բարգային խնդրելով հավաստիացնել խաներին, որ ռուսական իշխանությունները նպատակ չունեն նրանց գրեթե իշխանությունից³³:

Այսրկովվայան խաների տարակուսանքն ու վախը ռուսական գործերի նկատմամբ արամարանական էր, բայց որ երանց հայուարշավը խանությունների համար ինքնիշխանության կորուստ էր նշանակում: Այսու կողմից, Ղարաբաղի, Շիրվանի և Դաղստանի տիրակալների իրանական երուակների գործողություններից երկրի հետագա ավերման մասավախությունը ստի-

²⁹Տէ՛ս UU, ձեռ. 2951, էջ 104р:

³⁰Оборонник сведений о географических кавалериях и боевых знаках отличий кавказских войск. Составлено по архивным документам А. Гизетти, Под ред. В. Потто. Тифлис, 1901, с. 4.

³¹В. Потто. Кавказская война в отдельных очерках, эпизодах и легендах, с. 289.

³²П. Бутков. Материалы для новой истории Кавказа, с. 389, 390. Здն. UU, ձեռ. 4331, էջ 92р:

³³С. Гасарджян. В. Восканян. Материалы по русско-закавказским отношениям конца XVIII в., - ՊՇՀ, 1977, համ. 1, էջ 238:

պում եր նրանց օգնության խեղբանքով ոռւսական իշխանություններին դիմել²²⁴: Այսպիսով, ոռւսական զորքերը կարճ ժամանակում զրավում են Ղազիդումուխը, Դերբենդը, Բարզու, Շարին, Շամախին, Նարարաղը, Գանձակը²²⁵ եւ Կասպից ծովի ողջ տափ՝ Թերեք գետից մինչև Կուր գետի հունը: Նախատեսվում էր ոռազմական զործողությունները նոր բախով Վերսկսկ 1797 թ. գարենը եւ շարժվել դեպի Գիլան, ապա՝ Թեհրան: Նշենք, որ արշավաերից առաջ ոռւսական հրամանատարությունը որպես լուսններ էր ուղարկում հայերի²²⁶, որոնք տիրապետում էին պարսկականիներ, լավ գիտենին տեղաերի աշխարհագրությունը եւ հարմարված էին բնակչինմայական պայմաններին:

Արեւելյան Այսրկովկասի վերաբերյալ ոռւսական դիմանագիտուրյան ծրագրերը բացահայտվում էին Վ. Զուրովի՝ գետերակի. Սավիլնեին ուղղված 1796 թ. սեպտեմբերի 20-ի գրության մեջ: Ոռւսական կայսուրյան ոռազմաբաղարական շահերի համար Դերբենդի եւ Ղուրայի խանուրյունների նշանակությունը կարևորելով՝ Վ. Զուրովը ծրագրում էր դրանք ոռւսական վերահսկողության տակ պահել խանական տոհմի պահպանելով: Նա-

²²⁴ История России изложенная персидским, Пер. Ад. Береже. — «Русская старина», т. XXIV, СПб., 1879, книга 2, с. 168.

²²⁵ Վրաց արքայազն Ալեքսանդրը դեռ 1796 թ. գետովարին պաշարել էր Գանձակը, բայց պարենի պահատության պատճենուով զաղաքեցրել էր պաշարումը: Եթզ Աղա Մուհամմադ խանը Թիֆլիս ավերելուց հետո վերադառնում է Իրան, Ղարաբաղի Իրրահիմ խանը («Իրրահիմ խան Արցախայ»), դաշնակցելով Հերակլ արքայի հետ, 1796 թ. մարտին 3000-անոց զորքով և նույսրան լեզվիներով ալիսացն հարձակվում է Գանձակի Զավադ խանի վրա («Հարձ այս լովելիսիան զօդաց իրացանչիրի անձին եր եօթե կամ տասն դասակ, եւ մեկ լիսոր դրակ ոչ խարի», ԱՍ, ՎՇ, թոր. 18, վագ. 195, էջ 30): Ղատակ կամ դասուար (թուրք.) նշանակում է բամբակէ եերկած կտոր, որից արխական էին կարում: Տե՛ս Դիման Հայոց պատմության, Նոր շարք, Գիրը առաջին, Պուլաս Կարենցի, Խո. Ա (1780-1785), Աշխառասիրությամբ Վ. Գրիգորյանի, Եր., 1984, էջ 565:

²²⁶ Жизнь Артемия Аракатского, уроженца селения Вагаршапат близ горы Аракат, с. 167.

խառնություն էր Ֆարի Ալի խանի դուստր Փերիջա խանումիև իշխանության բերել Ներքենդում. խև խանի որդուն՝ Հասան բեկին՝ Դուրայում: Նպաստակահարմար էր միավորել Ներքենի խանությունը և Թարթիի շամխալությունը՝ Փերիջա խանումիև անուսնացնելով շամխալի որդու հետ (այդ ժամանակ շամխալը իշխանությունից հրաժարվել էր հօգուս որդու)՝³⁷: Փաստորեն, Վերածննդում էր Ֆարի Ալի խանի առեղծած լաքարձակ իշխանապետությունը, բայց ուստական գերիշխանության ներքո, խև Թարթիի շամխալության միջցոցով հնարավորություն էր առեղծնում վերահսկել Շադստանի մյուս իշխանություններին: Անհրաժեշտության դեպքում շամխալը կարող էր մինչեւ 40000 հետևակ մարտի դաշտ դուրս բերել: Նա Շամախիի, Դուրայի և Բարիլի խանություններում մի շարք զուղեր ուներ որպես «ավեր» և դրանցից տարեկան նկամուտ էր հավաքագրում շուրջ 30000 ուստական արծարի շափով³⁸:

Արշականքը դեռևս շավարտած՝ ուստական իշխանությունների արդեն մշակել էին Արեւելյան Այսրկովիասի հետակարի տեսակականը: Դ. Պոտումինին ուղղված 1796 թ. հոկտեմբերի 15-ի Խամակում «Վ. Զուրբովը նշում էր, որ Շադստանի և Շիրվանի միավորում հնարավորություն կտար վերահսկել Թերեր գետից մինչև Կուր ընկած տարածքների ուազմարադարձական ու առհետրա-տեսեսական իրավիճակը: Եթէ Բարուն դառնայ ուստական, ապա, բաց սահմաններով ու անհարմար աշխարհագրական դիրք ունեցող Շամախիի խանությունը հարկադրված կլիներ ճանաչել ուստական գերիշխանությունը: Այդ դեպքում հնարավոր կլիներ վերահսկել են ի վերջո, որպես Կովկասյան գծի անվտանգության լավագույն երաշխիք հավասարեցնել Շադստանի լուսական ծովովուրդներին»³⁹: Փաստորեն, Վ. Զուրբովի բաղա-

³⁷ Н. Дубровин. История войн и владычества русских на Кавказе, ч. III, с. 156-157.

³⁸ СПФ АРАН, ф. 99, оп. 2, № 13, л. 40; П. Бутков, Сведения о кубинском и дербентском владениях. 1798 г., – ИГЭД, с. 211.

³⁹ Н. Дубровин. История войн и владычества русских на Кавказе, ч. III, с. 158-159.

բական ծրագրով Հայրավային Դադաստանի և Շիրվանի տարածքների վրա Ռուսական կայսրության հովանու ներք ստեղծվելու էր մահմետական պետություն:

Նոյեմբերի 6-ին մահանում է Եկատերինա Բ կայսրուհին, և զահ բարձրացած Պավել Ա-ը (1796-1801 թթ.) Կասպիական արշավանքը դադարեցնելով՝ շրջադարձային փոփոխություններ է մտցնում կայսրության կովկասյան բաղարականության ուղեգծում: Ճիշտ է, որ չեր նշանակում, թե ռուսական կառավարող շրջանակները իրաժարվել են Այսրկովկասից: Ը. Անանյանն իրավացիորեն նշում է, որ թեև ԺՀ դարի վերջին ողջ Հյուսիսային սեւծովյան շրջանները արդեն գունդում են Ռուսաստանի տիրապետության տակ, իսկ երկու ռուս-թուրքական պատերազմների ավարտվել են նրա հարցանակով, այնուամենայինվ, կայսրությունն այդ պահին ի վիճակի շեր իրականացնել Այսրկովկասի միացումը²⁹: Պավել Ա կայսրը և իր շրջապատը գտնում են, որ ռուսական զորքին հաջողվել էր վերականգնել Ազա Մոհամմադ խանի ավերիչ արշավակրից հետո Այսրկովկասում խախտված ռազմավարական կայութեարյունը: Այլ բայերի անհրաժեշտությունը հատկապես շնորհացավ Իրանի տիրակալի սպանությունից հետո 1797 թվականին³⁰:

Այսպիսով, ԺՀ դարի 90-ական թվականներին Ռուսական կայսրությանը հաջողվել էր կանքի կոչել Պյուր Ա-ի արեւելյան բաղարականության ուղենիշը՝ ռուսական վիրահակողություն հաստատել Շերենդից մինչեւ Իրանի տերության խորը ձգվող տարածքներում որպես Շերկաստան տանող հուսալի ճանապարհ: Հետեւարար, այդ տարիներին, Կայսրությունը Արեւելյան Այսրկովկասի խանությունների հետ հարաբերությունները հստակ կառուցում եր իր ռազմաքաղաքական և առեւտրատեսական շահերի համատերատում: Բարոյ բաղար-նավա-

²⁹ Ծ. Անանյան, Հայ-ռուսական հայութեարքությունները, Խախադրյան-ները, Գևուշերը, Այրորինի և կառումամբ մոտեցումները, - L29, 1991, հա 1, էջ 16:

³⁰ Ազա Մոհամմադ շահը սպանվել է 1797 թ. մայիսի 15 (Ch. Picault, op. cit., vol. II, p. 406).

հանգիստը համարվում էր ռուս-իրանական առեւտրային հարաբերությունների զարգացման «միակ հարմար և շահավետ» վայրը²⁸²: Նրա ռազմավարական նշանակությամբ էր բացատրվում այն, որ քաղաքում ամրություններ կառուցելու նպատակով նախատեսվում էր 1797 թ. հատկացնել 283 859 ռուբլի, իսկ Թարթիին՝ 90634 ռուբլի²⁸³: Բացի այդ՝ նախատեսվում էր Կուրի և Արարուի գետկիցից բիշ հեռու Զավադի մոտակայքում, Կուրի ձախ ափին, քաղաք-ամրություն կառուցել կոչելով Եկատերինաստերդ²⁸⁴, որպես Ռուսական կայսրության ռազմական, քաղաքական, առեւտրային ու տնտեսական շահերի կենտրոնական հենակետ:

Ինչպես նշեցինք, Արև Մուհամմադ խանի հանդեպ Այրկովկասի խաների վերաբերմունքը ոչ թե «ակնհայտորեն թշնամական էր»²⁸⁵, այլ խանությունների անվտանգության խնդրով էր բերադրված: Կուրի հյուսիսի ընկած խանությունները ի դեմս Արև Մուհամմադ խանի արշավակի քաղաքական կարգավիճակի կորսույան իրական վտանգի հետ բախվեցին: Այսու կողմից «1795 թվականի թիվյայան ադեստը»²⁸⁶ կասկածի տակ էր առել Ռուսաստանի հռվանավորության օգուակարությունը: Արդյոք արժի՞ր հանուն ռուսական հռվանավորության «պաջարական վտանգին» նեթարկվել²⁸⁷:

²⁸² В. Зубов, Общее обозрение торговли с Азией, – «Русский архив», кн. I, Москва, 1873, с. 886.

²⁸³ Н. Дубровин, История войн и владычества русских на Кавказе, ч. III, с. 194.

²⁸⁴ В. Зубов, Общее обозрение торговли с Азией, с. 889-890.

²⁸⁵ В. Левинцов, укаz. соч., с. 166.

²⁸⁶ Դառնավագիլության մեջ այդպես են կոչում 1795 թ. Արև Մուհամմադ խանի ներխուժումը Թիֆլիս (Օ. Այրազետ, Մ. Վոլխոնսկի, Վ. Մухանով. Дорога на Гюлистан... Из истории российской политики на Кавказе во второй половине XVIII – первой четверти XIX в., Москва, 2014, с. 13).

²⁸⁷ Zadé, M. Atkin. The strange death of Ibrahim Khalil Khan of Qazabagh. – «Iranian Studies», Vol. XII, № ½ (Winter-Spring, 1979), p. 85.

ՎԵՐՋԱԲԱՆ

Արեւելյան Այսրկովվկասը Սեւ եւ Կասապից ծովերի ավագանի բաղարական կարեւորագույի հանզուց է ուսզմավարական ճանապարհ դեպի Մերձավոր Արեւելք, եւ մշտապես գտնվել է տարածաշրջանային զարգացումների կենտրոնում՝ իր ուրույն դեր ունենալով ծավալվող բաղարական գործերացներում։ Այս համատեքսուում կարեւորվում է ԺԸ դարի երկրորդ կեսին Արեւելյան Այսրկովվկասի խանությունների բաղարական դերակատարուում, որուք հայտնվել էին Իրանի տերության Օսմանյան եւ Շռուստական կայսրությունների ուսզմարադարական եւ առևտրա-տեսչուսական շահերի խաչասերման ոլորտում։ Դա ենթադրում եր Արեւելյան Այսրկովվկասի խանությունների եւ վերոնշյալ շահագրգիռ տերությունների միջեւ որոշակիորեն յուրահասուկ բաղարական հայրաբերությունների ձեւափորում, որոց հետագուառությունն օգնում է ընդգծել բաղարական գործերացներում ձեւափորվող եւ ուսզմավարական կարեւորություն ու կառուցդական եշանակություն ունեցող բազմարին հիմնահարցեր։

Աղբյուրագիտական կտորի վերլուծության հետեւ վրա բացահայտվում են Իրանական տերության, Շռուստական եւ Օսմանյան կայսրությունների բաղարականությունների մեջ Այսրկովվկասի նկատմամբ ԺԸ դարի երկրորդ կեսին Այսպէս, Իրանը չեր համակերպվում «պատմականութեան իրեն պատկանող» երկրամասի կողասի եւ այսուեղ հակառակորդ տերությունների (Շռուստական եւ Օսմանյան կայսրությունների) ազդեցության ուժեղացման վաստի հետ։ Թեւել Թերին խան Զինջը ձգուում էր վերահասառառել Իրանի տերության «պատմական իրավունքներ»։ Այսրկովվկասի նկատմամբ, առկայի բավարար շափով ուսզմարադարական եւ դիմանագիտական ներուժ շնունալով՝ փաստացի ճանացում էր նրա տեղական տիրակալների ինքնիշխան կարգավիճակը։ Օսմանյան կայսրությունը եւս ի զարու չեր միայնակ լուծել այսրկովվկասայան հիմնախնդիրը, եւ հաշվի առնելով ուսու-իրանական հնարավոր համա-

գործակցությունը (1720-1730-ական թթ. օդիեռակոմ)՝ դիմում էր այսրկովկայայն խաների ու տիրակալների սիրաշահման բաղադականությանը: Ռուսաստանի այսրկովկայայն բաղադականությունն իրականացնում էր Երկարաժամկետ լուծումների մէխանիզմների միջոցով, որոնք կարգավորում էին հարաբերությունները թե Օսմանկան կայսրության և Իրանի տերության, թե՝ այսրկովկայան տիրակալների հետ: Այսպիս, 1750-1770-ական թթ. ռուսական դիմումներությունը, Այսրկովկայան և Շադրանանու իրանա-թուրքական բաղադական գործուղ հաշվի առնելով՝ առժամանակ հրաժարվել էր տարածաշրջանում ռազմական միջամտությունից: Այդ տառնունյակների ռուսական բաղադականությունը խանությունների նկատմամբ դիմանացնուածան միջամտության թևոյր էր կրում, որը հետագա տարիներին վերածվում է հայեցակարգի հակակշխնների առնելիքնամատիսմի:

1780-ական թվականներին Ռուսական կայսրությունը Մերձսևանական, մասնաւորապես՝ Ղրիմի հիմնախնդիրը հաջողությունը լուծելուց հետո Այսրկովկասի առավել հզոր տիրակալների Վրաց Հերակլ Բ արքայի և Շաքարի Ֆարիդ Ալի խանի նկատմամբ հմտորեն կիրառում էր բաղադական հավասարակշռության սկզբունքը՝ թոյլ չուպով Այսրկովկայան միաբենու ուժի ի հայտ գալը: Ի տարրերություն ԾԸ դարի առաջին կեսի, երբ ռուս-թուրք-իրանական հայութերությունները կարգավորվել են մի շարք միջամտուական պայմանագրերով, 1750-1780-ական թթ. Իրանը, Ռուսական և Օսմանքան կայսրությունները որդեգրում են չեղության բաղադականությունը՝ բացառելով ռազմական ներխուժումը տարածաշրջան:

Իրանում կենտրոնական իշխանության բացակայությունը համապատասխանում էր Ռուսաստանի ռազմաբարերական շահերին: Այդ իրավիճակը հետաքննությունն կտայի խաղաղ ճանապարհով իրականացնել Արեւելյան Այսրկովկասի միացումը կայսրությանը: Հետևաբար, Ռուսաստանի օգուլելով Զենյերի արքայառունի երեսուն վիճակից՝ Երկրորդ ռուս-թուրքական պատերազմից հետո՝ 1791-1793 թթ., Զրագրում էր իրականացնել Արեւելյան Այսրկովկասի միացումը կայսրությանը բացառապես խաղաղ ճա-

հապարհով՝ պահպանելով Օսմանյան կայսրության զայման ռազմակարգությունը: Իրանում Աղա Մուհամմադ խանի միանձնյա իշխանության հաստատումը 1794 թ. նպատակ էր հետապնդում վերականգնել Սեֆյանների օրոր գոյություն ունեցող պետական սահմանները:

Ժամանակաշրջանի վայերագրերի քննությունը փաստում է, որ Իրանի տիրակալի 1795 թ. Արևելյան Վրաստան արշավաերի նկատմամբ ուստական իշխանությունները բաղադրական անսարքերություն են դրսեւրում որպես տարածաշրջան ռազմական ենթակառության իրականացնելու շարժադիր և, այսրկովկասայան ժողովուրդների աջակցություններու համակրանցը ստանալու պատրիվակ:

Տարածաշրջան ռազմական ներխուժում իրականացնելու համար Շուտական կայսրությունը որպես շարժադիր օգնագործեց Աղա Մուհամմադ խանի արշավաերն Արևելյան Վրաստան: Այդ արշավաերը եւ Թիֆլիսի ավերումը մեծ հարվածներ էին Վրաց պետականությանը: Շուտական տիրապետության տարածումը Կովկասյան լեռնաշղթայից հարավ հիշյալ խանությունները դրել եր երկրաբանական առջև անցնել ուստեղի կողմը, անվերապահորեն ճանաչել Իրանի շահի գերազույն իշխանություն նը, թէ պայքարել պահպանելու համար իրենց խերեխշխան վիճակը: Խանությունների խուսանավելու հայեցակարգը 1795 թվականից հետո կորցնել եր իր կենտրոնակությունը՝ Արևելյան Այսրկովկասը վերադարձնելով Իրանի պետական համակարգ: Մյուս կողմից՝ «1795 թ. թիֆլիսան ադեսու» տարածաշրջանի համար կասկածի տակ եր դրել Շուտական կայսրության հովանավորության օդիտակարությունը Խաները հայտնիել էին պատմական ու բաղադրական ընտրության առջև: Արդյոք արժե՞ թ համան ուստական հովանավորության «դաշտավական վահագից» տուժել: Խանությունների համար հասունացնել եր Շուտական, Օսմանյան կայսրությունների եւ Իրանի տերության միջեւ բաղադրականապես կողմնորոշվելու պահը:

Արիխիվային փաստարդերի եւ գրականության քննությունը թույլ է տալիս նորույի գևահատել Վ. Զորովի գլխավորությունը 1796 թ. կազմակերած Եասայիսական արշավանքը: Անկա-

կած. Ազաւ Սուհամբայի խանի կողմից խոշտանգված այսր-կովկասյան ժողովուրդների ճակատագիրը չէ, որ նայ եւ առաջ մտահոգել է Ռուսական կայսրության այդ նախաձեռնության քերացրում։ Հանդես գալով տեղի ժողովուրդների «ազատարարի» ու «փրկարարի» դիմում՝ Ռուսական կայսրությունը բուն նպատակ էր հետապնդում ընդարձակել պետության սահմանները և Հայավային Կովկասը ծառայեցնել սիրական՝ իրականում գույն կայսերապետական շահերին։ Այդ երկրամասը Ռուսաստանի համար ուներ ռազմարարացարական լուրջ նշանակություն, քանի որ կարող էր ծառայել իրեւ պատուից պետության հարավային սահմաններն անխոցելի դարձնելու համար, միաժամանակ հանդիսանալով համար և հռատակ հետակետ դեպի Կասպից ծովի ավագանը։ Իրաեփ Սերձկասպյան նահմանները և Ասրաւատական շարժմելու համար, որպէս վերջեական նպատակ աշրի առաջ ունենալով Պարսից ծոց և Հնդկական օվկիանոս դուրս գալով գայրակողիչ հեռանկարը։ Ռուսական պետության հարավային սահմաններից վասակի հեռացումը ուստական կատավարող շրջանակները կապում էին Կասպից ծովի արևմտյան ափին անվտանգության գույն առեղծնան ենու ի դեմս մահմելուական բուժերային իշխանականությունների։ Ֆարի Ալի խանի ընտանիքի անդամների գլխավորությամբ։

Ամփոփելով կարող ենք նշել, որ Ռուսական պետության ԺՀ դարի երկրորդ կեսի այրկովկասյան քաղաքականությունը պարարտ հոդ նախապատրաստոց ժմթ դարի առաջին քառորդում այդ ռազմավարական երկրամասի գրավման խնդիրն իրագործելու համար։ Այսպէս, 1800 թ. կայսր Պավել Ա-ն որոշում է Արեւելյան Վրաստանը միացնել Ռուսական կայսրությանը։ Այդ հավակնուու ծրագիրը կյանքի է կոչում Ալեքսանդր Ա կայսր (1801-1825 թթ.)՝ 1801 թ. սեպտեմբերի 12-ի իր նշանավոր հրավարտակով²⁸⁸։ Հաւշի առելուով Այսրկովկասում ուստական ազդեցության ուժեղացումը Պարարագի, Չարի, Շամախի, Ներքենի, Դուբայի, Բարդայի, Բարվի խանությունները 1805-1806 թթ. ճանաչում

²⁸⁸ Հրավարտակի ամբողջական թագիրը տե՛ս ԱԾՀՀԻ, տ. XVI, ս. 782-784.

Են Ռուսական կայսրության գերիշխանությունը: Բայց 1813 թ. Հոկտեմբերի 12-ին կիրված Գյուլիանանի հաշտության պայմանագրով այդ խանությունները իրավականորեն մտենաւ են Ռուսական կայսրության կազմի մեջ²⁰⁹ և ժամանակակից առաջին կեսի ընթացքում նորարկվում վարչական ու տեսչական լրջազգույն փոփոխությունների²¹⁰:

²⁰⁹ Գյուլիանանի պայմանագրի ամբողջական բազիքը տե՛ս ՊԾՅԻ, տ. ԽХХII, ս. 641-645.

²¹⁰ Մակարանան մե՛ն Վ. Տուոն, Ադминистративно-экономическая политика самодержавия России в Закавказье. I пол. XIX в., Еր., 2007.

SUMMARY

The Eastern Transcaucasia is a critical political hub of the Black Sea and Caspian Sea basin, a strategic way to the Middle East that has always been in the center of regional developments, having a unique role in the political processes. In this context, in the second half of the 18th century the political role of the Khanates of the Eastern Transcaucasia is highlighted that appeared in the field of political-military and trade-economic interests of the Iranian Empire, the Ottoman and the Russian Empires. This implied the formation of the specific political relations between khanates of the Eastern Transcaucasia and the above-mentioned states whose research helps to emphasize many issues of strategic and constructive significance formed in the political processes.

Based on the analysis of the source materials, the policy of the Iranian Empire, Russian and Ottoman Empires toward the Eastern Transcaucasia in the second half of the 18th century is revealed. Thus, Iran could not put up with the loss of the region that the country historically owned, as well as with the fact of the reinforcement of the opposing powers' (Russian and Ottoman empires) impact in the region. Though Kerim Khan Zend sought to reaffirm the Iran's "historic rights" over Transcaucasia, he actually recognized the autonomous rule of the local rulers for having insufficient military-political and diplomatic potential. The Ottoman Empire was also unable to solve the Transcaucasian issue solely and taking into consideration the potential cooperation between Russia and Iran (through the example of 1720-1730) aimed to gain the affection of Transcaucasian khans and rulers. Russia implemented the Transcaucasian policy through the long-term solutions and mechanisms regulated relationships with the rulers of the Ottoman Empire, Iran and Transcaucasia. So, in the 1750-1770s, taking into account the Iranian-Turkish political factor in the Transcaucasia and Daghestan, the Russian diplomacy refused the military intervention in the region for a while. During those decades the Russian policy toward

the khanates was characterized by diplomatic interference which became a concept; a mechanism for making counterbalances in later years. In 1780s after solving the Transdnisterian, particularly the Crimean problem successfully, the Russian Empire skillfully applied to the principle of political equilibrium toward the most powerful rulers of the Transcaucasia: the Georgian Heraclius King and the Ghubaiyan Fath Ali Khan, thus protecting the Transcaucasia from the emergence of unipolar power.

Unlike the first half of the 18th century, when the Russian-Turkish-Iranian relations were regulated by a number of agreements, Iran, Russian and Ottoman Empires adopted the policy of neutrality by excluding the military intervention in the region in the 1750-1780s. The lack of central government in Iran was in line with Russia's military and political interests. The situation would have enabled the peaceful integration of the Eastern Transcaucasia into the empire. Therefore, taking the advantage of the unstable state of Zend dynasty's power, after the Russo-Turkish War (1791-1793) the Russia was planning to integrate the Eastern Transcaucasia into the empire exclusively in a peaceful way by maintaining the Ottoman Empire's restricting policy. The establishment of solitary power of Agha Muhammad Khan in Iran in 1794 aimed at the reestablishment of the national borders that existed during the Safavid state. The examination of the official documents of that era proves that the Russian authorities showed political indifference to the invasion of Eastern Georgia carried out by the ruler of Iran in 1795, and used it as a motive for military intervention in the region and a pretext for getting the support and sympathy of the peoples of Transcaucasia. The Russian Empire used the Aga Mohammed Khan's invasion of East Georgia as a motive for launching the military intervention in the region. Both the invasion and the destruction of Tbilisi were a major blow to the Georgian statehood. The spread of the Russian domination from the Caucasian Ridge to the South put these khanates to the dilemma: to support Russia, to recognize the supreme power of Iran unconditionally or to fight for their sovereignty? The Khanates' concept of maneuvering lost its viability after 1795, thus returning the

Eastern Transcaucasia to the Iranian state system. On the other hand, because of the "The disaster of Tbilisi in 1795" the region had doubts about the usefulness of the Russian Empire's protection. Khans were to face the historic and political election. Was it worth suffering from the Qajar Danger¹ for the sake of Russian support? Khanates should be politically oriented toward the Russian, the Ottoman Empires or Iran. The examination of archival materials and literature lets us evaluate the Caspian Expeditions organized by V. Zubov's leadership in 1796 from a new perspective. Certainly, at that time the Russian Empire was not concerned about the fate of the Transcaucasian peoples tortured by Agha Mohammed Khan. Acting as a "liberator" and "rescuer" for the people, the Russian Empire pursued the goal of expanding the state's borders and using the South Caucasus for purely imperialist interests. That region had a serious military-political significance for Russia as it could serve as a barrier to make the southern borders of the country invulnerable, at the same time being a convenient and reliable base to the Caspian Sea basin, for moving to Iran's Caspian regions and Atropatene trying to achieve the ultimate goal of the tempting prospect of moving to the Persian Gulf and the Indian Ocean. In the opinion of the Russian authorities the threat elimination from the southern borders of the Russian Empire was related to the creation of the security zone on the west coast of the Caspian Sea in the face of the Muslim Buffer Powers under the leadership of Fath-Ali Khan's family members.

